

Հիմնադիր եւ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»  
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԻՍԱՆՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
**2003**  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան,  
Շահումյան 20/32, 3301:  
Հեռ.՝ (+374 285) 5 25 63  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:  
Տպագրվում է «Տիգրան Մեծ»  
իրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Ծավալը՝ 5 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 1781: Գինը՝ 100 դրամ



**Աղմուկն աշխարհի՝  
բո լոռայունն էր,  
Անճառ ցասումդ՝  
երկո՞ւնքե նրա...  
Ցա՛վդ անհունի  
իմասնությունն էր,  
Իսկ սառադանդ՝  
դարձա՞նք նրա...**

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ, 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2016Թ.  
№ 2 (378)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



## Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծը

ՊՆՅ ԻՅ Կ 1 ՇՍՅ ԿԻՅ Ն

**Ս**ի բանի տարի առաջ իմացա, որ Տիգրան Գրիգորյանը սյունիքյան գրական աշխարհի 1960-80-ական թվականների նշանավոր ներկայացուցիչ է։ Ժամանակակից Գրիգորյանի ստեղծագործությունները հարուստ են իսկ Գրիգորյանի ժամանակակից գիտելի վաղուց, նրա ստեղծագործություններն այն տարիներին միշտ էլ մեր հանրության ուշադրության կենտրոնում էին։ Ժամանակին նրա ստեղծագործությունները ներկայացնում էին «Ձանգեզուր» թերթում։ Եվ 2010-ին, երբ լույս տեսավ Գրիգորյանի «Ձանգեզուրյան լեզենդները»՝ Տիգրան Գրիգորյանի մշակումներով (Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն), անկեղծ ուրախություն ապրեցինք։ Գրքում բանաստեղծական խոսքով ներկայացված էր մեր լեռնաշխարհում շատ հայտնի չորս լեզենդ՝ «Աթնածոր», «Սեւ լիճ», «Հարսնածոր», «Դավիթ Բեկ եւ Մելիք Ֆրանգյուլ»։ Ըստ էության դա Գրիգորյանի տարածաշրջանի վաղնջական ժամանակներից մեզ հասած լեզենդների փոքրիկ ժողովածու էր, նախատիպը չունեցող։ Լեզենդները ներկայացված էին թե՛ գեղարվեստական, թե՛ ոճական ինքնատիպ համ ու հոտով, ինչը չէին կարող չհնչեցնել Գրիգորյանի ստեղծագործություններին բաջածանոթ ընթերցողները։ Վերստին խոնարհվելով լուսահոգի Գրիգորյանի հիշատակի առջեւ՝ չենք կարող չասել, որ լեզենդները նման մակարդակի էին հասցվել Տիգրան Գրիգորյանի մշակումների շնորհիվ։ Նրա կատարածը, կարծում ենք, այնուամենայնիվ, միանշանակ դուրս է «մշակել» եզրույթի ավանդական շրջանակներից։ Եվ առանց վերապահումի կարող ենք փաստել, որ Տիգրան Գրիգորյանի միջամտությունների շնորհիվ էին լեզենդների գեղարվեստականությունն ու էպիկական հնչեղությունը միանգամայն նոր որակի հասցվել։ Ինքն ավելի ստույգ էր իրանցրել լեզենդների «մշակման» անատոմիան՝ «...Ստիպված էի առավել հիմնավոր միջամտություններ անելու իրավունք վերապահել ինձ եւ տարաբնույթ փոփոխություններ իրականացնել. որոշակի տողեր շտկել եմ՝ հուզականության ու սանլիքին ոչնչով չօգնող բառերը փոխարինելով նորերով, խճճվածություններ պարունակող որոշ տներ հստակեցրել եմ՝ բանաստեղծական պարզ հնչեղություն հաղորդելով դրանց, ...որոշ պատկերներ փոխել եմ՝ ելնելով սովորական պատմության հոգեբանական ընթացքի տրամաբանությունից։ «Հարսնածոր»

ՆԱՐԵՍԱԾՈՒՅՑ  
ՆԱՄԱՐԻՆ

**ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ.  
«Պոեզիայի աշխարհում ինչպիսի  
գաղափարական տեղաշարժեր ու  
հոսանքներ էլ հայտնվելու լինեն,  
բանաստեղծության ակունքը միշտ էլ  
մարդկային սիրտն է մնալու»**

Գրականության զարգացման ընթացքի, բանաստեղծի կայացման եւ գրական ժառանգություն թողնելու մասին է գրույցը բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի հետ։



Անցած ուրիշ



**Տ**իգրան Գրիգորյանը ծնվել է 1955 թվականի դեկտեմբերի 27-ին, Երեւան քաղաքում: Հետագայում ծնողները տեղափոխվել են Գորիս, որտեղ նա 1962-63 ուստարում ընդունվել է 1971-72 ուստարում ավարտել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1972 թվականին ընդունվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի բաժինը եւ ավարտել 1976 թվականին՝ ստանալով միջնակարգ դպրոցի ուսուցչի որակավորում:

1974-76 թվականներին Տիգրան Գրիգորյանը համակուրսեցի ընկերոջ՝ Առնո Մկրտչյանի հետ ղեկավարել է Գորիսում գործող ընդհատակյա ազգային գաղտնի կազմակերպությունը, որը խորհրդային ռեժիմի պայմաններում աննախադեպ ազգային գործունեություն էր ծավալել: 1976թ. հոկտեմբերին կազմակերպությունը ՊԱԿ-ի կողմից բացահայտվել է: Նա Առնո Մկրտչյանի հետ ձերբակալվել է: Բարեբախտաբար որոշ ժամանակ անց երկուսն էլ ազատ են արձակվել:

Բարձրագույն կրթությամբ ձեռք բերած մասնագիտությամբ Տիգրան Գրիգորյանը աշխատել է շատ քիչ ժամանակահատված՝ 1976-77 ուստարում մի քանի ամիս դասավանդելով ֆիզիկա եւ մաթեմատիկա Վարդենիսի շրջանի Լճավան գյուղի միջնակարգ դպրոցում: Այնուհետեւ ստանալով օդերեւութաբանական կրթություն՝ մինչեւ 1988 թվականն աշխատել է Գորիսի օդանավակայանում, որպես ավագ օդերեւութաբան:

1988 թվականին Տիգրան Գրիգորյանը ղեկավարել է Դարաբաղյան շարժման փետրվարյան ցույցերն ու միտինգները Գորիսում եւ մեծ հիասթափությամբ հասարակական պասիվ կեցվածք ընդունել այն պահից սկսած, երբ այդ շարժման գլուխ է անցել ՀՀԸ-ն:

Խորհրդային Միության փլուզման վերջին տարիներին նա զբաղվել է գործարարությամբ:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՍԿՋՔՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**ԲԱՆԱՍՏԵՂԾ ՏԻԳՐԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԿՈՒՄ Է ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՆՈՒԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴՓՆԵԿԻՐ ՖՐԻՏՅՈՑ ՆԱՆՍԵՆԻ ՈՍԿՅԱ ՀՈՒՇԱՍԵՂԱԼՈՎ:**

*ՖԵԼԻՔՍ ԲԱՆՉԻՆՅԱՆ*  
Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի հիմնադիր նախագահ  
2015 թ. հոկտեմբերի 10, ք. Երեւան



Տիգրանը շախմատի դպրոցի հիմնադրաման օրից (2000թ.) առ այսօր նա զբաղեցնում է այդ դպրոցի տնօրենի պաշտոնը:

1975թ. սկսած Տիգրան Գրիգորյանը բազմաթիվ անգամ նվաճել է շախմատային խաղի Գորիսի չեմպիոնի կոչումը: 1975-78 թվականներին մասնակցել է Խորհրդային Հայաստանի հանրապետական շախմատային մրցաշարերին եւ այդ տարիներին լրացրել վարպետության թեկնածուի նորմա:

Գորիսի շախմատի դպրոցի հիմնադրաման օրից (2000թ.) առ այսօր նա զբաղեցնում է այդ դպրոցի տնօրենի պաշտոնը:

Ինստիտուտն ավարտելուց հետո գրական ստեղծագործական գործունեությունը եղել է Տիգրան Գրիգորյանի կյանքի ամենամոլորական զբաղմունքը. գրել է բանաստեղծություններ, պոեմներ, էսսեներ, հոդվածներ, հայերեն է թարգմանել ռուս բանաստեղծներ Սերգեյ Եսենինի եւ Նիկոլայ Ռուբցովի որոշ ստեղծագործություններ, մշակել է Գրիշա Մանուչարյանի «Չանգեզուրյան լեգենդներ» շարքը:

2007թ. լույս է տեսել «Հավիտենության ճանապարհին» վերնագրով Տիգրան Գրիգորյանի ստեղծագործությունների եւ թարգմանությունների ժողովածուն:

2010թ. առանձին գրքույկով հրատարակվել է նրա «Անմահության համանվագ» պոեմն իր ավարտուն եւ ամբողջական տեսքով: Նույն թվականին Տիգրան Գրիգորյանի հիմնավոր մշակումներով եւ առաջաբանով լույս է տեսել նաեւ Գրիշա Մանուչարյանի «Չանգեզուրյան լեգենդներ» գիրքը:

2015թ. լույս է տեսել Տիգրան Գրիգորյանի «Անմահության համանվագ» ժողովածուն, որտեղ ներկայացված են բանաստեղծություններ, պոեմներ, մշակումներ, թարգմանություններ, արձակ պատումներ ու հոդվածներ:

2015թ. հոկտեմբերի 10-ին Տիգրան Գրիգորյանը պարգևատրվել է նորվեգացի մեծ մարդասեր, խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալով:

2012թ. փետրվարից Տիգրան Գրիգորյանը Հայաստանի գրողների միության անդամ է:

Մասնակցած գրքերից



Համարի հովանավորներ



Մելիքսեթ Պողոսյան  
Գնդապետ, Գորիսի զինվորական կոմիսար



Սաղաթել Գալստյան  
Տեղի գյուղապետ



Արամ Գալստյան  
Գնդապետ, ՀՀ ոստիկանության ճակատային ոստիկանության ճակատային սպայական գումարտակի հրամանատար



**ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ**

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԽՈՍՔ՝ «ԱՆՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՆՎԱԳ» ՊՈԵՄԻ ՄԱՍԻՆ**

Ինչքան առաջանում է մարդու տարիքը, այնքան քաղցրանում է մանկությունը: Անցողիկ ու մնալուս դառնությունները գունավորվում են մանկության օրերի անհոգությամբ՝ պարզ, անկեղծ ու անմիջական աշխուժությամբ: Տխրության նոտաները լիցքավորվում են հեռվում մնացած հոգեպարար զվարթությամբ: Երազանքը դառնում է նյութեղեն: Այս եւ ման կարգի սրտամոտ տպավորություններ է թողնում Տիգրան Գրիգորյանի «Ամնահության համանվագ» հրաշալի պոեմը:

Պոեմն սկսվում է վերնագրից, որ ինքնին հայտնություն է, եւ բխում է ընդգրկված նյութի ներքին շեշտերից, ընդգծում տխրության գեղեցկությունն ու գեղեցկության տխրությունը: Այն խտացնում է պատկերավոր իրականության, բանաստեղծի մտահղացման եւ ասելիքի բնույթը ու, հատկապես, դրսևորման կերպը եւ հնարավորություն ստեղծում ամբողջովին բացելու իրողությունների կենսադաշտը: մոտ ու հեռու մարդկանց հարաբերությունները եւ նրանց ունեցած վերաբերմունքն աշխարհի նկատմամբ:

Բնապատկերներն այնքան կենդանի, այնքան գունագեղ են ու շնչեղ, որ ընթերցողն ակամայից անմիջական հարաբերումի մեջ է մտնում հեղինակի հետ, իրեն զգում համանվագի անդամ, հարազատանում այգուն եւ այգուն եղած մարդկանց, «խենթ» տղաների հետ «ասպատակում» վարունգի ածուները, տատի մեջ տեսնում իր տատին, դառնում նրա «եթիմներից» մեկը:

Բնության շքեղագույն տեսարանները մշտապես զուգորդվում են մարդկային գործոնով: Մարդ ու բնություն՝ միանման ու միաշունչ, իրար լրացնող ամբողջություն:

Տիգրանը վրձնում է գրչով գրչի հետագծից աստիճանաբար խմորվում, տեսանելի են դառնում մարդ-բնություն կապերի անտրոհելի միասնությունը եւ սոցիալական կյանքի համապատկերը:

Պոեմը հարուստ է բանաստեղծական բացառիկ գյուտերով: Բարբեր, սովորություններ, պարտադրված հանձնառություններ, կոշտ ու կոպիտ գործընթացներ ու համատարած գեղեցկություն, նկարեղեն պատկերներ եւ արեաբար հայրենի եզերք:

*Կին ու ջահել աղջիկ,  
իրենց հացը կապած,  
Դեպի հանդիմանների  
մեքենան են քայլում...  
Նուրբ փորկիկներն ուժգին  
գեպրկին փայլով գծված,  
Մի մանչուկ է, նանից պոկված,  
մորը կանչում...*

*Կամ  
Խոյ հոնդոնն է սուր  
արձագանքում գյուղում...  
Մեքենան է հսկողի ճանփան  
բռնում ձորից,  
Կողքին՝ խորհում մի հորթ  
թռկոտում է փեղում,  
Իսկ մի սիրուն ուլիկ մկկում է սահից...*

Բնության հեղինակային ընկալումներն ու դրսևորման կերպերը խորապես ինքնատիպ են, թարմ ու նորովի: Ծանոթ բնաշխարհը երեւում է նոր գույներով ու երանգների՝ հարափոփոխ

ընթացքի շարժանկարներով. «Ճնճողկնների անհոգ ասուլիսներով», «իր գլուխը ծառերի մեջ խցկել փորձող արեախար եղած ժայռով»...

Մարդուն մարդեղենացնող բնությունը բացում է իր թաքցրած գեղեցկությունները: Հովի թեւերին թրթուրն են բառերը, կապտամշուշ հագած լեռնապարի անտառներում «հագարան հավեր են երգում», «շառաչալի հեւքով ձորում վշշացող» գետի համանվագը համալրվում է «դեղձան հավի քաղցր ծորացող կլվրոցով»:

*Մարպանցի սարդը,  
սյուրից ակեկոմված,  
Յուլանքներով թալշյա սահանքներ է  
փախու...  
Նարո ախիբ՝ ախիբ սարի փեշից  
պոկված՝  
Կարծես ձորը մարած  
դեպի գյուղ է գալիս...*

Նկատենք, որ Տիգրանն այսօրվա հեռավորությունից է գրում իր՝ անցյալում մնացած պատանեկության մասին, հոգեպարար զգայություններով տարազավորում իր անխաբ տպավորությունները, նկարեղեն պատկերները, անչար, միամիտ ու անմեղ մեղքերն ու անզարդ զարմանքը, դառնություններով ու կարոտներով խմորված գյուղական կյանքը, աշխուժ առավոտներն ու հոգնած երեկոները, եւ այս ամենը՝ նյութին համահունչ լեզվառձական անտրոհելի հարազատությամբ:

Թվում է, թե հենց այդ միջավայրում, սարերից եկող հովերի փափուկ շփումների, այգու զվարթ լուծության, հոգաշատ եւ հոգատար տատի, հանպատրաստից քայակներ հեղեղող քեռու, քեռակնոջ զրնգուն «ծվլոցի» համանվագում է Տիգրանի մեջ գարբնել միտած բանաստեղծը: Գրում են «միրհած», որովհետեւ Տիգրանը խորապես բնական բանաստեղծ է: Նա ընկալում, զգում է բնության հարափոփոխ ընթացքի գեղեցկությունները, բացում իր սերնդի հոգուն միացող հույզերի եւ զգացմունքների մի ամբողջական աշխարհ՝ նկատելի ու աննկատելի հմայքներով:

Ասեմ, որ պոեմն ընթերցողն էլ է դառնում բանաստեղծ, մերձկալում կարոտներ ծարձակող պատկերներ, ներսուզվում մանկության օրերի տեսիլների մեջ, վերապրում իր ոգեղեն հիացումները, զարմանքն ու ապշանքը:

*Մոշտրանքով պարած  
սևալվներից մթին  
Մոշտահավն է հրաճք ծղորոցով ճչում...  
Մի սիրունիկ թռչնակ  
սալորենու թփին՝*

*Մայրամուտից առաջ իր շվին է փչում...  
Պոեմն իր ամբողջությամբ հոգու երգ է, ինչպես բանաստեղծի, այնպես էլ պատանեկությունը հեռվում թողած մի ողջ սերնդի: Տիգրանը վերապրում է ապրված կյանքը՝ բնության ու մարդու համադաշնության ծալքերից բարձրացող հոգեպարար մեղեդայնությամբ:*

Համոզված են, որ յուրաքանչյուր ընթերցող լիաթք ինքնաբերությամբ է փակում պոեմի վերջին էջը՝ շնորհակալության անկեղծ զգացումով:

Գուցե իմ այս խոսքն ընթերցողը մտածի՝ ինչո՞ւ գրախոսը չի նկատում որեւէ թերություն:

Ասեմ, որ այս պոեմը՝ գրախոսի եւ իր մանկության ընկերների, կիսատպառ սերերի, Որոտանի երկու ափերին փռված այգիների հանդուզն եւ տագնապահար ասպատակումների, իր գյուղի առավոտների ու երեկոների երգն է նաեւ՝ ինքնաբերուի ու վարակիչ:

Այդ համատարած գեղեցկության մեջ թերություն նկատելը, մեղմ ասած, հավկուրություն է, իսկ ավելի ստույգ՝ մեծամտության սինդրոմով ախտահարված, ինչպես Օշականը կասեր, «Բանաստեղծից մեծ երեւալու սնափառություն»:

Շնորհակալություն, Տիգրան-պարզեւած վայելքի համար:

**ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ**

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**«ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԱՊԱՐԻՆ» ԳՐԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ**

Հազվադեպ են հանդիպում առաջին գրքեր, որոնք ոչ թե ուրվագծում, այլ ուղղակի հաստատում են գրողի ինքնատիպ անհատականությունը:

Այդ հազվադեպ առաջին գրքերից է Տիգրանի բանաստեղծությունների ժողովածուն:

Գիրքն ընթերցելիս, ակամայից ունկերիդ մեջ աստիճանաբար ծավալվում է մաքուր, անաղմուկ, ժողովածուի բաժինները կամարող մի զիլ ու զրնգուն ծայներգություն:

Նա անընդհատ խոսում, գրում է ինքն իր հետ, լսելի դարձնում իր ասելիքի բաղադրությունը, հույզերն ու զգացումները տարազավորում խորապես ինքնատիպ պատկերներով:

Ես չեմ մտնում նրա ստեղծագործական աշխարհի մեջ:

Ես պարզապես գրում եմ այդ աշխարհի մասին, այլապես մեր խոսքը շատ պիտի երկարի:

Նրա յուրաքանչյուր գործ ապրված տառապանք է՝ բյուրեղացած իբրեւ բանաստեղծական գեղեցկություն:

Գրքի մթնոլորտում տիրապետող անխարդախ, ուղղակի տեսանելի անմիջականությունն է, ընդզգումի կիրքը, առաքինության ու մարդկային արժանապատվության առնական տոնայնությունը: Ակներեւ է, որ հեղինակը անցել է պոեզիայի դարավոր փորձի միջով՝ այդ ճանապարհին խմորելով պոետական հավատամքը. զգացվում է բառի, պատկերի նկատմամբ երկուդած վերաբերմունքը. ատում է խոսքի մուրացվածներին:

Գրքում կա եւ թարգմանությունների բաժին:

Այն փաստը, որ Տիգրան Գրիգորյանը, քաջածանոթ լինելով Եսենիյան հանրահայտ թարգմանություններին, ձեռք է մեկնել այդ գործին, բնութագրում է նրա բանաստեղծական խառնվածքը:

Հավատում են, որ այս գիրքը հաճելի անակնկալ կլինի մեր օրերի ընթերցողի համար եւ արդի երաշտահար բանաստեղծական դաշտում կընկալվի իբրեւ թարմ եւ ինքնատիպ խոսք:



**ՌՈՒԲԵՐՏ ԷԶԱՆՆՅԻ**

**ԲԱՆԱՍՏԵՂԾ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ Ի ԳՈՐԻՍ**

**Ա՛յր քանքարափայլ,**

Աժդանական-Կապուտջուղի բարձունքից գրկեցի Քո լույսով ողողված Սյունիքը, Քեզ գրկեցի... Սիրում, կարոտում, տենչում եմ Քո տաղանդին, զորանում եմ Քեզձով:

Հատորը ստացել եմ՝ մեծագույն հարստությունը գյուղական ուսուցչիս հոգեւոր կենցաղում:

...Քեզձով բոլոր ընթերցողներդ ԱՆՄԱ-ՅՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՆՎԱԳ եմ...

Դու նորովի ու անկրկնելի ես բացահայտում գյուղաբնակից, սյունեցուն, մարդուն: Տիգրան, Քո՛ պոետիդ սիրահարվածության մեջ վաղմջական, նորոյա եւ ապառնական ժամանակի ամեն չպեղված սյունեցին է...



**ՖԵԼԻՔՍ ԲԱՆԶԻՆՅԱՆ**

Արծակագիր, գրականագետ

**ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

*Ինձ հասուցել է չորսին, Էլ ուր մնաց շատուցել...*

**Համո Սահյան**

*...Բն էլ որ լինի՝  
Չիվանդանալ իմ դարի ախարով,  
Նույնիսկ՝ մահանալ,  
Բայց քաղաքակիրթ խաբկանք  
չդառնալ:*

**«Ապխտածություն»**

Այսպես, քաղաքակիրթ խաբկանքների, ասել է թե՛ կեղծ, անբնականն ու ճշմարտամերժ քաղաքակիրթության քողով ծածկելու սարսափազդու, ապխտած ախտի հետ պայքարն սկսված է, եւ մարտադաշտը Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհն է՝ «Ամնահության համանվագ» վերնագրով:

«Ես չեմ մտնում նրա ստեղծագործական աշխարհի մեջ, - գրում է Տիգրան Գրիգորյանի «Հավիտենության ճանապարհին» առաջին ժողովածուի առաջաբանի հեղինակ Կիմ Աղաբեկյանը, - ես պարզապես գրում եմ այդ աշխարհի մասին, - շարունակում է նա՝ վկայելով, որ «նրա յուրաքանչյուր գործ ապրված տառապանք է՝ բյուրեղացած իբրեւ բանաստեղծական գեղեցկություն»: Իհարկե, չեմ ասի, թե գրականագետը խուսափել է մտնել նույն այդ տառապանքի ծովը, ուր կյանքի ամենի, երբեմն՝ կրթուն ալիքների հետ իր պայքարն է մղում բանաստեղծը: Պարզապես այդ ծովն այնքան խորն է, որ տեղ մտնողը պետք է զինվի կամքի ու համբերատարությամբ, ընդզգումի ու պայքարի նույն ոգով՝ քաջ գիտակցելով, որ Տիգրանի գրքում ներկայացված ստեղծագործությունները շատ ընդգրկուն ասելիք ունեն եւ արժանի են շատ մեծ ու լուրջ ուշադրության, քան մուտքի ու ողջ երթի խոսքը կարող է լինել, քան տողերիս հեղինակի զգացմունքային կամավորություններն ու նրանցից ծնված կամ վերածնված սերն առ պոետ ու պոետականություն:

Տիգրան Գրիգորյանի պոետական առիճնությամբ օժտված խոսքերը հմայուն են առաջին իսկ հայացքից: «Արդարության ծայրն, անկասկած, խենթությունն է...» («Ցավալի իրողություն»), - գրում է նա՝ համոզված լինելով, որ արդարության ծայրը հնչեցնող խենթերին քարկոծում են...

Բանաստեղծը, այնուամենայնիվ, բացում է «ախտագերծության» իր նորագույն էջը՝ դառնալով «խավարահաված լույսի» մեր ժամանակների պաշտպանը:

Սերունդների հերթափոխի մեջ վաղուց տեսանելի եւ համբուրելի սեւակյան ավելի շատ ոչ թե բանաստեղծական, այլ մարդաբանական վերլուծություններով առաջանալու ուղեւորներն են տաճում դեպի Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը, ուր թեզ այստեղ ուղեկցում են տողատակում հնչող եսենիյան կիթառալար ավելածունները սեփական բախտախաղի մասին, բայց եւ որտեղ անընդհատ զգում ես այդ խաղում տաճուլ տվածի հետ չհաշտվող հեղինակի ըմբոստ ոգու ներկայությունը: Իսկ տաճուլ տվածի հետ չհամակերպվելու միակ պատճառն այն է, որ խաղի կանոններն են անարդար... Խաղի կանոնների անարդար դրսևո-



Գնահատանք

Եջ 3 ըրումները բացահայտող սեւա-կյան փորձերի մարդկային նույն բարոյական ըմբռնությամբ էր քայլել ու ելել Տիգրան Գրիգորյանը: Նա, ում լսելի էին Սեւակի «Հանցեցեք ձեր դիմակները», «...Լույս, լույս զվարթ» հոգեկան-չերը: Տաղանդաշատ Սեւակը, այնուամենայնիվ, այնքան միամիտ չէր, որ չտեսներ տառապանքի հնարավոր այն գոյությունը նրանց համար, ովքեր ոչ միայն «դիմակաթափ են», այլև, ընդհանրապես, զզվել են դիմակներից եւ չեն էլ փորձել կրել այն՝

Նակասակ կյանքի  
Պարսպարարական  
կարգապահության  
Սողոսկուն փառքի՛...  
Եվ ընդդեմ՝ բոլոր՝  
Նորարարական թաքստոցներից  
Ճանաչողների  
Նաշվելիչովս՝  
Կուսի վաճառքի՛:

«Խոստովանություն» (Տ.Գ.)

Տառապանքն իսկապես կարող է առավել մեծ լինել նրա համար, ում խոստովանության շարունակությունն այսպիսին է.

Նոգնած եւ բազում,  
Գոռոզաբարո,  
Երեխայական դերերից իմ ջիւնջ՝  
Մի մարտիրոսի,  
Դիմակաթափված,  
Նորիզունահար հայացքով՝ վճիռ՝  
Ես հանձն եմ առնում,  
Որ անանձնական ճակարագրիս  
Ողորմած ձեռքին  
Եղել եմ միայն  
Գողարկի հույզերից  
Միտով շաղախված  
Մի պահ՝ իմ խաղաղիք:

Բայց եւ նման սիրով, լույսով, հույզով լի շաղախից հուճկված մեկի համար, իսկապես, չէր կարող ճանաչելի չլինել՝

Անդա՛նձ որբացած  
Երազանքները ինչպարներին...

Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական ոգին ընդվզում ու ծառս է լինում: Նա հեշտ ու հանգիստ հանձնվողներից չէ, ուստի կարողանում է հստակորեն հայտարարել՝

...Որ անապական  
Կողմնացույցի պես՝  
Դարձյա՛յ աշխարհի  
Բոլոր՝ կողմերն էլ  
Ճիշտ եմ ցույց տալիս:

Ճշմարիտ բանաստեղծների կոչման, նրանց անցնելիք ստեղծագործական դժվարին ճանապարհի, նրանց առաքելության մասին Պարոյր Սեւակը մի կարճ, բայց շատ տարողունակ խոսք ունի: «Գրել, նշանակում է կռվել չարի դեմ», - ասում է նա:

Սեւակն այսօր էլ չի դադարում ասել այդ մասին, որովհետեւ կյանքն իսկապես շարունակում է «ախտագրեթման» կարիք ունենալ, եւ ախտագրեթման շարքերում մեծ է բանաստեղծների առաքելությունը: Խոսքը ճշմարտության դեմքը ծածկող քողը ետ տանող բանաստեղծների մասին է, ովքեր չեն երկնչում եւ չեն ծնկում կեղծիքի ու անարդարության առաջ:

Կյանքն ախտագրեթմող բանաստեղծների բանակ էր ուզում տեսնել նաեւ հայոց բանաստեղծության մի ուրիշ գագաթ ու մեծություն՝ Եղիշե Չարենցը, սակայն հանդիպել էր այլ որակներ ունեցող բանակի.

Երգում է, տեն, գիշեր ու գօր,  
Պոեզիաների մի տղ թանկ...  
...Շար է ճնչին մեր սարագան,  
Թե որ դրանց երգին նայես...

Տիգրան Գրիգորյանը դեպի Պառնաս ձգտող այդ բանաստեղծների շարքում չէ: Նա կյանքի հորձանքում ժայռի պես ամուր կանգնած այն անհատականությունն է, ով, բաց ճակատով նայելով հավիտենություն տանող ճանապարհին, խոստովանում է՝ «Պոետները թմրադեղերն են եղել իմ»: Նրա խոսքն, իհարկե, «Պառնասում ծնկած այծերի» մասին չէ, այլ ճշմարիտ ու հոգեհարազատ այն պոետների, ովքեր սեփական հոգու բանաստեղծական կանչը համարողային իմաստուն խոհերի միջով

դեպի իսկական պոեզիային հատուկ հոգի գերեզմարող կատարելության կախարհանքն են տանում: Հենց հոգու այդ կանչով է, ինչպես խոստովանում է բանաստեղծը, «Անմահության համանվագ» ժողովածուի իր թարգմանությունների բաժինը ներկայացնելիս, նա «վերապրելով վերածնվել» եսենիցյան պոեզիայի խորքերում:

Չկարողանալով զսպել իր ըմբռնությունները կյանքի պարտադրած խորհուրդի ճանապարհներին եւ ուղիղ նայելով մարդու մեջ նստած գազանի աչքերին՝ բանաստեղծը ջանում է գոնե ինքն իր համար հասկանալի դարձնել կյանք կոչվող եռուզեռի պատճառահետեւանքային կապերը: Այս անգամ, սակայն, երբեմն զուլիս է բարձրացնում տարակուսանքը.

Ախր, չէ՛ որ  
Այս ճանաչան լուրջան մեջ  
Ոչ ոք էլ իր անուշ թևից  
Անենեկին էլ  
Դժգոհ չէ  
Մի՞թե միայն  
Ինձ պես ժյար հաճախորդի՞  
Արդարության գոյությունն է  
Ավելորդը...

«Տարակուսանք»

Արդարությունն, այո՛, ժլատ հաճախորդ է, սակայն տարակուսանքից ծնված ինքնամերժումի խոսքն այստեղ ոչ թե նվճվոց, այլ ուժերը հավաքելով ոտքի վրա մնալու ջանքի ու եռանդի արգասիք է:

Ինչչեւ: Պոետականությունը Տիգրան Գրիգորյանի կյանքի ընթացքն է եղել դեռ շատ վաղուց: Հիվանդ լինելով պոետականության թմրադեղի պես ձգող հիվանդությանը, մանչուկի պես հափշտակված՝

...Յանկագել է նրանց երկնած

Մարտամարտի ձիգ կարպարին

Նասենեկ... կյանքում:

«Անտերության գահին»

Տարակուսանքների ու ինքնամերժումի տատակոտ ճանապարհով է ընթացել բանաստեղծը, որը ոչ թե տարել է նրան դեպի միակողմանի խոր անդունդները կամ մադձոտ թույներով ինքնախաթմունքները, այլ այնտեղ, ուր ականջի տակ շշմեցող Նիկոլայ Ռուբցովի հոգեհարազատ ծայրն է.

Վաղուց է հոգնել, թափառել անհույս  
Նեռավոր սիրով սպրոդ իմ հոգին,  
Շար վաղուց էր պեղքը հասկանալ,  
որ ես

Շար եմ հավաքում սուր  
պարբանքներին:

Բայց միեւնույն է՝ դու փորձիր հիմա  
Վերջ տալ րիստուկայն իմ  
տեսիլքներին,

Ջութակներն, սաւեւ, լալիս եւ միայն  
Դալով լճասիի ու սիրտ մասին:

թարգմ.՝ Տ. Գրիգորյանի

Այսպիսի անեղծ ապրումների ակունքներից է իր ուժը, լույսն ու ջերմությունն առնում Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը: Այստեղ են նրա անսեթեւեթ հուզաշխարհի արմատները, որոնց շնորհիվ էլ նա կարողանում է հայտարարել.

Միևն ողնուծումն իմ ես  
բանաստեղծ եմ...

Վաղուց եմ թթել Պառնասում  
ձնկած այծերի վրա...

«Անարժեքության հեղձուկի մեջ»

Ճշմարիտ բանաստեղծները կյանքի փառատենջ «պարարտական կարգապահության» ճանիճը ճեղքող եւ վեր խոյացող անհատներ են, որոնց խոյացումների տակ, իսկապես, ծփում է լուսավոր մաքրությունը: Եվ եթե փորձես կռանալ ու փոփոխել տանել լեռնային վտակների երեսին ջրի հետ ճանաչող խառնված չոր խոտուտերեւի մնացորդները՝ որպես պարտադրյալ տառապանքի ծայրեր, ապա կարող ես խմել զուլվված, լուսավոր վտակից՝ ըմբռնվելով նրա մաքրությունը: Հենց սա է Տիգրան Գրիգորյանի պոեզիան բնորոշողը, եւ հենց սա է նրան Նիկոլայ Ռուբցովի պոեզիայի հետ հոգեհարազատորեն կապողը.

... Կարծես ժամանակն այստեղ  
գործ չունի,  
Թող կողքիս ոչ մի բանից չխուսեն,

Եթե հնչում է թախծոտ մեղեդի...

թարգմ.՝ Տ. Գրիգորյանի

ժամանակի պարտադրած ախտերն ու աղտեղությունները, պայքարի հոգնություններն ի չիք են դառնում, երբ ջութակները երգում են մորեմերկ մաքրության մասին:

...Եվ այսպես շարունակ, մինչեւ ընդվզումի եւ ինքնամերժումի, լիարժեքության եւ անլիարժեքության պայքարի դաշտում մղած կռիվների արդյունքում կրկին վեր բարձրացող հաղթանակի դրոշ, որի վրա գրված է՝

Ես ընդամենը

Նավթենություն կանակարարն եմ:

«Բանաստեղծություն»

Իսկապես, նա կարող է լինել հավիտենության զինվորագրյալ, ով ընդունելով ճակատագրով իր դատապարտվածությունը՝ որպես «Գողտրիկ հույզերից սիրով շաղախված մի պարզ խաղալիք», այնուամենայնիվ, անկտրում համարձակությամբ եւ ինքնավստահորեն հայտարարում է իր դիրքորոշումը՝ կողմնացույցի պես աշխարհի բոլոր կողմերը ճիշտ ցույց տալու մասին: Դիրքերը չլքելու մարդկային վճռականությունն է սա, որ ավելի վեր է, քան եսասիրությունն ու սնափառությունը, որոնց մասին այստեղ խոսք անգամ լինել չի կարող:

Կյանքի դրամատիկ իրավիճակներում, մարդաբանության մեջ մարդու եության մերդաշնակությունը պահող եզրերի փնտրտուքով զբաղված, Տիգրան Գրիգորյանը բանաստեղծության հոգեկանչին ունկնդիր՝ ճշմարտությունը ցույց տվող կողմնացույց է դառնում, երազում, սիրում, հավատում, արտասվում, ապա թքում ինքն իր արցունքի վրա՝ պոետական անխառն հիվանդությանը տառապելով՝ դատապարտված լինելով սիզիփոսյան գոյության:

Արդարության ծայրի հետ ճամփա գնացողների տառապանքը, հիրավի, սիզիփոսյան աշխատանք է, որովհետեւ նույն ծայրի հետ ցած ես գլորվում հենց այն պահին, երբ թվում է, թե հասել ես նպատակակետ բարձունքին:

Սիզիփոսյան այդ վերուվարերի մեջ Տիգրան Գրիգորյանը եկել է այն հանդուժմին, որ

Արդարության ձայնն, անկասկած,  
Խենթությունն է...

Դժբախտաբար,  
Ոչ միշտ է նա կարողանում  
Նասկանալի լեզվով խոսել:

«Ցավալի իրողություն»

Իսկապես, ցավալի է իրողությունը: Ցավալի է այն, որ արդարությունը հավատամք դարձրած խենթերին քամահրում են, արհամարհում...

Իբրեւ մերկ ճշմարտության նվազաբանի վրա ձգված լար, եւ կամ երգասացը՝ նույն ճշմարտության: Ահա թե որն է Տիգրան Գրիգորյանի պոետական պահվածքը: Կիթառահարի կրքոտությամբ է նա խփում հոգու նվազարանին, եւ հատիկ-հատիկ հնչում են երգերն այն մասին, թե ետմահու երջանկության տարածքը Հայրենիք է կոչվում («Ավետիս»), թե բարության առաքյալը լինելու պահանջը հավատի հրի մեջ տապակվել է նշանակում («Համբարձվելու զգացողություն») եւ այլն, եւ այլն... Կիթառալար հնչյունների միջից ապա վեր է բարձրանում բանաստեղծի «Հանապազօրյա աղերսը».

Յերեկը՝ լույս լինի,  
Երեկուն՝ հույս լինի,  
Գիշերը՝ կանչ...

Քեզ սկսեց ղեկը լինի,  
Ապրդարդը... ու հող լինի,  
Բի՛լ սնդուսնը...

Նոգիդ՝ սեթեն լինի,  
Նավարդ՝ շեն լինի,  
Կյանքը՝ հորձանք:

Խաղաղ գոյության փնտրտուքներն առավել դրամատիկ են դարձնում կյանքային իրավիճակները: Դրամա, որովհետեւ խախտված են բնությունից մարդուն

տրված ներդաշնակությունն ու մարդկային բարոյականության բոլոր կանոնները: «ժամանակները ծյուրված են տմկած սովորությունների ճանձրությունով» եւ՝

Անեն ինքնաբերի,  
Նուզատար, վեհ բայ՝  
Սուր սաստիկության ցուցարարություն...

«Ես իմ ողջ կյանքում...»

Իրավիճակը դրամատիկ դարձնող «չփնտրվական մաքսագներ» կան, որոնցից անտեղյակ նորարարն ու իր մտքի թռիչքի ետեւից գնացող ածպարարի է նմանվում: Սա խոսում է նույն բանի մասին, ինչ Դանթե Ալիգիերին՝ իր «Աստվածային կատակերգությունում», երբ ասում է՝

Երկրային կյանքս կիսով չափ անցած՝  
Ես հայտնվեցի մի մութ անպատում...

Երկրային կյանքի մութ անտառների մեջ եղած-չեղածը որոշակիացնելով, ներդաշնակության խախտված կողմերը լույսի տակ բերելով՝ Տիգրան Գրիգորյանը իր այն մտահոգությունն է առաջ քաշում, թե՛ համարձակ շատ ու չլինի, եւ մեքը՝ ուշացած:

«Ճահճատենդ» բանաստեղծության ընթերցումը իրավունք է տալիս ինձ հայտարարել, որ Տիգրան Գրիգորյանը շատ հանգիստ կարող է փոխել Դանթեի արտահայտության ընդամենը մեկ բառը՝ դրանով իսկ ոչ թե կրկնելով նրան, այլ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ իր բարձրացած հարցը համաշխարհային ճիշտ են ճիշտ նույն նշանակությունն ունի, ինչ Դանթեի խոհերն են՝ մարդու եւ հավիտենության մեջ նրա ունեցած տեղի մասին:

Երկրային կյանքս կիսով չափ անցած՝  
Ես հայտնվեցի ճահճատենդում...

Հենց այդպես կարող է ասել Տիգրան Գրիգորյանն իր բանաստեղծությունը սկսելուց առաջ՝ ավելի պարզորոշ դարձնելով այն, որ նրա «Ես»-ը ընդհանուրի իմաստն ունի եւ վերաբերվում է մեզ՝ բոլորի: Մեքը բոլորս հիվանդ ենք այս նույն տենդով.

Կյանքը՝ կեղծիքի մի կո՛տ սովորույթ:  
Արդարությունը շար ու չ գալիս:  
Ճշմարտությունը՝ հորս՝ ախտաբանը՝  
Նոգեհացին եւ բո՛ւր-բուր շաղ տալիս...

Մենք բոլորս հիվանդ ենք այս տենդով, սակայն Տիգրան Գրիգորյանն է, որ անհաշտ է մեզ պատուհասածի հետ.

Տե՛ռո՛ ինձանկից: Այս ի՛նչ սպրոտը Է...  
Մի՛ թե անյունս հողին եւ տալիս...  
Կանձ առ, սարսուս:  
Նոգին ինձ հեթ Է...

Աստիճակ էլ անհուն թախծից են լալիս:

Բանաստեղծական նման պատկերների, փոխադրությունների վարպետորեն արված մեքերումները վկայում են Տիգրան Գրիգորյանի կողմից կյանքն իր բոլոր կողմերով ընկալելու եւ ընկալածը բարձրաձայնելու մասին՝ ի շահ արդարության, ճշմարտության, ազատության ու ներդաշնակ խաղաղության հարատևության:

Բանաստեղծի իր կոչման, պոետների շարքում իր ունեցած առաքելության եւ նույն այդ առաքելության դժվարացնելի ճանապարհի մասին առավել քան անմիջական ու տիպական պատկերներով է ներկայացրել հենց ինքը՝ Տիգրան Գրիգորյանը.

Ես պոետ չեմ:  
Ես ներդաշնակ մասն եմ կյանքի:  
Կամ որ կոչվեն Է,  
Եթե ասել՝  
Թե արքան եմ պոետների:

«Անտերության գահին»

Ճշմարիտ պոետներն իսկապես իրենց միջով են անցկացնում կյանքի, մահվան ու անմահության գոյածեղերը, որպես մարդ անհատի անհրաժեշտ եռամիասնություն պարտադիր պայման: Տիգրան Գրիգորյանի դեպքում՝ կյանքի հրով անցած են «Ես ներդաշնակ մասն եմ կյանքի» խոսքերը, ուստի եռամիասնության մեջ գործող ներդաշնակության համաձայն՝ մահվանից հետո սկսվում է անմահությունը: Արքա պոետներին հասու ճանապարհ է սա, որի գահը ոչ թե գրասենյակներում կամ դահլիճներում է, այլ՝ «Երկնավորի» մոտ...

Կյանքի վեր ու վարի, աջ ու ձախի ճիշտ կենտրոնում կանգնած ժամապահի նման պոետական հոգին արելերես հանած Տիգրան Գրիգորյանն ասես խեղդվում է նույն ճանապարհորդներում կուտակված հեղձուկի մեջ:

Սեփական ես-ի հետ անհաշտ բանաստեղծի հոգու տվայտանքները հեղձուկի ծովից ափ դուրս գալու համար ելքեր են փնտրում, սակայն, իզուր ու իզուր...

*Այս կյանքում ինձնից պրծնել չկա...  
Ինքս էլ, ախա՛ր, չեմ կարողանում  
լքել ոչ մեկին...*

*Մի երևելի հիմա՛ր եմ անկամ,  
Որ չփորձեցի երբեք կյանքում  
փոխել իմ հոգին:*

**«Անարժեքության հեղձուկի մեջ»**

Փոխել հոգին, կնշանակեր՝ կուլ տալ քաղաքակրթության սփռած անբնական ու ճշմարտամերժ խայծը...

Եվ անգոր լինելով փոխել իրեն՝ իր անդավաճան խառնվածքի ձեռքին կրակն ընկած բանաստեղծը մարդկային իր եռությունից հրաժարվելու խելառ կատաղությանը ձեռնոց է նետում իր նվիրական զգացմունքների՝ պատրաստ՝ քթելու իր գորովալի ապրումների տառապանքի ծնված արցունքի վրա. ճիշտ այնպես, ինչպես հեռավոր երկրում իրեն հոգեհարազատ մի այլ պոետ էր ձեռնափայտը շարտելով հայելում հայտնված իր իսկ պատկերի վրա՝ զիջերաժամի տվայտանքներից ազատվել փորձում, երբ «Սեւ մարդու» տեսքով նրան «այցելած» ներքին ես-ը, բանաստեղծի՝ «Բարեկամ, բարեկամ, ես հիվանդ եմ անչափ...» հոգնած աղերսին ունկ չղնելով՝ շարունակում էր նրա գլխին կյանքն առաջվա սիրով ընդունելու եւ ուժեղ մնալու իր քարոզը կարդալ.

*«...Առոյս ցրտաշունչ  
Տոգուերում սրտմարտ  
Կորստյան ցավերի  
Տիրության մեջ՝ անհուն,  
Տասարակն եւ ուրախ երեսակն,  
անկասկած,  
Ամենակարարյալ՝ մեծ  
սպվեւորն է կյանքում»:*

**«Սեւ մարդը», Ս. Եսենին, թարգմ.՝ Տ. Գ.** Պոետական նույն հիվանդության մեջ է տառապում Տիգրան Գրիգորյանը, ով ամեն անգամ, երբ «գոյության խաղաղ մի ձեւ գտնելու» ընթացքն է բռնում, նրա տեսիլը «...ժայթքման պատրաստ ընդերքն է եռում»՝ ավարտվելով «Արժանապատվությունը փորձանք է» եզրակացությամբ... Կռիվ են տալիս մարդկայինն ու անմարդկայինը, կատարյալն ու կեղծը, լույսն ու ստվերը... Կյանք կոչված անվերջ հակամարտությունների այդ հորձանուտում, միեւնույն է, իր նախնական անմեղությանը ու մնայուն մաքրության մեջ շարունակում է հնչել Տիգրան Գրիգորյան բանաստեղծի ոգեղեն հուզաշխարհի «Անմահության համանվազը»...

**Յ. Գ. 2015թ. Հայաստանի գրողների միության Նիկոլ Աղբալյանի անվան գրական մրցանակը շնորհվել է արձակագիր Եւ Գրականագետ Ֆելիքս Բախչինյանին:** «Այունյաց երկիր» թերթը շնորհավորում է Ֆելիքս Բախչինյանին:

**ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**

Գրող, հրապարակախոս

**ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «ԱՆՍԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ» ՄԱՏԵԱՆԸ**

318 էջերու վրայ տարածուող այս քերթածներու մատանը մեկամոյշ երգերու շարք մըն է: Կը կարծեք թէ սիրոյ խոստովանութիւններու հեկեկո՞ց կամ ճի՞ջ մը, ո՛չ, բարեկամներ, բողոքի ժայթք մըն է այս գիրքը, բանաստեղծութեան բեհեզին տակ, ճշմարտապատում հոսանք մը գետերու, որոնք իրենց ճամբուն վրայ ծառ ու ծաղիկ արմատահան չեն ըներ, այլ կը ջրեն հայ երգի դաշտերը՝ պատգամներ դրոշմելով ճամբու ընթացքին ժայերու վրայ: Քանդակներ են Տիգրան Գրիգորեանի այս



երգերը, որոնք կուգան պայքարատենչ հոգիէ մը, գրիչէ մը, որ թեւ երբեմն կարծր կը հնչեն, կապարի պես ծանր, բայց սկիզբ կ'առնեն քնքոյշ հոգիէ մը, որ սխալի մը դիմաց, չարիքի մը աւերին դիմաց գլխահակ կերպարանք ցոյց տուող չէ՛, այլ պատմէ մը բարձրացնողը, մեհենագիր մը քանդակողը նոյնիսկ իր սիրային երգերուն մէջ:

Հեղինակը իր գիրքը նուիրած է իր մօր՝ Ալմաստ Մանուչարեանին, որուն մէջ չար վերջաւորութիւնը բացակայ մըն է, ամբողջ գրգանք մը սակայն որպէս իսկական մայր:

Հատորին հովանաւորը Սիւնիքի մարգարէտ Սուրեն Խաչատրեանն է: Թող Սիւնիքէն օրինակ առնեն բոլոր շրջաններու մարգարէտները:

Սիւնիք եղափոխութիւն չի նշանակեր: Այլ՝ յեղափոխութիւն: Ողջ Հայաստանը նոյնը եղած է դարերով:

Այս հատորին մէջ պիտի գտնէք «Անմահութեան համանվազ» մը, բանաստեղծութիւններ, պոէմներ, արձակ պատմներ նաեւ... թարգմանութիւններ, որոնք մեզի կը յայտնեն, թէ ուրիշներ որպիսի՝ պատգամներ յղած են մեզի, մեր ունեցածին մերթ փայլք մը տալով:

Հատորը ունի երկու յառաջաբան: Առաջինը ստորագրողը արձակագիր ու գրականագետ Ֆելիքս Բախչինեանն է, որ կ'ըսէ. - «Տիգրան Գրիգորյանը դեպի Պառնաս ձգտող բանաստեղծների շարքում չէ: Նա կյանքի հորձանքում ժայռի պես ամուր կանգնած այն անհատականությունն է, ով, բաց ճակատով նայելով հավիտնություն տանող ճանապարհին, խոստովանում է՝ «Պոետները թմրադեղներ են եղել իմ»: Նրա խոսքն իհարկեւ «Պառնասում ծնկած այծերի» մասին չէ, այլ ճշմարիտ ու հոգեհարազատ այն պոետների, ովքեր սեփական հոգու բանաստեղծական կանչը համարողային իմաստուն խոհերի միջով դեպի իսկական պոետիային հատուկ հոգի գերեզմարող կատարելության կախարհանքն են տանում»:

Իսկ երկրորդը՝ բանասիրական գիտութիւններու դոկտոր, պրոֆեսոր Կիմ Աղաբեկեանն է, որ կըյարէ. - «Տիգրանը վրձնում է գրչով. գրչի հետագծից աստիճանաբար խնդրվում, տեսանելի են դառնում մարդ-բնություն կապերի անտրոհելի միասնությունը եւ սոցիալական կյանքի համապատկերը»: Անլցնելով.

- «Պոետը հարուստ է բանաստեղծական բացառիկ գյուտերով: Բարբեր, սովորություններ, պարտադրված հանձնառություններ, կոչու ու կոպիտ գործընթացներ ու համատարած գեղեցկություն, նկարեղեն պատկերներ եւ արեւաբոյր հայրենի եզերք»: Կ'ըսէ նաեւ, որ «Տիգրանը խորապես բնական բանաստեղծ է: Նա ընկալում, զգում է բնության հարափոփոխ ընթացքի գեղեցկությունները, բացում իր սերնդի հոգում մխաթող հույզերի եւ զգացմունքների մի ամբողջական աշխարհ՝ նկատելի ու աննկատելի հնայքներով»:

Այս կարծիքները կարդալէ ետք մենք սփիւռքէն եկած հայ մը որպէս թեւ յայտնեցինք մեր հիմնական կարծիքը, բայց շարունակեցք խօսիլ օրինակներով:

Նախ հաստատենք, որ այս հատորը բաղկացած է տասը բաժիններէ, որոնցմէ առաջինը՝ «Ճեպընթաց էսքիզներ», ուրկէ կը հասկնանք, թէ հեղինակը երկարաբանող մը չըլլալով իր խոհերն ու զգացումները խտացեալ ձեւով կը սիրէ ներկայացնել՝ երբեմն նոյնիսկ մի քանի տողերու մէջ. ահա այսպէս. -

*Ես, անցյալս  
Իրրեւ երազ ընդունելով,  
Անբազայիս անուրջներուս  
Շաւր ճախրեցի...  
Միհեւս հոգեւս՝  
Վանդակն ընկած թռչունի պես,*

*Ճշմարտություն որոնացող  
Իմ առոյսս - ցանցի ուժը  
Չընկալեցի...*

Կեանքին փորձը պիտի դառնայ բանաստեղծին առաջնորդը: «Յավալի իրողություն» քերթուածին մէջ բանաստեղծը կը գրէ. -

*Արդարության ձայնն, անկասկած,  
Խենթությունն է...*

*Դժբախտաբար,  
Ո՛չ միշտ է նա կարողանում  
Տակրանալի լեզվով խոսել:*

Բանաստեղծն է միայն, որ պիտի խօսի հասկնալի լեզուով:

Այս բաժինը գեղափոխ բանաստեղծութիւններու շարք մըն է, ինչպէս. -

*Տպարակություն ես չեմ ընդունել,  
Թե՛ն ենթարկվել եմ միայն իմ խղճին...  
Տարտությունից ես չեմ թթացել,  
Արդարության մեջ չեմ դարձել ձղճիմ...*

Սա ամբողջ պայծառ կենսագրութիւն մըն է: Եւ որպէսզի հեղինակին գրական կենսագրութիւնը եւս իմանաք, ահա՛. -

*«Նորարարներն» իմ  
Ինչքան էլ քայլեմ,  
Մեկ է պիտի որ  
Օրերից մի օր,  
Բերանները բաց,  
Դեպի ինձ նայեն:*

Հեղինակը, հոս, լաւատես է: Պիտի նայի՞ն արդեօք: Դժուար թէ: Անոնք յամառ են: Ձի՛՝ «Նորարարներ» են:

Նոր բաժինին վերնագիրը. - «Ինչպէս գտա ինձ».

*Եվ երբ մնացի միայնակ, շվա՛ր...  
Տեսնելով միայն  
Արցունքաշաղախ,  
Տխուր աքերիդ կա՛նչը հեռավոր,  
Ու այն է պիտի ճշայի՛  
Չկա՛...*

*...Տանկարծ հասկացա,  
Որ այս է որ կա՛  
Կենտրոնն աշխարհի...*

Կեանք դրամա մըն է այսպէս: Այս հատորին առաջին էջին վրայ կար երկու տող Համօ Սահեանէն. -

*Ինձ հասուցէ ջրողիմ,  
Էլ ուր մնաց շառաչել...*

Թեւ Սահեանը մեղմ շառաչել կրցաւ. մեղմ շառաչել եւս կարելի է:

Գրիգորեան բանաստեղծը շառաչելը տեղին գտաւ:

Բանաստեղծ Տիգրան Գրիգորեանը ոչ միայն իր գործիքին տիրապետած է՝ մայրենիին, տիրապետած է նաեւ ռուսերէն լեզուին, որուն միջոցաւ մենք կրնանք բացուիլ աշխարհին: Ինք՝ Տիգրանը վարպետ բանաստեղծ մըն է նաեւ յատկապէս բարդ բառեր ստեղծող. - հարաճիչ, ճարպաժպտակուլ, աստղադող, զեփյուռաշունչ, զովասյուք, էլեկտրոնապաշտ, միալիցքություն, գոյազարություն, հավատաստանություն, հրթիռել են, խեղանդամված հույզ, շառաչալի հեւք, զլած ձայն, քնակարոտ քայլք, ջղաթափ եղած, անապատածին, տիեզերածեն, տրտմաթափածալի, անըջաթաթալ, ժուժկալահար, հեգնահայաց, ծործորալ, բարոյախոհություն, թախծապաշտներ եւ այլն. կարելի է գիրք մը հեղինակել այս մասին:

Անրջածուփ եւ յարաճիչ չըլլանք հիմա եւ ըսենք, որ յաջողը բաժինին մէջ գիրքին՝ «Հավատաստանության արդյունքում» հեղինակը կը շեշտի այն միւթին կարեւորութիւնը. -

*Բայց հասկացանք իսկույն,  
Որ կյանքը գի՛րք է դառնում,  
Իսկ գի՛րքն էլ  
Կրանք է վստալական:  
Մանաւանդ երբ այդ կեանքը միափոխուած է բնութեան:  
Դիմակագրեծել գիտէ հեղինակը բոլոր դիմակագրեծները:  
Քանի որ. -  
Ինձ կարգէ՛լ էին մի նոր փրկակալ,  
Որ ինձամարկէն...  
Ո՛րջ փիեզերքին:  
Աֆորիզմային երգեր կան այս բաժինին*

մէջ: Յաջորդ բաժինը, որ նույնպէս թեւաւոր խորհուրդ ունի, վերնագրուած է «Դատապարտված անմահության».

*Ուշք ու մի՛տքս մերկեց  
Դարձաւ հո՛գս ու խաբկանք  
Լքված շրացուցիչ  
Պարբանքներից բախարի:*

Բախտաւորութիւնը բանաստեղծն է, որ պիտի ստեղծէ:

Խոր վերլուծումի արդիւնք է հեղինակին «Հայրենիքս» ապրումով գրուած, փոխանցելի ապրումով գրուած քերթուածը. -

*Մե՛ղքը հույզերի անմահությունն էր...  
Կյանքդ՝ խելահեղ խայտանքը նրա,  
Մի՛տքդ միշտ խղճի  
թարգմանությունն էր...*

*Խելառ պոռթկումդ՝ երդումը նրա:  
Եվ այսպէս վեց քառատող, ուր ընթերցողը, պահ մը կանգ առնելով այս քառատողերուն միտքին վրայ, երկար պահ մը կը խորհրդած, թէ ինչ է Հայաստանը, ո՛չ թէ անկանգներու շարան, այլ՝ միտք ու մտածում, որքան գեղափոխ, նույնքան՝ խորախոր ապրում:*

Ու տակավին. -  
*Նորո՛ ինձանից: Այս ի՛նչ արցունք է...  
Մի՛թե աճյունս հորի՛ն են փայլու...  
Կանգ առ, սաբասան:  
Նոզի՛ս ինձ հեպ է...  
Աստղերն էլ անհո՛նն թախծից են լայիս:  
Որովհետեւ. -*

*Կուզէի միհնչել մահ՝ շրացած  
Այս հրաշք լուսկա՛թն ընդշինել...  
Գոյությունս բարոյութեանը գնալովս՝  
Երազի անձրի՛ մեջ սնրեցի...*

Չեզի կոպիտ թուացող բանաստեղծը տեսեք որքան զգայուն է:

Քանի որ. - Ինչքան պղտոր օրեր եղան՝ ճակատս պա՛րզ ու բաց մնաց...

Ու ահա հեղինակին պոէմները՝ թիւով երեք, մեր ժողովուրդին հոգիէն եւ հեղինակին գրիչէն ուղիտօրէն բխած. - «Անմահության համանվազ», «Կարոտ» եւ «Ապխտածություն»:

Պէտք է կրկին ու կրկին կարդալ այս պոէմները, հայն ու հայ հողը խորապէս ճանչնալով, հոգիի բիրեղացման հասնելու համար: Այնքան խօսուն է հայ հողը իր բնութեամբ ու բնութեան միացած ժողովուրդով.

*Նձայ՛ մի պարտախոս իրեն հայող երկու  
Եկվոր աղջիկների նայվածքներից շիկնում  
Չա՛հ է գցում ձիուն ու խոտիքն իր հոգու  
Մարդկների՛ վրա անբախածե՛ծ անուն...*

Բոլոր երեք պոէմները արուեստի հուսկոճով շարադրուած. -

Ուր. - Հոգնած գյուղն է սսկված փարվել մթնշաղին...

Անշուշտ հունձք ու թութի ծառերը լրիւ թափուելէ ետք աշխատանքի լրուներն ետք: Գիւղական կեանքի ուլունքաշար մըն են ասոնք, մերթ արցունքով գեղուն, անվերջ կարօտի փունջերով:

Այս հատորին մէջ ընդգրկուած «Մշակումներ» բաժինէն մեզի կը ժպտին քերթուածները Գրիշա Մանուչարեանի, փայլուն քերթուածները՝ մշակումով Տիգրան Գրիգորեանի, որ յայտնօրէն հանդէս եկած է որպէս Մանուչարեանի հեղինակակից, կորուստ փրկելով իրաւ բանաստեղծի մը՝ Գրիշային գործերը. -

*Մթնածորում ամեն եկող նոր փարի,  
Երբ արեւն է մի պահ ամպի հեպ խաղուն,  
Ասում են, թե հավերժորեն կենդանի՛  
Այդ աղջիկն է իր քնի մեջ ծիծաղում...*

Ողբերգութիւններ ներկայացուած են հոս յաւերժօրէն խնկելի, որոնց ստեղծիչը ժողովուրդն է հայոց:

Պայծառ են Տիգրան Գրիգորեանի թարգմանութիւնները, մանաւանդ հո՛ն, ուր հայ բանաստեղծը խօսիլ կուտայ Եսենին ռուս քերթողը հրաշափայլ իր խոհերով. -  
*Լուսնալույսի փակ բոցալամովէ՛լ է հրդեհված այգին,  
Իր ողջ ուժերը լարելով՝ լուսինն,*



ԳՆԱԽԱՍԱՆՈՒՄ

Եջ 5 *աւես, հեքայասու՛  
Սիրով է միայն ուզում ողորդել  
ամենքի հոգին,  
«Սիրելիս» բառի սարսուռով ձմելել  
սիրտն ամեն մարդու:  
Այնքան մը, որ Եսենինի բաշխած սե-  
րը մեր երակներուն շրջանառութեանը կը  
միախառնուի:*

*Տակախին. -  
Քեզ աղբար տեսնելուց՝ կէջինէրն են  
հուզվում,  
Բարդինէրդ սևեզամ հասուչում են  
ցալից:*

*Կը զգա՞ք մարդկայնութիւնը ռուս մեծ  
բանաստեղծին:*

*Եսենինի «Սե մարդը» պոեմը յուզած է  
շատ օտար ընթերցողներ, հերթը մերն է՝  
Տիգրան Գրիգորեանի թարգմանութեամբ:  
Տիգրան Նիկողայ Ռուբցովէն եւս ունի  
թարգմանութիւն:*

*Ասես հավերժ է պահը բաժանանալ,  
Կարծես ժամանակն այսպէ՛ր գործ  
չունի:*

*Թող կողբես ո՛չ մի բանից ջիւտնէ,  
Եթե՛ հեչում է թախծոր մեղեդի...*

*Ռուբցով լաւ է իմանալու, որ հայը մեծ  
բաժանումներու ենթակայ միշտ ալ ոգելու-  
րուած է տխուր մեղեդիներով ինչպէս իր  
նոյնպէս մեր «կռունկ», մեր աշխարհն իսպա-  
րիկ մը չունի՞ս» կամ Տլէեանան:*

*Օրինակելի են «Արծակ պատումները».  
- մանաւանդ «Պառավ փերին», որպէս սի-  
րուն պատմութիւն:*

*Ազնի գրիչով մը գրուած ճշմարտա-  
պատում է «Յետադարձ հայացք» Եսենի  
փաստագրական եղելութիւնը արցա-  
խեան ազատագրական պայքարներուն,  
որուն առաջին արծագանքողները կ'ըլլան  
գորիսցիները, գլխաւորութեամբ Տիգրան  
Գրիգորեան բանաստեղծին: Այսպիսի առի-  
թի մը մարդիկ կը վանկարկեն՝ գլխարկնե-  
րը վար:*

*«Անդրադարձներ»-ուն մեջ հոյակապ  
է Յովհաննէս Թումանեանին նուիրուած  
ծօնը եւ կրկնակի ողջունելի. - Թումանեա-  
նը հայ բանաստեղծութեան հրաշալի մեծ  
հայրիկն է:*

*Համօ Սահեանին նուիրուած էջը՝ պայ-  
ծառ հաստատում մը:*

*«Դիմանկարները» հարուստ են: «Կեն-  
սագրական ակնարկ հորս մասին», էջերը  
չափազանցութիւններ չեն պարունակած:  
Խմբագիր Ալեքսանեան Սամուէլին  
նուիրուած էջերը՝ իրաւ հաստատումներ:  
Արկաղի Ծատուրեանը նոյնպէս  
փայլուն էջերու տէր է:*

*Որքան բարձր ու սիրալիկ կը հնչէ բա-  
նաստեղծին ձայնը, երբ կը հաստատի, թէ  
«Գորիսի մէջ կեղծ արժէքները յարգի չեն»:  
«Գնահատաւորներ» եւս կան հատու-  
րին մէջ հեղինակին հասցէին Սամուէլ  
Ալեքսանեանէն, Շչորս Դաթեանէն, Հռիփ-  
սիմէ Զաքարեանէն ու մանաւանդ Կիմ  
Աղաբեկեանէն, որ բանաստեղծին հայրե-  
նակիցն է:*

*Ամբողջ հատորը վաւերագիր մը կեն-  
քի ու բանաստեղծութեան, սիրոյ, մարդու  
եւ բնութեան զուգակցում մը արուեստով  
տրուած ու իրաւ բանաստեղծի մը գրիչով  
արձանագրուած ի տրիտուր մեր հայրենի-  
քին ու ժողովուրդին, անկամզ պայքարի  
ուղիներով:*



ՇՅՈՐՍ ԴՎՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝  
ՏՈՂՄԻԿ ԵՐԱՆՊԵՏՐՈՎ  
ԹԱԹԱԽՎԱԾ

Հանրահայտ է, որ բանաստեղծների գրական նախասիրության վրա մեծապես ազդում են ժամանակն ու միջավայրը: Իմ այն հարցին, թե իր եւ Ալսեյ Բակունցի միջև ինչ ընդհանուր երեւոյթ կա, Համօ Սահեանը պատասխանել է, որ իրենք ապրել են միեւնոյն միջավայրում:

Կարողալով «Հավիտենության ճանապարհին» ժողովածուն, գալիս եւս համոզման, որ այն գրվել է Ալսեյ Բակունցին եւ Համօ Սահեանին հարազատ միջավայրի ու հեղինակի ապրած ժամանակի հզոր ազդեցությամբ:

Կյանքը միշտ էլ հյուսվում է ինչ-որ միջավայրում՝ իր մեջ ներառելով այն մակընթացություններն ու տեղատվությունները, որոնք ուղեկցում են տվյալ ժամանակին: Եվ նա է այդ կյանքում բանաստեղծ կոչվում, ով առօրեական աշխարհից վեր է խոյանում ու հավերժական ժամանակի արարչական բարձունքից նայում այն ամենին, ինչը երբեմն անընդգրկելի ու անծեակերպելի է թվում սովորական մարդուն:

Տիգրան Գրիգորյանն իր ներաշխարհում կրելով ոչ սովորական մարդուն՝ նրան անվանել է տիեզերածեմ: Ընթերցելով «Ինչպէս գտա ինձ» ենթավերնագիրը կրող շարքը՝ համոզվում ես, որ նա հենց այդ ոգեղեն ոլորտներում էլ գտել է իրեն: Իր ոճի մասին Տիգրան Գրիգորյանն ասում է.

*Գրում եմ այնպես,  
Ինչպէս իմ սրտիս  
Տողովուրդն է հին,  
Հատը խորհելով,  
Նշեղեն հույզեր  
Փռում իր ջրու դին:*

Բանաստեղծի եզրահանգման հետ անվերապահորեն համաձայնվում ես, երբ կարդում ես իսկապէս տոհմիկ երանգներով թաթախված «Ամնահության համանվագ» պոեմը:

Հայտնի է, որ Գորիսի տարածաշրջանում գտնվող Կյորու գյուղում անցկացրած դպրոցական տարիների ամառային արծակուրդների անմոռանալի հիշողություններն են գեղարվեստական նյութ տվել ու ոգեշնչել հեղինակին գրելու այդ պոեմը:

Գյուղական կյանքի այդ համանվագի ընթերցումը, ծննդավայրում տպավորված հուշերի անպատմելի հարազատությամբ ու երանությամբ ուղեկցվող կարոտներ արթնացրին տողերիս հեղինակի հոգում. ժամանակին տեսնել էր պետք այն երեք գյուղը, որ միմյանց հարեան ձորերի մեջ բնիկների երեք հիանալի համայնք էին կազմում՝ Կյորուն, Ըրդունիչենը եւ Սուղանճուղը: Այդ գյուղերը սոցիալիզմի հորձանուտով թեպետե անցան, բայց կարողացան իրենց ինքնատիպությունը, սքանչելի բարբառն ու սովորությունները պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ խորհրդային իշխանությունները չէին միավորել այդ գյուղերը եւ Հարթաշեն անվամբ մի գյուղ հիմնել...

Մի անգամ Սոս Սարգսյանի հետ եղանք հին գյուղատեղեղում, որոնցում դեռ կան գուն առանձնատներ կային ու պտղատու ծառերի հետքեր: Մեծ դերասանը հիացմունքով բացականչեց. «Այստեղ իսկական հայեր են ապրել՝ Համօ Սահեանի խաչի պապի նման մարդիկ»:

«Ամնահության համանվագ» պոեմը կարողալիս ոչ միայն հստակորեն տեսնում ես աշխատավոր հայ գյուղի ավանդական կեցությունը, այլ նաեւ հիանում ես բնաշխարհի ու մարդու ներդրման գոյության նախապատմական հովվերգականությամբ: Պոեմը լեցուն է զգլխիչ պատկերներով, բնութայն պարզեւած առիթքնող թովչանքներով, բանաստեղծական հայտնությունների պէս հնչող նկարագրություններով, գյուղաշխարհը ճանաչելի դարձնող անզուգական բնութագրություններով...

Մեր ժամանակի ակնաժողոր գրականագետ եւ անկրկնելի անհատականություն Կիմ Աղաբեկեանը շատ հակիրճ, բայց խորաթափանց առաջաբան է գրել բանաստեղծի առաջին գրքի մասին: Իմ խոսքը կարող է այդ պարագայում եւ ավելորդ թվալ: Սակայն ես չէի կարող անտարբեր մնալ իմ հայրենակցի գրքի նկատմամբ եւ չասել, որ այն ինքնահաստատված, ճշմարիտ բանաստեղծի ժողովածու է: Ու վերջապէս չէի կարող անտարբեր մնալ

նաեւ նրա սքանչելի թարգմանությունների նկատմամբ:

Սերգեյ Եսենինի գործերն անթերի են թարգմանված: Դա, կարծում եմ, արդյունք է երկու հանգամանքի. Տիգրան Գրիգորյանը կարողացել է զգալ Եսենինի բազմախորհուրդ ու բարդ քնարերգության նրբերանգները՝ լիովին տիրապետելով բանաստեղծության թարգմանության արվեստին:

«Թարգմանությունները դառնում են քո ստեղծագործությունների մի մասը», - գրել է Համօ Սահեանը, երբ Եսենին էր թարգմանում: Տիգրան Գրիգորյանը «Թարգմանչի կողմից» գրած իր խոսքում, թեեւ անուղղակիորեն, սակայն, անշուշտ, նույն համոզմունքն է հնչեցնում. «Անվերապահ ինքնալքումով, ինքնամոռաց հավատով լի թարգմանչը հեղինակի հետ այնպէս պիտի մերվի, որ կարողանա բնագրի արարման ներշնչանքի սարսուռն զգալ. թարգմանված տողը, պատկերը ոչ թէ արհեստավարժորեն փոխադրված, այլ հնարավորինս պիտի երկնված լինի: ...Թարգմանությունը ոչ թէ պիտի փոխադրվելով ինչ-որ կերպ սարքվի, այլ պիտի թարգմանչի կողմից վերապրվելով՝ վերածնվի»:

Տիգրանի թարգմանած բոլոր գործերը եւ հատկապէս «Սե մարդը» վստահաբար կարելի է դնել հայ թարգմանչական արվեստի լավագույն նմուշների կոթքին:



ՀՈՒՓՍԻՄԵ ԶԱԲԱՐՅԱՆ

Բանասեր

ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՐ  
ՀԵՔԻԱԹԻ Է ՆՄԱՆ

Աստվածային հրաշագեղ ստեղծագործության՝ մարդու հոգեկերտվածքի, անհատական ապրումների ու նրա ներքին զգացողությունների պոթնկումներից է ծնվում հույզերով սնված եւ առաջապանքից սերված այն ինքնատիպ աշխարհը, որը չափածո տողերի վերածվելով դառնում է քնարերգություն ու ցույց տալիս ստեղծագործողի սրտի խորքը, իրականությունը բացահայտող նրա երեւակայության ճանաչողական հնարավորությունները, ներաշխարհի ընդգրկման ասիմաններն ու ժամանակաշրջանի ընդհանրական, ցավալի երեւոյթներից վեր կանգնած նրա մարդկային գոյության արժեքային համակարգը:

Տիգրան Գրիգորյան ստեղծագործողի սրտի խորքն անհատակ է, երեւակայությունը՝ անկասելի, ներաշխարհը՝ համապարփակ: Նա ծնվել է նուրբ զգայարաններով եւ անգամ սովորական, առօրեական իրողությունների մեջ կարողանում է նկատել ու շնչավորել գեղեցիկն ու հավերժականը:

Բավականին ստեղծագործական ճանապարհ անցնելուց հետո բանաստեղծական որոնումները Տիգրան Գրիգորյանին տարան պատանեկան օրերի ոսկեհուռ երագներով պարուրված մարդկան պապի գյուղը, որտեղ նա անց էր կացնում իր դպրոցական տարիների ամառային արծակուրդները: Այդ օրերից մնացած վառ հիշողությունները բանաստեղծական հզոր տարերքով եւ մոգական շքեղ պատկերավորությամբ կյանք տվեցին «աղջամուղջի ցայգուն հարություն առած վաղընական կյանքի առասպելին», որն «Ամնահության համանվագ» դարձած՝ դրվեց հայ ընթերցողի սեղանին:

Իր մեջ ամփոփելով ամառային գյուղի ընդամենը մեկ օրվա կյանք՝ ցայգալուսից մինչեւ կեսգիշեր, «Ամնահության հա-

մանվագ» պոեմն իրենից ներկայացնում է ամեն տեսակի ժամանակակից վարակներից ու վիրուսներից զերծ ու զսկած դասական մի գործ՝ գրված բոլոր ժամանակների համար եւ ապրող ցանկացած տարածության մեջ:

Պոեմում չկան թույլ ու վիճահարույց կետեր, անհաջող ու ձախողված տողեր, եւ ակնհայտ է, որ բանաստեղծը նվիրվել է իր գործին ամենայն լրջությամբ, անվերապահ ու անմնացորդ սիրով...

Գեղարվեստական խոսքի մեծ վարպետությամբ ասելիքը խտացնելով ու հասցնելով զուլաված հակիրճության, իսկ պատկերներն առավելագույն բյուրեղացման՝ Տիգրան Գրիգորյանն ամենասովորական պարզ երեւոյթների մեջ կարողանում է որսալ նրանց առավել նշանակալի իմաստներն ու հավիտենական երանգները:

Թռուցիկ ընթերցել ու հպանցիկ անցնել այս գործի կողքով՝ չես կարող, որովհետեւ ակամայից հազարան հավքի թելերին թառած տեղափոխվում ես «յոթ սար ու ձոր հեռվում կապտամշուշ հազած» դրախտային մի աշխարհ, որուն ընթացող կյանքն իր ամբողջությամբ մեջ թեզ է ներկայանում մի արարչական, կախարհող գործվանքով լի մթնոլորտում:

Բանաստեղծն անմարելի, մշտնջենական սիրո անհուն խանդաղատանքով լի ներշնչանքով է վերակենդանացրել պատանեկան աշխարհը կալման անաղարտ զգացողություններում դրոշմված գյուղական կյանքի ու բնության հովվերգական ոգին՝ գեղարվեստական կատարյալ պատկերների խորախորհուրդ ծալքերում արտացոլելով այդ իրականության մեջ թեւածող տարաբնույթ իրողությունները:

Սիւս ինչպիսի խորաթափանցությամբ է նա ներկայացնում առավոտյան աշխատանքի գնացող հանդիպողի նվիրական, գաղտնախորհուրդ սիրո անամոռ պարունները, հասկանում ըղձանքների մեջ մղկտացող նրա սրտի լեզուն, զգուն գորովալի հույզերի քնքշանքից նվաղած նրա հոգուն ծփացող երանությունը.

*Մեքենայի թափքը լի՞քն է  
հանդիպումներով,  
Այրեքն ակամայից մո՛րթ են  
կանգնել կանանց...  
Ինչ-որ արդեք ծածուկ ձմրվում են  
սիրով՝  
Թաքուն կարտրների գրգանքներով  
անանց...*

Պոեմի մի այլ հատվածում իր գրչի արարչագործ գործությամբ ներկայացնելով արտի եւ սյուքի գունային գարնանահրաշխաղը՝ հեղինակը գեղագետի գմայված ներշնչվածությամբ ամխաթարորեն վերապատկերավորում է բնության հրամցրած այդ հոգեթով գեղեցկությունը՝ ընթերցողին հաղորդակից դարձնելով կատարելության ամենկենցիկ զգացողության հետ.

*Սարսափելի արդեք, սյուքից  
պլկնոված,  
Յոխանքներով թավշյա սսսսանքներ է  
դալիս...  
Նարո ալիք-ալիք սարի փեշից պոկված  
Կարծես ձորը մարած, դէպի գյուղ է  
գալիս...*

Թվում է՝ ոչ թե ընթերցում ես, այլ հոգիդ ջերմացնող քաղցրածոր մեղեդու հնչյունների ներքո սքանչելի մի տեսաողովակ ես դիտում՝ չկարողանալով ազատվել նրանում պատկերված ջրնաղագեղ պահի հմայքը վերստին ընթերցանելու գայթակղությունից...

Յոթանասունյոթ բանաստեղծական քառատողից բաղկացած այս հրաշալի պոեմը բազմաթիվ անգուզական կտավների համակցություն է՝ պարուրված բնության դյուքից մեղեդիներով, լցված հավքերի ու կենդանիների իմաստավորված կանչերով, օժված հայրենի եզերքի բույրերով ու գույներով, որոնք այնքան բազմազան ու բազմաբնույթ են, որ թվում է, թե իսկապէս ընկել ես հեքիաթային մի աշխարհ...



# ԱՆՄԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ

## Նվիրում եմ եղբորս՝ Աշոտ Գրիգորյանին

Վաղնջական կյանքի առասպելը՝ ևոքում, Աղջամուղջում ցայգի՝ հարություն է առել... Խնե հովիվի անկիրթ լուրսակքնե՛րն են թթված՝ Օրինեղաության ևնան գյուղի վրա փռվել...

Նորիզոնի վրա ա՛յգն է շատագունում
Կարոտաբաղձ մայուն՛... Թախծագորով բառա՛ջ... Ծիծառնե՛րն են զվարթ ձովողյունով ձախրում, Ընձողկներն իրենց վե՛ճն են մղում առաջ...

Ժայռերի հեղ մերված ողջ թաղերից հերթով Աջողները զիւ-զի՛լ ծուղորոդո են կանչում... Գամփռնե՛րը քնկոյր, բողբոսկան բասով, Քնահարամ եղած՝ սրտմբւած են հաչում...

Գյուղի դիմաց փռված այգիներում, վաղուց, Սոխակների անուշ դայլայլնե՛րն են շրջում... Տարս, խենթ ու կրակ մեր այծերի՛ց պրծած, Կաթի կճուճն առած՝ գոմից փուն է դառնում:

Բրիգադիրն, ասեւ, մի գզի՛ր է գնդած... Ծեզը ձեզին իր հի՛ն գոռոռոցն է դրել, Աշխարանքից բոլոր բացակայող մարդկա՛նց Խոսարանում է հասարար խոտարեղից գրկել:

Արեւածա՛ցն իր խղ եղջյուրներին առած՝ Ներին քարաժայռի՛ց իր հոբին է հայում... Կարսոյի ցու՛ն անգամ՝ աչքերն այրյունամած, Գոռ պահվածքին նրա շփոթված է կայում...

Գերանդիներն առած՝ քնակարոր քայլքով Տղամարդիկ դանդաղ գյուղամեջ են իջնում... Արիամարիված բախտն է իր զոգոսն ձայնով Ինչ-որ մի ավանան կառուչալի ողբում:

Դեղձան հավթի դյութիչ կլկլոցով լցված Այգիներում կկու՛ն վանկարկում է իր «կու»-և... Բաղից գյուղ է գալիս մի մարդ՝ էջը բարձած, Ուր օղի է թորել ամբողջ գիշերն անթուն:

Կաչադակները՝ լի՛րբ, չարչի կանանց ևնան, Թողես՝ չափչփեղո՛ւմ անվերջ աղսալակն... Ազոավներն է՛լ կոռան պատավների ևնան, Մի բակի՛ են միայն եղածն աղավաղեն...

Կին ու ջահել աղջիկ իրենց հացը կապած Դեպի հանդվորների մեքենան են քայլում... Նուրբ րտրիկներն ուժգին գեղբնի՛ն փայլով՝ գծված, Մի մանչուկ է, ևանից պոկված, մորը կանչում...

Իսկ սարյակներն անհո՛գ, լար ու քիվի ևարած, Չնաշխարհիկ այնքան արխանե՛ր են հեղել, Որ գողունի կարուն, պարի վրա չուված, Իր ծոռ միտքը թողած, ապշահա՛ր է եղել...

Մեքենայի թափը լի՛քն է հանդվորներով, Արեւն անբամայից մո՛րս են կանգնել կանանց... Ինչ-որ սրտեր ծածուկ անլվում են սիրով՝ Թարուն կարտրների գրգանքներով անանց...

Արծիվներն են լազուր, լուրթ երկնքում ծավի Ներշնչանքից հուզված՝ կոնչոցով ձջում... Ու քջու՛ջը կիսար թողած մոռսահալի Սարսած կչկչոցն է թավտրներում հնչում...

Խոլ հռեղոցն է սուր արձագանքում գյողում... Մեքենան է հսևոյի ձամփան բռնում ձողից Կողքին՝ խրտնած մի հորթ թռչկորում է փեղում, Իսկ մի սիրուն ուլիկ մկկում է սահից...

◆◆◆

Արևն արդեն մեր փուն պարզգա՛մբն է մտել... Իմ եղբայրը կրտսեր, ես ու քեռոս ուղին Քնար գլուխներս բարձերի փակ խցկել՝ Ունկ չնեթ ուզում դենկ փարփս փնթփնթոցին:

Տարս ամենօրյա թունթորակներն է իր, Մեզ ամոթանք փայով, դարձյալ վրս օցնել... Նրա գորովալի «ժամեղաությունն» անգիր՝ Առավորվա քնի մեր օրորն է դարձել...

«...Լսու՛մ եք, ա՛յ խոխեղք։ Վե՛ր կացեք։ Չե՛զ հե՛ր եմ։

*Էն անիծյալ թու՛թը Էսօր պիտի թափենք... Էն, որ ձեզ խի՛դձ չունեք, ես էն գլխից գիտեմ... Գո՛նե ձեր թայերից մի քիչ ամաչեցեք...»:*

*Մեր ևսխաձա՛շն էլի սփռոցի փակ շարած՝ Տարս դեռ խոսելով ներս ու դուրս է անում... Ու հավերի վրս ձայնը բարձրացրած՝ «Ջիւքն ազարած» մեզևից՝ այգիները գնում:*

◆◆◆

Երկար քնեղոց մեր գլուխները թմբած՝ Վե՛ր ենք կացել, ասկայն դեռ չենք կենտրոնանում... Մով երկնքում արդեն իր գեմիթին հասած Արեւն անխիդձ կարծես թե կրակ է թափում...

*Միջօրեի թափուր գյուղն իրենց ձեռքն առած՝ Ընձողկներն անհո՛գ առույխ են անում, Ինչ-որ հավեր, զոռով իրենց ձվերն ածած, Սրբապարսո ձայնով ձաքոձա՛ք են լինում...*

Ընձողփրավիզ մի ժայռ, արևաւհար եղած, Իր գլուխն է փորձում ծառերի մեջ խցկել, Նրա մեջքին պուր-պուր, առավորվա ծեփած Աթարներն են, ասեւ, փասլից ուշաթափվել...

Մեր այծերի ձամփով ձորի աղբյուրն իջած՝ Մեր ծարավն ենք հերթով, երկա՛ր հագեցնում... Ու հավթերի դյութիչ գեղգեղանքո՛ւմ գերված՝ Ծոգից փրկված, դեպի մեր այգին ենք շարժվում:

Տովկեկերը վաղու՛ց ըմբռխնում են զովը, Այգիների գրկում քրքոց՛ն է ու ճիչ... Գզվանքնե՛ր է բերում անուշաբոյր հովը... Ծորորում են կսևայք հուլության մեջ թովիչ...

Նեձյա՛լ մի պարսկյակ իրեն հայող երկու Եկվոր աղջիկների ևայվածքներից շիկնում՝ Չա՛հի է գցում ձիուն ու խտվքն իր հոգս Սալարկների՛ վրս ամբակածե՛ծ անում...

Դեռ չմբած այգի՛ հենց փարս մեզ փեսնում՝ Թոթ թափելու հա՛րցն է ետրից մեջտեղ գալիս... Քեոյս փարփս խի՛դձն է կսկսածի փակ առնում՝ Ու մինչ երեկո մեզ ազարություն փալիս:

◆◆◆

Յոթ սար ու ձոր հեռվում՛ն, կապտաձուշ հագած, Լեռնապա՛րն է հսկա փեսիթի պես ցոլում... Ու մեզ թվում է, թե այդ լեռներին փարված Անրատներում է հենց հազարան հավթն ապրում...

Դնդևում է լցված մի հարս ձամփին այգու Նոգի գերեմարո՛ղ մի մեղեդի շար հին... Մորմոթե՛լ է սիրտը մի անկնկի մարդու Կնոջ գորովանքի հիշողությունն անգին...

Փշարենու քնքուշ բոյրն ափերին ցրած՝ Ծառաչալի հեքով գե՛րն է վշշում ձորում... Անե՛ն ընկուզենոց, ասեւ, հերթի դրած Դեղձան հավթի քաղցր կլվո՛ցն է ծորում...

Սարսակնօի արտը, պուքից այլեկոժված, Յոխնքներով թավշյա սահանքնե՛ր է փալիս... Նեքո ալի՛ք-ալիք սարի փեշից պոկված՝ Կարծես ձո՛րը մբած, դեպի գյուղ է գալիս...

Դարավանդի վրս՝ ձիզ լարերին շարված, Մեղվակուլներն իրենց ուղեկա՛լն են դրել... Նեղեղարի խոնավ պռունկներից կառչած՝ Գաձաձ թխկիներն են չարքերի պես կախվել...

Մենք՝ գողեզող քայլով, ահը մեր սիրտն ընկած, Վաղուց աքքաղրած մի այգի՛ ենք մտել... Ու դռնակից հեռո՛ւ մի գաղտնի տեղ վարած, Նրաշաբոյր համի վարուզներ ենք գրել:

Ինչ-որ ձայնից սարսած՝ իրար հրմշտելով, Խունապսահար եղած ձորակն ենք մեզ գցում... Մի քիչ ուշքի եկած՝ մի կերպ հասկանալով, Որ փայտփորիկն էր մեր սիրտը կքցսահարում...

Վերին ձորի խոժոռ, լերկ ժայռերի գրկում Դունդունում են վայրի աղունիկներն անուշ... Նին կամրջին կպած այգիների խորքում Իջեւանե՛լ է մի ամպանուն մշուշ...

Անգին ալսա՛րը մեր զրպան ու ծոց լցրած՝

*Մենք փորձում ենք ծածուկ դեպի ձո՛րը ծկել, Նազարանյա փամուկ մի զով քարայր մբած, Թոթախաղի փայլով՝ օրը մթնեցնել...*

Ա՛յ քեզ դժբախտություն... Տարս կանչո՛ւմ համառ Ժամահարի ևնան գյո՛ղն է իրար խառնել... Մեր հանցանքին փեղակ չկոչվելու համար՝ Դարտաղրված ենք մենք նրան պարտախանել:

Տարիս վրս գծված՝ վիթի արագությանը Առու, մացառ ու թուփ հեղեռում՛ն ենք թողնում... Ու մեր այգուն հասած՝ անհուն կարաղությանը Չդադարող նրա կանջին պարտախանում:

Տարս խնդրում է մեզ, որ մոտերքում լինենք, Մեր արեւով երդվում, Աարծուն կարգում վկա, Որ թե փրկենք նրան ու թույն այսօր թափենք՝ Նենց թոշակն իր սրացալ՝ մեր «հախերը» կրա:

Ի հեճուկս փարփս՝ միանգամից պոռթկում, Նայրարարում ենք, որ ո՛չ մի Աարված չկա... Խեղձը սարսափահար՝ հորդորում է Աարծուն, Որ Երկնավորը մեզ՝ «եսիրներիս» գթա...

◆◆◆

Տարիս անկա՛յ կանջից կաթվածահար եղած՝ Ծարսահարպ դեպի մեր խաչերն ենք քայլում... Ու պրշնո փակի խաչի քարին թիկնած՝ Դարսպարված՝ թաքուն մեր ալարն ենք ուրում...

Ղորոդներից մի ձի, վզի կապը կորած, Վրնջալո՛ւ կալի զամբիկին է հասել, Իսկ մեր կողքի այգում, ձեր փանձենոց կապած, Վնգաքացող շու՛նը գողոնն է մեր փեսել...

Մի զույգ աղջնակներ, փոքրիկ կժեքն ուսած, Չորաղբյուրից իրենց այգին ցոր են փսևում... Գեարի ափին հարող սեղավներ՝ մբած՝ Գառսն հոորն է սարից իջած հանգաբանում...

Տարիս ձա՛յնն է ետրից մեր ականջին հասնում... Տարս թոնթորալո՛ւմ կանչում է մեզ հացի «...Աշխարհն արար վախրին միշտ ձա՛շի՛ է ևսրում՝ Խաղին գերի էս փուչ եթիմներից բացի... »:

Անե՛ն օրվա՛ ևնան, էլի աղմկելով, Տովկ այրերն անհոգ, «կորած» պասլի՛ս բաղում, Բախտի՛ց, խաղաթղթի՛ց, զաղից բողբոթելով՝ Նարդի, բազարբոյր ու շախմար են խաղում:

Իսկ կյուրերով հրձված իմ բսևսարեղձ քեոյն՝ Սուր վեճե՛րն է զվարթ կարակներով հարթում... Ու պարտվելոց կոխվ սարթողների գլխին՝ Նանպարտասրից ջընաղ քաոյակներ է թափում...

Մենք փասպկած մի՛նն ու կարտոֆիլն ենք սիրում. Տարս, էլի թարսված, իր սոռուն է եփել... Դիբումսմբ փարփս «ջրիկ» ձա՛շն ենք մենք փնտլում՝ Ու փորձում ենք նրան իր ափերից հանել...

Ծարբում է փարս մեր սուր հոխորտանքին՝ Ծուրասելոսկ սարքած առույթներն իր թունտը. «Նեքույքը չի՛ կարող խրար կարոպ գլխին», «Չի՛ հավանի ակնի ջրին այժը թոտոր»:

◆◆◆

Օղը կա՛նզ է առել: Տա՛ւ պոթակարած: Անգամ գե՛րն է մի կերպ թավալելով շարժվում... Գծված մեղուների գլվոցն՝ սհագնացած, Մղձավանջի ևնան մա՛րդ է շշմեցնում...

Ծոգի թմբիրի բութ հոգեվարքից փախած՝ Վերին ձորի խորունկ ջրվեժն ենք մենք հասել... Ու ջրերի սառը շիթերի փակ ցայլած՝ Սրթարթալո՛ւմ փաքոկ քարափներին պառկել...

Մեզևից մի քիչ ներքե՛ւ՝ հսկա քարսնձավում, Խումբ-խումբ մակաղե՛լ են ոչխարները շշմած... Քարաժայրի վերին, ամենսահո՛ւմ թոտում՝ Քրմսպերի՛ ևնան մեր ներին է ևսրած...

Գեարի հորձանքներում մրցության մեջ մբած՝ Երկար լողանալուց մենք այնպե՛ս ենք սովել, Որ պարտասր ենք փարփս կարտոֆիլը խաշած, Նոյնիսկ առանց յուղի, խփշրելով ուրել...

Քաղցից փառապելո՛ւմ, դարարկությանը լցված, Չորակներով մի կերպ մեր այգին ենք հասնում... Մեր փայ խորովածը գորովանքո՛ւմ պսխած՝ Գլուխն օրորելո՛ւմ փարս մեզ է մեկնում:

◆◆◆

Թփուրների կողքով անցնող առվին թեքված Չեփյուններից հուզված ուռնիկն է ևազում... Ջրի գլզըլալի կլվկոցով գերված՝ Մի զմայլված թռչնիկ վերուվա՛ր է վազում...



**Պոեզիա**

Էջ 7

*Մոշուրներով պարսած սեխավներից մթին Մոշահավն է հրա՛ջք ծղրտոցով ճչում... Մի սիրունիկ թռչնակ սալորենու թփին՝ Մայրամուտից առաջ իր շվին է փչում...*

*Վանդվորները վերջին ոլորումն են իջնում Կյանքը խորհրդավոր՝ կենդանությամբ լցրած... Ընճողուկներն ուրախ ծառից ծա՛ռ են թռչում Ու, մինչև գյուղ հրճված, ուղեկցում են կրակն:*

*Մի գայլախեղդ գամփռ վերին կայում ցզվե՛լ՝ Գոմոցով մաղձուր դունչն է րևկած հաչում... Այն փու՛ջ շան որդին է աչքին երեսացե, Որից կերած ծեծը չի՝ մոռանում կյանքում:*

*Ծնողների կարտյուն ամբողջ օրը քաշած Գատներն արագաբայլ գառիթափով իջնում Ու կամրջի կողքին, գառնարածից պոկված, Մայունները դրած՝ դեպի րուն են վազում:*

*Փութով թու՛թն են թափում, որ երեկոն չընկնի՝ Գյուղում հասակ առած կո՛ւռ պարսևու ևման... Յավալի՛՛ է միայն, որ րաբու կով չունի, Ու վարդիթխ վրա՝ կարկաբաններ չկան:*

*Երկինքն իրենց անդու՛յ սուրճներով լցրած Ծիծառներն են էլի վայրիվերտ ստորում, Իսկ քեղառար ձորի րամունկ բուրմունքն առած՝ Նովն է անփութորեն՝ այս ու այնպեղ ցրում...*

*Կաշադակներն էլի՛, չաչանակներ դարձած, Լաչատ կանասնց ևման անհո՛գ չափչփում են, Իսկ ագռավներն, իրենց գուժկան ձայնը զլած, Չար պատավների պես դժգո՛հ կոկրում են...*



*Նոցնած գյու՛ղն է սակված փարվե՛լ մթնշաղիև... Նախրապակի «հո՛»-ն է վերին րախարից լսվում... Կովերի հեք խառնված ոչխարների գլխին Թ-ունը-թունը հիշուցներ է ինչ հուվիլը թափում...*

*Ննձվորներին բերող մեթենայի խրթին Ձիկոցներից թափթի՛՝ գամփռներն են հուզվում... Չիու մի խենթ թուռակ, մոորը թողած ճամփին, Խերացնոր վարզով դեպի ձո՛րն է վազում...*

*Նոբ ու նախիր գյուղի կամրջին են հասնում. Մրբաճմլիկ մայուն... Կարտրալի բառա՛ջ... Չղջիկներն են իրար խաբսեր րալով թռչում... Բու՛ն է մագստներից վայում լայախառա՛ջ...*

*Որ հանդարտվի իր մոր հոգս հևարող հոգին՝ Քեռիս որոշե՛լ է, որ մեկը այգում քենեք... Որ մնացած վերջին թթի ծառը՝ ծեգին, Առանց ձգձգելու՝ վե՛ր կենսաք ու թափենք:*

*Իմ ռուս քեռակնոջ զվարթ ծղլո՛ցն է Ողջ ձայներից զարված, աղջամոռջում ծորում... Տարիս հրահանգով գյուղի մեր րանն ինքն է Այժ ու ոչխարներին այսօր դիմավորում:*

*Թթենու րակ րախարի, մեր «րեղերը» մրած, Պապիս մապին րապի՛ն գրոյցներն ենք լսում... Իսկ րևակում քեռիս, մահճակալին փռված, «Նաղաղ Գո՛ն»-ն է դարձյալ հափշրակված կարդում...*

*Ըստուների անդու՛յ ճոռոցի րակ խաղաղ՝ Գե՛րն է անդունդներում դիվախարված փչչում... Երազախար եղած՝ խերս՛ո մի աքաղաղ Նուզված արթնացե՛լ ու ծուրրուդու է կանչում...*

*Տարիս պարմելով՝ մեր պասը մի պարվարժան, Չարմանակի ազնիվ րդամաբղ է եղե՛լ, Ու չնայած ուժի րե՛ր էր դյուցազնական՝ Խիղճն էր նրան միայն կյանքում առաջնորդել:*

*Վկարթյամբ րարիս՝ ևս ցորենի պա՛րկն էր Արամներով բռնած ձիու վրա դնում, Իսկ ծիրակի կորիզն ասես հենց այնպես էր՝ Միայն երկու՛՝ մարտվ միանգամից կտրորում:*

*Տարիներին ՆԷՊ-ի պապս գյուղից մեկնում՝ Կարողանում է լու՛րջ գործերի մեջ մրկել Ու Կովկասի աշխույժ քաղաքներից մեկում Նաստարվելով՝ կարգին հարպություն դիզել:*

*Տարս պարմում է իր լաբե կոշիկներից Ու թե քանի՛-քանի ոսկյա զարդեր ուներ, Պապիս րեսակ-րեսակ փայլուն փողկապներից, Եվ՝ թե քեռիս որքա՛ն խաղալիքներ ուներ:*

*Ու պարզվում է մեղքը պապիս այն է եղե՛լ, Որ «չի մրել կոխոզ ու չի՛ դարձել փչան», Չեկիարները պապիս «չար են րարե՛լ-բերե՛լ...», Մի սեռակնած օր էլ՝ «կորցրե՛լ են նրան...»:*

*Մղկրում է րաբու, իրեն պարսավելով, Որ սնդուկում պապիս ինչ կար-չկար՝ հանեց Կոպրուններից բռնած՝ ողջ եղա՛ծը հերթով, Տարիներին սուվի, ալյուրի հեք փոխեց...*

*Խավարի մեջ կորած՝ մեր մթնոլած այգում Կայծողիկներն էլի սափղերին են խառնվել... Տիրությունն է սակվե՛լ մեր լոյս հոգիներում... Նոգոցներից րարիս՝ մեր աչքե՛րն են լցվել...*

*Ու չնայած աքրած կյանքին հարսակակն՝ Տարս էլի փա՛ոք է րալիս Երկնավորին, Որ մեծ Նայրենակսն պարերսզմում դաժակն Ո՛ղջ է մնացել իր որբ մեծացած որդին...*

*Գորբերն, իրիկնային կոկոռը կրբած, Ծահճարներում գեպի կոկորդները փբել, Պլըշած աչքերո՛վ իրենց կարևորած՝ Անես լոպթյունն են փորձում ձայնավորել...*

*Իմ ծով րարի խաղա՛լը քնի իսկ մշշոցն է Բորր չարքերին մեր այգուց հեռու՛՝ բշում, Ու րևակից լսվող քեռուս խոմփո՛ցն է Մեզ այս մթոթյան մեջ՝ արբապղոած պահում...*



*Դարոցակսն րարիք, արձակուրդներ՝ ամռան... Խորհրդային կյանքի հավարտվ լի՛՝ օրեր... Աշխարհն արեանհամ գնորթի՛՛ էր ևման... Ու թվում էր՝ անմահ սարելու եմ դարելր...*

**2005-2007թթ. ք.Գորիս**

**ՈՐԴՈՒՍ**

*Իմ սարդահամ՝ քալիկ, Իմ հույսերի գալիք, Ըջմարտության իմ հուն... Տիեզերքի իմ րուն:*

*Դու իմ արբան մորմոք, Իմ կենդանի ցնորք, Ողջ իղձերս պահած՝ Նրաշագնդ իմ Տո՛րք:*

*Ես՝ երբեմն գծում, Անբանեի մի այր, Դու ինձ որդի՛՛ եղար, Նաես եղար ինձ հայր...*

*Արարչական իմ դո՛ր, Ամենամե՛ծ իմ րող, Անմահության իմ բուն, Նավերժության իմ հող:*

*Իմ սրբություն՝ սրբոց, Միրո իմ ե՛րգ երգոց, Իմ գորովանք ու գու՛թ... Ու իմ Գլուխգործոց:*

**ՃԱՅՃԱՏԵՆԴ**

*Կյանքը՝ կեղծիքի ճարպիկ սովորույթ: Ըջմարտությանը... առա՛ջ են րալիս: Արդարությունը՝ թշվա՛ռ ավանդույթ, Որ հոգեհացի՛ պահին է գալիս:*

*Մուր հուրվուն՛յթն այս զխարվո՛ղ ոչինչ է, Խիղճը դահիճ է, իսկ պարիվը՝ բիճ: Մերը մոլորված հավարի ճիչ է, Իսկ համբերությունն՝ ուզվորի մահիճ:*

*Լրիվ օրսս՛ր մի խորթ երեսույթ եմ: Ոչ մեկի ցավը չի՛ հասնում սրբիս: Ի՛նչ ես, Արարի՛չ, արե՛լ իմ գութը... Մի՛թե կորե՛լ է... ցնդե՛լ է հոգիս:*

*Նեռու՛ ինձանից: Այս ի՛նչ արցունք է...*

*Մի՛թե աճյունս հողի՛ն են րալիս... Կանճ առ, սարսևա՛: Նոգին ինձ հեք է: Ասրդերն էլ անհուն՝ թափոց են լալիս:*

*Կյանքը՝ կեղծիքի մի կու՛ո սովորույթ: Արդարությունը շար ուշ է գալիս: Ըջմարտությունը՝ հորած ավանդույթ՝ Նոգեհացին են բու՛ո-բուտ շաղ րալիս...*

**ԵԿ ՈՒ... ՀԱՎԱՏԱ**

*Իմ պարսանեկան րեկեսներն՝ վսեմ Ու րդայական առաքինության Անձևուրսց հողուներ...*

*Աշխարհում ոչինչ Դոք չփոխեցիք. Լոկ փշուր-փշուր՝ անելով Փխրուն իմ Էությունը՝ Ինձ կորուստներիս գերին դարձրիք...*

*Որ ունեցածս անդա՛րձ կորցրած Մի անբուժելի ցավագարի պես՝ Այժմ պարսանքներ կարկաբանելով՝ Ինձ պիտի իբրես կոչե՛ս բանաստեղծ...*

*Իսկ իմ ինեթօրոր դիմացկունությանն Անվանեմ ես կյանք...*

*... Տրմա թվում է, Թե միլիոն րարի առաջ է եղե՛լ, Երբ ինեթ պարսանիս Քեզկից թոցրած մի սուր թաշկինակ Բարձի երեսի շոր է դարձրել Եվ խոսրունեայի բուրմունքից արբած՝ Այնպե՛ն է շշմե՛լ հուզի՛ջ մի գիշեր... Որ թերսահալար գլուխը նրա Անմահությանը հավասարազոր Մի եղենակսն քուն է սրաշարել...*

*Ու եթե հիմա, Նամնյն աշխարհի րիկնանց հեք մեկրեղ Գլուխ գլխի րան Բուրասրաններն էլ բորր դարերի՛ Չեն կարող, Երբեք, Ոչ մի հևարքով,*

*Վերժանե՛լ բու՛յրն այն լոյս-թաշկինակի, Որի վրա ես, Իմ սենրիմենրալ գլուխը դրած, Քնե՛լ եմ մուշ-մուշ...*

*Իսկ առավորյան Արթնացել այնպես վե՛հ ու շիտթված, Ասես՝ այդ գիշեր Ի լուր ամենքին՝ Ինձ կարգե՛լ էին մի նոր րիրակալ, Որ ինամարկե՛ն... Ո՛ղջ րիեզերքին:*

**ՁՄԵՌԱՅԻՆ ԷՔՍՊՐՈՍ**

*Չյունն է փաթի՛լ-փաթիլ հանդարտորեն իջնում, Ագռավները ակված կուչ են եկել ծառին... Մովն ու ցու՛րբն են, ակշու՛շր, ակբանեյին կյանքում, Ու վա՛յ նրանց՝ ոլթեր րանիք չունեն գլխին...*

*Մերկ ճյուղերին րիտու՛ր, սուսիլ-փուսիկ շարված Այս ինեղձերի րեսքից մղկրում է հոգիս... Նևա՛ր լինե՛ր՝ թախժուր կրոցները սրանց Անհուն գորովանքով կսեղմե՛ի կրծքիս...*

*Ախր սրանք ընքո՛սար, այն րոկուն հալթերն են, Որ մեր այս փու՛ջ կյանքից երբեք գութ չեն հայցել... Ու թե՛ն շա՛ր հաճախ զզված կոկրում են, Բայց էլի չեն՝ փորձում հայրենիքը լթել...*

**ԽՈՍՏՈՎԱ-ՆՈՒԹՅՈՒՆ**

*Վակառակ՝ կյանքի Պարսարթակուրակ կարգապահության*

*Սողակուն փաթթի՛... Եվ ընդդեմ՝ բորր՛ր Նորարարական թաքստոցներից Ծահճաներների Նաշվեկշռված Կամքի վաճառքի՛...*

*Նոցնած ես քազում, Գոռոգաբարո, Երեխայական դերերից իմ ջիևճ՝ Մի մրացրիվ, Դիմակաթափված, Նորիզունահար հայացքո՛վ վճիտ՝ Ես հա՛նձն եմ առնում, Որ անանձնակսն ճակարագրիս Ողորմած ձեռքին Եղել եմ միայն Գողորիկ հոյգերից Միրո՛վ շաղախված Մի պա՛րզ խաղալիք:*

*Բայց արժե՛՛ ասել, Որ ինչ ձեռքից էլ Բախար-չար մանկուկը Խեղճ խաղալիքիս ապչեցնելու Միրասպառ րեկչով Նույժ սարսափելի վիե՛ր է նեպե՛լ, Աջք կորսացնող մթոթյան մեջ էլ՝ Լուցկի՛ թափ րալի՛ն՝ Պիտի րեսներին, Որ անասպական Կողմնացույցի պես՝ Դարձյա՛լ աշխարհի Բոլոր՛ր կողմերն էլ Ըիշր եմ ցույց րալիս:*

*Իսկ հարվածներից ակզգայացած Նայացքիս մաշկված Մերկություն վրա՛՝ Անդա՛րձ որբացած Երսզանքները ինելազարներին...*



*Վարակություն ես չեմ ընդունել, Թե ենթարկվել եմ՝ միայն իմ խղճին... Նարպությունից ես չեմ թթացել, Աղբարության մեջ չեմ դարձել ճղճիմ...*





# ՊԱՌԱՎ ՓԵՐԻՆ

## Նվիրվում է համահեղինակ ընկերոջս՝ Էդուարդ Սարգսյանի մոր՝ ժենյա Դավթյանի հիշատակին

Պառավ Փերին մթերքներ գնելուց հետո շտապեց տուն: Տաքսի կանգնեցրեց տան մոտ և սկսեց գրպանները արպտել: Վարորդն անհամբեր մի քանի անգամ արքայադատորով հռնդացրեց շարժիչը: Պառավ Փերին բավարար մանրադրամ չգտնելով՝ թղթադրամ հանեց: Մի քիչ ավելի թողեց: «Էհ, Աստված նրա հետ», - քթի տակ շշուկեց նա ու դեպի տուն տանող այգու անշուք դռնակով մտավ ներս: Այգին բուրում էր: Բազմերանգ ծաղիկների երկար շարքերը նրա հարստությունն էին: Միանգամից շատ ծաղիկ Պառավ Փերին չէր վաճառում: Առավոտյան կանցներ շարքերի արանքներով և կընտրեր հենց մոր բացվածները՝ կոկորդ ճեղքած, լեզվիկներով նման դուրս ցցված ծաղկաթերթերով ծաղիկները: Մինչև հասցներ շուկա, մի քիչ էլ կբացվեին, յուրաքանչյուրը՝ ոնց որ գինով լցված սլացիկ բյուրեղյա գավաթ, անչափ գայթակղող՝ իր չբացված խորքերի խորհրդավոր մզութային: Ծաղիկ վաճառող հայ է հույն կանայք կնախանձեին Պառավ Փերին: Նրա ծաղիկները միշտ էլ թարմ տեսք ունեին և միանգամից ուշադրություն էին գրավում: Եթե անգամ գնորդը կանգնած լիներ մեջքով, միեւնույն է, կզգար ու կշրջվեր: Պառավ Փերին երբեմն կասեր մի հատիկ նախադասություն.

- Իմ ծաղիկներն արքայադստեր համար են անցնել: -  
- Ճիշտ որ, - ժպտալով համաձայնում էին և առանց սակարկության գնում նրա ծաղիկները:

Ամեն օր նա շատ արագ կվաճառեր իր մի քանի ծաղիկները և ծաղիկ ծախողների թունավոր հայացքների տակ կվերադառնար տուն:

Հիսունչորս տարեկան էր Պառավ Փերին, բայց այգու անընդհատ աշխատելուց կորացել էր մեջքը, թվում էր՝ թեւերը երկարել, մոտեցել էին գետնին: Միշտ երկար փեշերով սեւ շորեր էր հագնում՝ սեւ, խումացած գլխաշորը կզակին փողկապած: Դեմքը լրիվ կնճռապատ էր, ինքը՝ փոքրամարմին: Այս ամենի պատճառով շուկայում նա հայտնի էր որպես Պառավ Փերի: Բացարձակ չխոսկան էր, թերեւս դրա համար շատերը չէին սիրում նրան: Բան է, եթե միանգամից մի քանի նախադասություն ասեր իրար ետեւից, բարձրաձայն կբրբռար՝ ամաչելով իր չաչանակությունից: Թեղոսիայի հայերից շատ քչերն էին բացում նրա դուռը: Եթե հայերից որեւէ մեկը հիշում էր նրան, ներկաներից ոմանք, իրենց ձայնին զարմացակալան երանգներ տալով՝ չարախնդուն էին.

- Էդ պառավը դեռ ո՞րք է: Օ՛, նա մեզ բոլորիս կթաղի:

Եվ դա որոշ իմաստով ճիշտ էր: Երբ նա հայի մահվան լուր էր առնում, թաղումից հետո միայնակ գնում էր գերեզմանատուն՝ տանելով իր հետ այգու ամենալավ ծաղիկները, այցելում մեռնողի գերեզմանին, թարմ գերեզմանաթմբից քիչ հեռու ծաղիկներ դնում և ոսկրոտ ձեռքերը կրծքին՝ մրմնջում. «Թող Աստված հոգիդ լուսավորի, Փերիկիդ էլ քիչ մնաց»:

Պառավ Փերին տղան առաջին անգամ դատվեց, երբ տասնութ հազիվ էր լրացել: Խուլիզանություն էր արել: Երկուսուկես տարի նստեց և երբ ազատվեց ու վերադարձավ տուն, թթված էր աշխարհի վրա.

- Մարդն իրենից ոչ մի արժեք չի ներկայացնում, - հարբած գոռում էր նա մոր

վրա: Պառավ Փերին այդ պահերին սենյակի մի անկյունում կուչ գալով՝ մտքում ախուլախ կաներ. «Խեղճ տղա, էդ ի՞նչ օրի ես... Ես եմ մեղավոր, որ քեզ լույս աշխարհ բերի...»:

Երկրորդ անգամ դանակահարության համար տղան հինգ տարի նստեց ու նորից ազատվեց: Սակայն դեռ մեկ տարի էլ չէր անցել, երբ մի օր յոթ միլիցիոներներ խուլեցրին Պառավ Փերին տուն: Նրան ասացին, որ որդին մարդ է սպանել: Երկու օր այգու և ուտանը դարան մտան: Պառավ Փերին Աստուծոն աղաչեց, որ տղային այս անգամ պատժից ազատի, թող դժոխք գցի, միայն թե չծերբակալեն նրան: Բայց երրորդ օրը միլիցիոներները ծխախոտով լցված տունը և կոխկրտած մարգերով այգին թողեցին ու հեռացան: Սիմֆերոպոլում մի աղջկա տան մեջ բռնել էին տղային: Մոր սիրտ է՛ անհոծեց անծանոթ աղջկան...

Ձերբակալությունից քսան օր չանցած հեռագիր ստացավ Սիմֆերոպոլից: Երեւի դատին են կանչում՝ մտածեց նա:

Գորշ օր էր: Ծղոտե գամբյուղի մեջ դնելով տղայի տաք շորերից, հացից, երշիկից, այգու խաղողից՝ հասավ Սիմֆերոպոլ: Գնաց բանտ: Տարան պետի մոտ: Պետը հենց տեսավ Պառավ Փերին՝ այդքան փոքրամարմին, կուչ եկած, ծանր շնչելիս, անհանգստացավ և սիրալիկ արթն առաջարկելով՝ կանգնեց կողքին ու երկար խոսեց: Ասաց, որ տղային ճանաչում էր դեռ առաջին դատվածությունից, որ այն ժամանակ նա լավ չէր պահում իրեն, բայց երկրորդ անգամ դատվելուց հետո մի տեսակ խաղաղվել էր՝ հանգիստ էր ու կարգապահ: Ինքն էլ մարդ է՝ տեսավ ու գնահատեց: Կանչեց իր մոտ, զրուցեց, ասաց՝ ամեն մարդ էլ ընդունակ է սխալվելու, որ կարելի էր թեկուզ ուշ՝ ճիշտ ուղու վրա կանգնել: Բայց տղան քնծիծաղեց և ասաց.

- Ես ուղու վրա եմ, դու քո գործին կաց:

Բանտի պետը, ասես արդարանալով, էլի խոսեց, ասաց, որ չնայած տղան արտաքուստ հնազանդ էր թվում, սակայն հայտն էր ըմբոստ խառնվածք ուներ, իսկ վերջերս շատ էր ինքնամոտի դարձել, ներսը՝ ոնց որ քարեր լցրած... Պառավ Փերին, ակնապիշ հայացքը բանտի պետի խակե փողկապին, մեկ լցվում էր երախտագիտությանը՝ զգացված բանտի պետի հարգալից վերաբերմունքից, մեկ այդքան ընդգծված ուշադրությունից՝ տազանապալի կասկածներ էին պատում նրան, որից սիրտը նվաղելով թպրտում էր...

Վերջապես բանտի պետը լռեց, նայեց ժամացույցին, խորը շունչ քաշեց և խոսքին ցավակցական դադարներ տալով՝ ասաց, որ իր համար անտանելի դժվար է... սակայն ի պաշտոնե ստիպված է հայտնել նրան ճշմարտությունը... այն, որ անցած գիշեր... որդին ինքն իրեն իր վերնաշապիկով կախել է... Տնքաց Պառավ Փերին, ասես առաստաղի ծանր ջահը շրխակաց գլխին... Եկան և տարան նրան, իսկ երեկոյան կողմ տղայի դիակը ինքը Թեղոսի տարավ: Պետը մեքենա տվեց:

Անցել էր երկու տարի, ինչ թաղեց բանտում ինքնասպան եղած միմուճար որդուն: Շատ չէին ցավակցողները, բայց նա միիթարվեց, երբ տղայի վատ համբավ ունեցող ընկերները փող հավաքեցին ու պատվիրեցին գերեզմանի համեստ գրանիտը, վրան փորագրել տալով. «Սիրելի մորից և ընկերներից»: Ու հիմա, շուկա գնալուց առաջ, Պառավ Փերին ավելի հաճախ ծաղիկներ կտաներ հոր և որդու՝ կողք-կողքի գտնվող շիրմներին: Կմաքեր գրանիտների վրա նստած փոշին և տեղ-տեղ մամռակալած քարեխաչերը համբուրելով՝ մորից կմրմնջար նույն խոսքերը. «Թող

Աստված հոգիներդ լուսավորի: Շուտով ես էլ ձեր կողքին կլինեմ»:

Այդ օրը, երբ Պառավ Փերին մթերքներով լի գամբյուղը ձեռքին տաքսուց իջավ ու մտավ այգի, սովորականի պես մոտ վազող շանը չէր, իսկ շունը գարնանալու փոխարեն, խռովեց, թրջեց ծառի տակ և վազեց դեպի բունը: Պառավ Փերին անտարբերության պատճառն առավոտյան ստացած նամակն էր, որից նրա ներսը տակնուվրա էր եղել: Նամակը շուկայում ճագար ծախող տղան կարդաց և պարզվեց, որ որդին Նովոսիբիրսկում կին է ունեցել: Այդ կինը գիտի տղայի մահվան մասին և ուզում է այցի գալ Պառավ Փերին: Նամակում գրված էր նաև չվերթի օրն ու ժամը: ճագար ծախող տղան ասաց, որ, ըստ այնտեղ ըշված ամսաթվի, այդ կինն այսօր է ժամանելու և ժպտալով ավելացրեց, որ եթե փոստատարը մի օր էլ ուշացներ, ապա նամակը Պառավ Փերին համար հենց այդ կինը կարող էր կարդալ: Հետո տղան մատիտով ծրարի վրա Նովոսիբիրսկից Սիմֆերոպոլ թռիչքի տեղության վերաբերյալ մոտավոր հաշվարկ կատարեց՝ ավելացնելով Սիմֆերոպոլից մեքենայով Թեղոսիա հասնելու ժամանակը նաև: Պարզվեց, որ այդ հարավ սիրող սիբիրուհին երեկոյան կողմ կլինի Թեղոսիայում:

«Ո՞վ է այդ կինը, ինչո՞ւ է դարձել ապագա չուրեցող մարդու կին, - Պառավ Փերին կասկածներից տանջվում էր, - երեւի փչացածի մեկն է կամ էլ հարավի կյանքին նախանձող հյուսիսից: Եթե զագուսն գրանցված են՝ կգա, կտեսնի այգին, թեթևալիկ շարժումներով հոտ կքաշի ծաղիկներից, մի քանի ողկույզ խաղող հուս կտա, կնայի տան ներսը, ապա այգու զուգարանը մտքով թարմ տեղ տեղափոխելուց հետո, անպայման մտքին կդնի սեփական իրավունքներ պաշտպանել: Դե եկ ու ձեռք քաշի մատուռ դարձած տնից և այնքան սիրելի ծաղիկներից, երբ ինքը ծովափ եկած հանգստացողներ պահելուց տարիներ ի վեր հրաժարվում է, ինչ է՝ չկոխկրտեն այգին»:

Սկզբում նա չարացավ, պատրաստ էր փետտելու այդ անծանոթ կնոջ շեկ մագերը, սակայն կամաց-կամաց հաշտվեց փաստի հետ՝ թող գա, հետո կերեւա, թե

ինչ է ուզում: Նա տան ներսը կարգի բերեց, ծաղկավոր սփռոց գցեց սեղանին, լվացարանի կոնքը մաճուկով մաքրեց, ամուսնու և որդու պատից կախված լուսանկարների փոշին մի անգամ էլ սրբեց ու թրջած լոբին դրեց կրակին: Հետո թփով տուժա փաթաթեց: Դա էլ դրեց կրակին: Վերջին հաշվով հյուրը տղայի կինն է լինելու, թող որդին ամոթով չմնա: Ապա լուսանկարների ալբոմը սեղանին դնելով՝ նստեց ու սպասեց:

Մթնեց: Տղման արդեն պատրաստ էր: Լոբին էլ վաղուց եփել էր: Պառավ Փերին դուրս եկավ տնից, մի կտոր երշիկ գցեց շանը և կանգնեց այգու դռնակի մոտ: Ներքեւում ծովախորշն էր՝ քաղաքի լույսերի մեջ: Ծովի սեւության վրա կախված լուսինը մինչև ավարժաբան պատկերն արահետ էր գցել: Պառավ Փերին ծնվել ու մեծացել էր Թեղոսիայում: Կոտորածից փախած ծնողները շուտ մեռան: Փոքրիկ որբ Փերին պատերազմի ժամանակ էլ գերմանացիների վրա ծաղիկ էր ծախում: Հետո հեռավոր ազգականներն ամուսնացրին նրան: Ամուսնու հետ տուն շինեցին, այգի գցեցին և սիրեցին իրար, մինչև որ անհոյակ քաղցկեղը կպավ ամուսնուն, սարքեց կմախք և ուղարկեց այն աշխարհ: Պառավ Փերին իր կյանքը կենտրոնացրեց որդու վրա: Ամեն անգամ, երբ նրան մաքուր ու կոկիկ հագցրած, նկարչական դպրոց էր տանում՝ ճամփին միշտ երազում էր, որ նկարելու շնորհով օժտված որդին դառնա եթե ոչ Այվազովսկի, ապա գոնե նրա նման մի հայտնի ու մեծ մարդ... Բայց անհոյակ էր իր բախտը՝ տղան էլ ինքն իրեն ուղարկեց այն աշխարհը...

Կես ժամ այգու դռնակի մոտ կանգնելուց հոգնած՝ Պառավ Փերին գցեց սողնակը, մտածելով, որ երեւի թռիչքն ինչ-որ պատճառով հետաձգվել է: Սակայն չէր հասցրել շրջվել, երբ նկատեց դեպի իրենց փողոցը ծովող լուսարձակների լույսը: Պառավ Փերին աչքերը կուրացնելով՝ լույսը մոտենում էր՝ մերթ մոթթերի ու այգիների ծառերը, մերթ փողոցի փոսերը լուսավորելով: Տաքսի կանգնեց հենց իր դռնակի մոտ: Պառավ Փերին սիրտը թպրտաց: Նա աչքերը չռած փորձում էր մթության մեջ տեսնել իրեն այցի եկած կնոջը: Տաքսու վարորդը վառեց ներսի աղոտ լույսը: Հետեւի նստատեղին՝ գեղեցկադեմ, մագերն ուսերին թափած կնոջ կողքին մի փոքրիկ տղա շվի էր փչում: Փերին իրեն կորցրեց, թափով բացեց դռնակն ու վազեց դեպի մեքենան: Բացեց երեխայի կողմի դուռը, պուկեց նրան նստատեղից և գրկին սուրաց այգու դռնակով: Երեխան վախից ճչաց: Մայրը ետեւից հուսակտուր ձայն տվեց.

- Սպասե՛ք, մայրիկ, այդ ի՞նչ եք անում: Պառավ Փերին հասավ պատշգամբ, երեխային դրեց գետնին՝ պայծառ լույսի տակ: Երեխան, շվին կրծքին սեղանած, լաց եղավ: Պառավ Փերին ոտքերը թուլացան: Կենդանի որդին էր՝ փոքր ժամանակ. ձվածե փոքրիկ ականջները գլխին կպած, քիթը, խիտ, սեւ մագեր... Փոքրիկը մորը տեսնելով՝ փախավ դեպի նա:

- Դուք նրան սարսափելի վախեցրիք, - քաղցր ժպտաց կինը:

Վարորդը ծիծաղելով բերեց ճամպուրկները: Հանկարծ Պառավ Փերին մեջ ցանկություն առաջացավ տաքսու վարորդին պատմել իր ամբողջ կյանքը: Կիտրասիրի նրան իր քաշած խաղողի օղուց և կպատմի՝ սկսած այն օրից, երբ թռվունց սիրունիկ աղջնակ էր ու կորցրեց ծնողներին, հետո կասի՝ թե ինչու՞ տասնյակ ուզողների մեջ հավանեց հանգուցյալ ամուսնուն, որին սիրեց: Կպատմի, թե ինչքա՞ն էին երջանիկ, երբ տղա ունեցան... Բայց անհոյակ ու անտեր մահը տարավ երկուսին էլ, մեկին՝ կոկորդի քաղցկեղից, մյուսին... էլի քաղցկեղից, հույսի քաղցկեղից... Ինքը նրան չա՞մ բան ուներ պատմելու... Այո: Կպատմի: Կամ ինչու՞ չպիտի պատմի: Չէ՞ որ բոլորն էլ ամեն օր սրան ու նրան մի գլուխ իրենց կյանքն են պատմում: Բայց Պառավ Փերին լեզուն կապ էր ընկել, իսկ աչքերը լցված էին... Լացը կտրած երեխան, մոր գրկին սնգսնգալով, նրան էր մայրու: «Չէ՛, բալեն, չխոսկան տատ ունես», - մտածեց Պառավ Փերին և այգուց մի գիրկ գեղեցիկ ծաղիկներ անխոս պոկելով՝ դուրս եկավ փողոց ու կորավ մթության մեջ...

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ









**ԳՐԻՇԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ**

**ՄԹԱԶՈՐ**

Մի զարհուրելի խոր ձոր կա մթին,  
Գորիսից վերև՝ լեռների գրկում,  
Ու թե հավաքանք հին գրույցների՝  
Չարքեր են այնտեղ վաղուց բնակվում:

Նրա եզրերին՝ կանգնած սահազրո՜  
Ժայռեր կան՝ շարված հսկաների պես,  
Եվ թվում է թե երկինքը լազուր  
Նրանք են պահում այդքան բարձր ու վեա:

Թե փորձեք ձորին վերելից նայել՝  
Ոչինչ չեք տեսնի դուք բացի ամպից,  
Որը ճանաչում է արևի փակել,  
Դարձել լույս-մութի մի սահմանագիծ:

Մոայլ խավարն է այդ ձորի րեղը,  
Անգամ գեղն էլ չի այնտեղ երևում,  
Կարծես աշխարհի ողջ գիշերները  
Ժողովվել են այդ սահավոր ձորում...



Իսկ լեզուներ այս է ասում.  
Մեզանից առաջ՝ դար ու դարեր,  
Բնակվում էր Նին Գորիսում  
Չբնաղ աղջիկ մի թխսներ:

Մորից գրկված զավակ էր նա,  
Կույր գուսանի դուստր անգին,  
Որ գթասիրտ իր հոր նման  
Նավաբով էր նայում կյանքին:

Արարիչն այդ լույս աղջկան  
Անհուն սիրով էր արարել  
Ու կախարհից գեղեցկության  
Ողջ թովչանքը նրան տվել:

Երբ ժպտում էր, եղևնական  
Վարդեր էին շուրջը բացվում,  
Եվ լեռնաշխարհը հայկական  
Իրենց անուշ բույրով լցնում:

Երբ փրկում էր, փրկում մեկից  
Ու լաց լինում նա մեղմաբար,  
Անձրեան իսկույն լուրջ երկնքից  
Մարգարտաշար թափվում էր վար:

Նա ապրում էր մարդկանց վշտով,  
Նրանց խինդով ուրախանում,  
Այդ աղջկա մասին շուրջով  
Ամբողջ Սյունիքն է իմանում:



Պարմում է սակայն լեզուները ցավով,  
Թե ձորի խորքում դարանակալած,  
Մութ մարդիկ էին ապրում դարերով  
Դաժան դեռերի կերպարանք առած:

Չարի հեղ էին լույս աշխարհ եկել  
Եվ պարսպարվել քարանձավներում,  
Կույս աղջիկներին միշտ առնանգել,  
Սարսափ փարսածել Սյունյաց  
աշխարհում...

Եվ սհա մի օր նրանց տուն մտան  
Մարդակերպ դեներն այդ հրեշավոր,  
Խլեցին հորից հրաշք աղջկան,  
Փախցրին, փարսան ձորն անդեղախոր:

Նայրն անհուն ցավից ավանդեց հոգին՝  
Տանելով իր հեղ վիշտն իր անդարնան,  
Աշխարհում թողած մի կորած աղջիկ,

Ինչպես ծովն ընկած մի լույս աղանակ...



Ասում են, թե այն աղջկա մրմուռից,  
Անհուն վշտից մթնում է ձորն սհավոր,  
Մարդիկ ստկում, սարսափում են  
Կանաձից  
Ու այդ պահից այն կոչում են Մթնաձոր:

Իսկ մշուշը, որին այնտեղ վերջ չկա,  
Որ հավերք է իջեռանել այդ ձորում,  
Ասում են, թե հառաչն է այն աղջկա,  
Որ մինչ այսօր սգում է իր անձավում:

Երբ կայծակն է երկնի կուրծքը ակոսում,  
Այդ ցասումն է նրա ցոլուն աչքերի,  
Երբ անձրեւ է հաճախ րեղում Գորիսում,  
Այդ էլ նրա լացն է անլուր վերքերի:

Մթնաձորում ամեն եկող նոր փարի,  
Երբ արեւն է մի պահ ամպի հեղ խաղում,  
Ասում են, թե հավերժորեն կենդանի՝  
Այդ աղջիկն է իր քնի մեջ ծիծաղում...

**ՍԵՎ ԼԻՃ**

Իշխանասար լեռան լանջին  
Կա մի լճակ գեղեցկարես,  
Նարակը՝ սեղմ, ինքն՝ անչափ ջինջ,  
Նակարկան՝ ձագարի պես:

Նրա շուրջը ծաղկունքի ծով  
Ու գով բուրմուսը է ողջ ամառ...  
Ջեփյուռաշունչ այիքներով  
Նա հովիտն է պահում դայար:

Ինքը՝ լազուր, շուրջը՝ սարաւ,  
Ինչպես շրջած կապույր վրան,  
Կարծես երկնից պոկված մի մաս  
Ընկել է այդ լեռան վրա:

Դարեր ի վեր այդ լիճը մով  
Չովացրել է սարդորին,  
Գառ ու մաքի ջրել սիրով  
Ամառային շոգ կեսօրին:

Բայց լիճը չէ, որ ինձ գերել,  
Խոռվել է հոգիս խաղաղ,  
Մի կսկիծ է ինձ պարտել՝  
Մի պարմություն արցունքաշաղ:

Ձեզ կպարմեն են այն մասին,  
Թե ինչու՝ է կոչվել նա Սեւ,  
Երբ դարերով շողը լույսի  
Մինչև լճի խորքն է հասել...



Երկու ջահել իրար տեսան,  
Իրար անկեղծ սիրեցին,  
Աղջիկն ասեւ՝ սարի շուշան,  
Տղան՝ բարդի պսոցիկ:

Նանդիսում էր ամեն գիշեր  
Սիրած գույքը լճափին,  
Բերում իրար զգվանք ու սեր,  
Ինչպես զարունն ու արփին:

Բայց հրճվանքն էլ ունի սահման,  
Նրա հեղ է վիշտն արթուն,  
Այնպես, ինչպես լույս ցերեկվան  
Միշտ գիշերն է հաջորդում:

Երբ աղջկա հայրն իմացավ  
Սիրո մասին այդ գույգի,  
Մի խակական դահիճ դարձավ  
Անզգա ու անհոգի...

Ու «անպարկառ» իր աղջկան  
Այնքան ծեծեց գայրույթից,  
Որ մեծացավ այդ լիճն անգամ  
Նրա թափած արցունքից:

Ներո ներեց մի մութ վրան,  
Ինչպես ժայռի մի խոռոչ,  
Որ սպանի սերը նրա՝  
Դեռ չծաղկած, դեռ բողբոջ:

- Նարմաք մարդու պիտի գնաս, -  
Թեղաց հոր ձայնը դաժան, -  
Ինչ էս կպել ինչո՞ւ ու փհաս  
Էդ հովիտին անարժան...



Բայց աղջկա սերը մաքրում

Ջորանում էր ինքնակամ,  
Ինչպես պարարտ հողի գրկում  
Սերմն է աճում ժամ առ ժամ:

Մինչդեռ փղան, գիշեր ու գօր,  
Ընկնված ու թեւաթափ՝  
Տվաբուր էր մարմնորդ,  
Միքով հասնում արփից արփ:

Տեսնում նրան՝ անօգ րեւթով,  
Դեմքը՝ մոայլ, աչքը՝ թաց,  
Գութ ջունեցող իր հոր կամքով  
Եղնիկի պես վանդակված:

Լճի արփին նայում էր նա  
Ու փարվում իր սրինգով  
Եվ մոռանում վիշտը մի պահ  
Իր սրբաբույն նվագով:

Բայց աղջիկը չէր երևում,  
Ասեւ երբեք չէր եղել...  
Խեղճն այն արփին՝ սերը սրբում,  
Ծով արցունք էր հեղեղել:

Երբ փղայի ցավն անհարկում  
Խորանում է օրեցօր,  
Մի գիշեր էլ փղան փրկում  
Լիճն է մտնում խեղճօրոր:

Ու լողալով ուզում է նա  
Նստնել արթ դիմացի,  
Որ աղջիկն էր այրվում մեռալ՝  
Առանց ծիսի ու բոցի:

Բայց կենդանում այդ լճակի  
Խորասուզվեց խեղճ փղան,  
Առանց թաղման ու թափորի  
Լիճը դարձավ գերեզման...



Նե՛նց ի կսկիծ այս պարմության՝  
Անվանեցին նրան «Սեւ լիճ»,  
Անուն՝ ինչպես գույնը մահվան,  
Ինքը՝ հովվի սիրտ պես ջինջ:

Իսկ որ լճի ջուրն աղախամ  
Չի՛ քաղցրանում դար ու դարեր,  
Այդ արցունքն է այն աղջկա  
Լճում աղի շերտեր թողել:

Եվ արինգն են գրել մի րեղ  
Նեռու՜ հեռու մի գյուղակում,  
Ասում են թե՛ երկար ու նեղ  
Անցք է բացված լճի խորքում:

Երբ կեսօրին ամառային  
Մաքիներն են ջրի վազում,  
Ասեւ՝ փնտրում են փղային,  
Որին աղջիկն է դեռ սպասում...

**ՀԱՐՍՆԱԶՈՐ**

Արամազդ լեռան փեշերի վրա  
Տաթևն էր փռված հազար ծիսակի,  
Բայց մոայլված էր հայացքը նրա  
Իշխանության փայլ պարսկական խակի:

Թալանին փրված մորսցրով անբավ՝  
Պարսիկներն էին մտնում ամեն րեղ,  
Ծուրջն իրենց սիրում փառասպանք ու ցավ՝  
Ավերակելով այդ գյուղը շքեղ:

Չկար ոչ մի տուն, որ վիշտ չունենար,  
Որ միշտ չունենար մահն իր աչքի դեմ,  
Ո՛վ չարիքի դեմ կանգնած կմնար,  
Երբ այդ չարիքը սահման չգիտեր:

Դեռ Դավիթ Բեկը չէր հասել Տաթև՝  
Մարդկանց փրկության կայծակը ձեռքին,  
Նրան էր սպասում հույսով անհամբեր  
Տառասպանի մեջ փակվող մի երկիր:

Արամը էր, ասեւ, ներկված ամեն բան,  
Երկինք էր հասնում հառաչը հայոց,  
Դարերից եկած գյուղն այդ պարմական  
Դարձել էր կարծես մի գերեզմանոց...



Ու բացվում է լույսը կրկին  
Սյունյաց քաղցր լեռնաշխարհում,  
Մահեր տեսած մարդկանց հոգին  
Նորից վիշտն է լու՛ր պարտորում...

Բայց թողնում են գյուղը հանկու՛րծ

Ջորախմբերը պարսկական,  
Տանում ողջ գանձերն ախարած,  
Նսնե՛ գերված մի աղջկա:

Ու դնելով ջորու վրա  
Այդ կարկամած գեղեցկուհուն,  
Նրան իրենց խակի համար  
Իրեն ընծա՛ հարձ են փակում:

Եվ ձգվում է թավուրներով  
Ջորիների երկար շղթան,  
Գեղը ձորում խո՛ւ վշտոցով  
Բախտն է սգում ինչո՞ւ աղջկա...

Իսկ ծառերը վերջին անգամ,  
Նարսազարի ձեռքերի պես,  
Վշտամորմոք այդ աղջկան  
Գրկից գրկն են առնում կարծես:

Իր հայացքով մեղմ ու վճիպ  
Նա նայում է խորունկ ձորին,  
Ծաղկում է մի դատը ժայիպ  
Նրա դայուկ, ջրնաղ դեմքին...

Կյանքն է հիշում բերկրանքով լի...  
Որ անցկացավ ինչպես երագ,  
Եվ թխադեմ այն փղային,  
Որը դարձավ սեր ու մորազ:

Գարնանն անցած սիրտը բացե՛ց՝  
Տոգին փայլով իր սիրածին,  
Նույն գարնանն էլ նա կշակվե՛ց՝  
Կարծես հասած իր մորազին:

Օրսար երկիր մեկնեց փղան,  
Որ վաստակած փող ու բարիք՝  
Եր գա օջախն իր հայրական  
Եվ անի մեծ մի հարսանիք:

Նրաժեշտի վերջին պահի  
Իր խոսքումն է հիշում նորեն,  
«Մեզ մահն անգամ չի բաժանի,  
Քեզ կապասեմ ազնվորեն»:

Մակայն հիմա գերված է նա՝  
Իր վեհասպան աշխարհի պես,  
Ու խոհերն են փակում նրան՝  
Նշտներով հոգին հրկեզ:

Երբ հիշում էր՝ խանն արևախում  
Իր հեղ սիրի մահիճ մարնի,  
Սիրուն այնու չէր բարսախում,  
Ուզում էր թե վշտից պայտի:

Երբ արեւն էր նայում նրան՝  
Իր աշխարհի հրաշագորդ,  
Մորից խլված որբի նման  
Ծովսևում էր կարտրը խոր:

Մինչդեռ գյուղին կից անբառով  
Քարավանն է շարժվում կրկին  
Եվ գառիվեր կամաններով  
Մորենում է ձորի եզրին:

Ու վճիռը գալիս համառ,  
Ջորանում է նրա հոգում,  
«Լավ է մեռնել ազնվաբար,  
Քան թե ապրել մի շան գրկում»:

Նայում է նա վերջին անգամ  
Իր դեմ բացված անբառ ձորին,  
Ու շշնջում. «Քեզ մոտ կգամ,  
Իսկ սիրելիս թո՛ղ ինձ ների»:

Ներո՛ մեկնն ուրնում թեթե  
Պախրայի պես իր աշխարհի,  
Իրեն նեկում անդունդը սեւ,  
Որ իր մահով հաղթի խակին...

Բայց աղջկա հագի շորը,  
Օղապարիկ դարձած՝ փթվում,  
Նսսանում է նրան ձորը  
Եվ աղջկա կյանքը փրկում...



Դարե՛ր են անցել, այրունո՛ր դարեր,  
Իրենց հեղ փարեյ գրկանքները ծով,  
Բայց մինչև հիմա այդ ձորն անարեւ  
Նրա պարվին է կոչվում Նարնաձոր:

Պնդում են նսեւ, ինքն էլ շա՛ր հաճախ,  
Ծուրթեշուրթ անցած այն կարծիքը հին,  
Թե՛ աղջիկները ամենաջրնաղ  
Տաթև գյուղում են բնակվում կրկին...

**Մշակումներ՝  
Տիգրան Գրիգորյան**

# ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ.

## «Պոեզիայի աշխարհում ինչպիսի գաղափարական տեղաշարժեր ու հոսանքներ էլ հայտնվելու լինեն, բանաստեղծության ակունքը միշտ էլ մարդկային սիրտն է մնալու»

Գրականության զարգացման ընթացքի, բանաստեղծի կայացման եւ գրական ժառանգություն թողնելու մասին է զրույցը բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի հետ:

**Էջ 1** – Պարոն Գրիգորյան, ե՞րբ եք գրել Ձեր առաջին բանաստեղծությունը:

– Նախ՝ նշեմ, որ բանաստեղծելու իմ ունակությունը մայրական գեներիցս եմ ժառանգել: Քեռիս՝ Գրիշա Մանուչարյանը, շնորհալի բանաստեղծ էր: Մայրս բանաստեղծական օժտվածություն ուներ եւ երիտասարդ տարիքում ստեղծագործելու որոշակի փորձեր արել է: Մայրական տառս ժամերով բանաստեղծություններ ու պոեմներ էր արտասանում. մինչեւ այսօր էլ չգիտեմ, թե որտեղից եւ երբ էր հասցրել այդքան անգիր սովորել: Ստեղծագործելու եւ կարդացածս հեշտությամբ մտապահելու ծիրքն ինձ, անշուշտ, մայրական կողմից է ինձ փոխանցվել, բայց միայն դա բավական չէր լինի, որպեսզի ես դառնայի այն, ինչ կամ: Զգոր երեւակայությամբ ուղեկցվող անալիտիկ մտածողությունս, որ շնորհիվ է ինձ աշխարհընկալման լայնահունություն, միանշանակ՝ հայրական կողմից եմ ժառանգել: Երկու ծնողներիս գեներից, կարելի է ասել՝ ռեզոնանսի վերածված, ինձ եւ փոխանցվել զգացմունքայինությունս եւ կրակոտ խառնվածքս, որոնք, ցավոք, համարյա միշտ էլ գրոյացրել են այս կյանքում գոյության խաղաղ մի ձեւ գտնելու իմ բոլոր հնարավորությունները:

Վերադառնալով Ձեր հարցին՝ ասեմ, որ առաջին բանաստեղծությունս՝ «Գիշերօթիկ» վերնագրով, գրել եմ առաջին դասարանում, երբ տակավին ճոր էի գրածանաչ դարձել: Մեր ուսուցչուհին՝ Լորետա Խանգուրյանը, տնային հանձնարարություն էր տվել, պիտի գիշերօթիկ դպրոցի մասին ինչ-որ բան գրեինք: Կիրակի օրերին դասերս տանն էի սովորում: Երբ անցա գիշերօթիկ դպրոցի մասին խոսք գրելուն, մայրս, որ տնային գործերի արանքում հետեւում էր իմ «շարադրության» ընթացքին, նկատեց, որ որոշ տողեր չափածո են ստացվել: Եվ նա, ոգեւորելով ինձ, հորդորեց, որ ասելիքս բանաստեղծական խոսքի վերածեմ: Փորձեցի, եւ ստացվեց: Մի երկու դրվագում էլ մայրս օգնության ձեռք մեկնեց: Առաջին գնահատողը հենց մայրս եղավ, հետո՝ ուսուցչուհիս, հետո՝ ողջ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը...

Մինչեւ գիշերօթիկ դպրոցի փակվելը, մոտավորապես հինգ տարի, իմ ձեռագրով «պատի թերթում» գրված այդ բանաստեղծությունը փակցված էր մեր դպրոցի ճեմարաններից մեկում: Այդ բանաստեղծությունը գրելուց հետո, կարելի է ասել, 17 տարի շարունակ ոչինչ չեմ գրել:

– Մասնագիտությամբ ֆիզիկոս եք, թվում է, գրականության հետ գրեթե աղերսներ չունի Ձեր մասնագիտությունը:

– Չէի ասի: Այսօրվա երկրային կյանքի սկիզբը միանշանակ աստղերի արարվելու պահից է դրվել: Միլիոնավոր համաստեղություններով տիեզերքի ի հայտ գալու ամենահավանական վարկածը, որ մեծ պայթյունն է համարվում, գիտնական-

ները մեզ հայտնի ու ենթադրվող ֆիզիկական երեւոյթներով են փորձում բացատրել: Կարելի է պնդել, որ Աստծո ողորմածությամբ տիեզերքի ստեղծմանը, արեգակնային համակարգի ու երկրագնդի արարմանը բնական գիտություններից առավելագույնս մասնակցություն է ունեցել ֆիզիկան: Իսկ մարդկային տարբեր խառնվածքների համակեցության պայմաններում արարվող երկրային կյանքին, ըստ իս՝ առավելագույնս անդրադառնողը նրա ճշմարտություններն ու օրինաչափությունները վերծանողը, հանրային կյանքն ուղղորդող «չվավերացվածը», «չբարձրածայնվածը» պատկերողը, կերպավորողը ու գեղեցիկ արվեստով այդ ամենը ներկայացնող գրականությունն է:

Այնպես որ թե՛ ֆիզիկան, թե՛ գրականությունը Աստծո արարումներին ուղեկցել են ուղեկցում են: Միայն մի էական տարբերությամբ. եթե տիեզերքում ի սկզբանե չգործեին որոշակի ֆիզիկական օրինաչափություններ, ապա, անտարակույս, չէր արարվի եւ մարդը. «... տիեզերքի զարդը, ամենայն կենսականի պսակը»: Ասել է թե՛ չէր լինի եւ գրականությունը...

Եթե գրականությանն ու ֆիզիկային վերաբերող հնչած դատողությունները նրանց աղերսների փիլիսոփայական տիրույթում կարող են ընկալվել, ապա երեւակայության անսպառ յուրաքանչյուր ճշմարտությունը բացառապես հնարավորություններով նրանք բավականաչափ մոտ են կանգնած միմյանց: Խորհրդային տարիներին մի այսպիսի տարածված արտահայտություն կար. «Անձ օձեթե՛ծ եծծե՛ծ»...

Եվ հետո՝ վերջին հաշվով գրականության «ուսումնասիրության առարկան» կյանքն է իր ամբողջության մեջ, որում ներառված են բնական եւ հասարակական բոլոր գիտություններն ու արվեստները: Դու պիտի բավականին զարգացած անձնավորություն լինես, շատ բան իմանաս, որ գրականության մեջ փորձես ուշագրավ ինչ-որ բան ասել:

Մի օր իրեն բանաստեղծ երեւակայող մեկը, որ, իրենց մահկանացուն կնքած որոշ բանաստեղծների ասելիքի կերպն ու շունչը նմանակելով, հիմնականում պարզունակ եւ տաղտկալի հուզական հայտարարություններ անելով է զբաղված, իր գրածներից ինչ-որ քառատող արտասանեց, որտեղ մոտավորապես հետեւյալ միտքն էր արտահայտում. իբր ինքը լույս է տալիս մոլորակի նման: Նրան ասում են. «Մոլորակը լույս չի տալիս, տիեզերքում աստղերն են լույսի աղբյուրներ հանդիսանում»: Քաղաքակիրթ ժամանակներում հիսուն տարուց ավելի ապրած այս մարդը զարմացած հարցնում է՝ մի՞թե մոլորակն ու աստղը նույն բանը չեն: Պատկերացնում եք: Եվ հոգեւոր մուրացկանի նկարագրով այս անձնավորությունը 21-րդ դարում գրիչ է վերցրել եւ իր տգետ ու ժանձող ներաշխարհի «խորհուրդը» փորձում է լսելի դարձնել մի սերնդի, որի մի սովոր մասը դեռ տարրական դասարաններից է աստղը

ու մոլորակը միմյանցից զանազանում:

Մի խոսքով՝ ոչ միայն արձակագիր, այլեւ անգամ բանաստեղծ դառնալու համար շատ բաներից պիտի տեղեկացված լինես եւ «մարսած» պիտի լինես նաեւ համաշխարհային գրականությունը, որպեսզի բարձրակարգ ընթերցողը «չողբա» տափակ ներաշխարհի ու լրդուկ աշխարհընկալումներիդ վրա...

– Ինչպե՞ս ստացվեց, որ տարիներ հետո սկսեցիք գրել:

– Միայն կյանքը որոշակիորեն ճանաչելուց հետո ինձ իրավունք վերապահեցի գրիչ վերցնել:

Իբրեւ գրող կամ բանաստեղծ հանրությանը ներկայանալու համար, մեծ ու խոր զգացմունքներով կյանքն ընկալելու օժտվածության հետ մեկտեղ, մարդկային առաքիճությունների անկեղծ ապրումներով, հուզաշխարհի նվիրված խիզախությամբ ազնվորեն անցած ճանապարհի պատմություն պիտի հետեւում թողած լինես, որպեսզի ընթերցողը, լուրջ մարդկանց հոգում արձագանք գտնող, նրանց գոհացնող, հասուն գործեր կարողանաս գրել:

Համաշխարհային գրականության անվիճարկելի հսկան՝ Շեքսպիրը, առաջին իր պիեսը գրել է քսանվեց տարեկանում:

Ես լուրջ չեմ ընդունում այն պատասխաններին, ովքեր, իրենց տարիքի ընձեռած վզարձանքներից հրաժարվելով, կյանքից մեկուսացած, զգայուն հոգու տեր երիտասարդի շինծու պահվածքով, շրջապատի կողմից չհասկացված, երբեմն էլ՝ մերժված կեցվածք ընդունած, սկսում են ստեղծագործել ու դա անում են այն տարիքում, երբ գրեթե ասելիք չունեն եւ լավագույն դեպքում ներկայացնում են հույզեր ու խոհեր, որոնք դասագրքային են, ապրված չեն. նրանց ներաշխարհից եկող անկեղծ խմորումների արգասիք չեն:

Իմ խոսքը բարեկեցիկ ժամանակներում ծնված սերունդների ներկայացուցիչների մասին է, եւ այն չի վերաբերում դժվարին ու դժբախտ ժամանակներում ապրած անցյալի տաղանդավոր պատանիներին (Դուրյան, Մեծարեց, Չարեց, Եսենին, Պետեֆի...):

Հատկապես մեր սերունդը կոմունիստական դարաշրջանի սերունդ էր. բոլոր առումներով: Եթե կոմունիզմի ուրվակահին խորհրդային իրականության մեջ որեւէ սերունդ հնարավորություն է ունեցել տեսնել, ապա դա միանշանակ անցյալ դարի 70-ականների մեր սերունդն է եղել: Մեզ բախտ էր վիճակվել ապրել խորհրդային համակարգի մի ժամանակաշրջանում, որտեղ արդեն ոչ միայն չբավարարվում, թշվառություն, այլեւ աղքատություն բառն անգամ անընկալելի էր: Իմ պատանեկության տարիներին ես, կարելի է ասել, վարդապույր երազների հավատով հենց բանաստեղծական կյանքով էլ ապրում էի: Տոնական այդ անգիտության մեջ ինձ մտահոգող ի՞նչ հարցերի շուրջ պիտի ես խորհրդածեի, որ ինչ գրեի: Իմ հոգին քնքուշ անուրջներով մշուշող աղջիկների հանդեպ ունեցած

զգացմունքներս մուլմիսկ անտեսված չէին մնում, որ գոնե երբեմն տխրության գիրկն ընկած, տրտմած սրտով հոգեվիճակիս մասին որեւէ բան ասելու ցանկություն ծնվեր: Չնայած այդ պարագայում էլ դժվար թե գրիչ վերցնեի ու «բախտս ողբայի», որովհետեւ միակողմանի, «անպատասխան սեր» ասվածը ես երբեւէ ոչ հասկացել, ոչ էլ ընդունել եմ:

Իմ կարծիքով՝ պետք է բավականաչափ շեղված լինեիր, որպեսզի խորհրդային մեր ապրած իրականության մեջ պատանի տարիքում «նստեիր» ու բանաստեղծություն գրեիր:

– Հայ եւ համաշխարհային գրականության մեջ ո՞ր գրողներն են եղել Ձեզ համար ուղենշային:

– Այդ հարցը ես մի քիչ այլ հարթություն կտեղափոխեի եւ կնշեի բանաստեղծներին ու գրողներին, ովքեր թե իմ ինքնաճանաչողության, թե աշխարհաճանաչողության, ասել է թե՛ ինքս ինձ գտնելու հարցում շատ մեծ դերակատարություն են ունեցել ու որոնց հանդեպ իմ կյանքի տարբեր փուլերում հոգեհարազատություն եւ պաշտամունքի հասնող հիացմունք են տածել՝ զմայլվելով նրանց թողած ստեղծագործական ժառանգությամբ: Այդ հեղինակներն էին Չարեցը, Բակունցը, Շիրազը, Բաֆֆին, Շեքսպիրը, Սեւակը, Ջեյ Լոնդոնը, Դոստոևսկին, Եսենինը, Բալզակը, Նարեկացին, Շուրիտովը, Բուլգակովը, Շուկշինը, Ռուբցովը: Թունանյանն իմ ներաշխարհում շատ ավելի ուշ որպես մարդ ու ստեղծագործող ընկալվեց: Չնայած տարիքս բավականին առաջացել էր, ու վաղուց բոլոր պատրանքներս ցնդել էին, բայց նա զարմանալիորեն իմ պատկերացումներում շարունակում էր ոչ իրական կյանքով ապրած կախարհական իմաստունի հեքիաթային խորհրդավորությամբ պարուրված մնալ:

Պիտի ասեմ նաեւ, որ նշածս հեղինակների ստեղծագործությունները կարդացել եմ՝ ըմբռնվելով, իսկ, ասենք՝ համաշխարհային գրականության այլ մեծերի՝ Գյոթեի, Բայրոնի, Դյուրանտի, Դյուրանտի, Ստեյնբլախի, Դյուրանտի, Դյուրանտի, Դյուրանտի եւ այլոց ստեղծագործություններն ընթերցել եմ պարզապես կլանված հետաքրքրությամբ:

Իսկ հատկապես պոեզիայի աշխարհում «կողմնորոշվելու» առումով՝ ձեր բառով ասած՝ ուղենշային, ինձ համար սկզբում եղել է Չարեցը, հետո՝ Շիրազը, հետո եղել են Սեւակն ու Եսենինը, հետո էլ՝ Շեքսպիրն ու Նարեկացին:

Պատանեկան տարիքում Չարեցի առնական պոեզիայի ոգեղենությամբ հիասուլուն եւ Շիրազի պատկերներով հեղեղված բանաստեղծական խոսքի տարբերով զմայլվելուց հետո, քսան տարեկանից սկսած, կախարհվածի պես գերվել էի Պարույր Սեւակի պոեզիայով:

Բավականին երկար ժամանակ Սեւակի ամեն մի ստեղծագործություն անսխալակական պայծառաստեսի շուրթերից հնչած անվիճարկելի մարգարեության պես էր իմ ներաշխարհում ընկալվում:

Երիտասարդ տարիքում, երբ գեղագիտական ընկալումներդ դեռ վերածված չեն լինում հստակ հայացքների, գեղարվեստական ճաշակը էլ ձեւավորման փուլում է գտնվում, ստեղծագործություններ արժեւորելու անկողմնակալ, տիեզերական ըմբռնումը դեռեւս թեզ հասանելի չի լինում, որպեսզի կարողանաս գնահատանքներիդ մեջ անկաշառ մնալ, մանավանդ եթե այդ «գործին խառնված է լինում» նաեւ տվյալ հեղինակի ստեղծագործական աշխարհի հանդեպ տածած սիրուց քո «որոշակի կուրացածությունը»: Այսօրվա պես հիշում եմ, երբ առաջին անգամ կարդացի Սեւակի «Առավոտ լուստ» բանաստեղծությունը, այնպես էի տպավորված ու ներշնչված, որ յուրաքանչյուրի հետ մինչեւ «շունչս փչելը» պատրաստ էի վիճել, որ առավոտ ներկայացնող ավելի ինքնատիպ եւ գեղեցիկ բան երբեւէ չի գրվել:

*Առավոտ լուստ,  
Առավոտ մի ջիւղ,  
Ջիւղ, ինչպէս... ոչինչ,  
Ջիւղ, սակայն դեռ պատ:  
Ու ես անհասարակ  
Անջարտն եմ ինձ  
Աշխարհից ծանոթ*







Շարժարույց հասնարհն

էջ 12

– Ազատ տպագրելու հնարավորությունը, կարծես, մեզանում մեկ այլ խնդիր է ստեղծել. այսօր ամեն քայլափոխի բանաստեղծներ են՝ իրենց՝ շատ հաճախ ոչինչ չասող, երբեմն անհասկանալի թեմատիկայով, բանաստեղծություններով:

– Այո, դժբախտաբար ժամանակակից պոեզիայում հաճախ ենք հանդիպում կյանքից, մարդու ներաշխարհից, մարդ արարածի եկությունից դուրս հնչեցված, անզայն անաչուն են ասել՝ «ստեղծագործություններին», այլ պարզապես սուտ գրություններին: Ինքնախաբեության մեջ խաղախաղը, իրենց ժամանակակից «մոդեռն» բանաստեղծության գիտակներ երեւակայող այդ մոլորյալների անմիաստ խզբզանքներին որեւէ կերպ չեն ուզում անդրադառնալ, որովհետեւ սրանցից պոեզիա ամբողջով իրականում այնքան է հեռու, որքան աղբի մեջ ապրող կենդանին՝ աստղերից:

Բանաստեղծելու գործից հասկացող, որոշակի ռոմանտիկայով շարժված հոգու տեր մարդկանց մի խումբ էլ նետել է իրեն սիմվոլիզմի գիրկը՝ շատ լավ գիտակցելով, որ բանաստեղծական աշխարհում աչքակապությանը զբաղվելու, անտաղանդությունը թողարկելու «ամենահարմար» գրական ուղղությունը խորհրդապաշտությունն է, որովհետեւ սա մի ուղղություն է, որտեղ կարող են «պատկերավոր այլաբանություն» ասելիքը հնարելու գործով զբաղվել: Այստեղ հաջողությամբ կարող են նաեւ բառերի շփոթ կուտակումներով մշուշելով խոսքը՝ միամիտ ընթերցողի աչքին խորհրդավոր երեւալ:

Կարող են վստահաբար ասել, որ պոեզիայի բազմաթիվ ժամանակակից ներկայացուցիչներ բռնել են հենց խորհրդապաշտական կեղծ մոգոնումների, ոչ մի տեղ չտանող, անհայրենիք, անհանգրվան ղեգերումների մի մտացածին ուղի: Իսկակյան սիմվոլիստը հոգով աստղ է հեքիաթ կրի ու կարողանա դա այնպես ներկայացնել, որ ընթերցողը հավատա նրա արարած իռացիոնալ աշխարհի գոյությանը:

Իսկ ընդհանրապես պոեզիայում ուզում են խորհրդապաշտ եղիր, ուզում են իրապաշտ կամ բնապաշտ եղիր, ուզում են վերացական խոհափիլիսոփայական հայացքներով առաջնորդվիր, մի պայմանի պարտավոր են բավարարել. բանաստեղծական պատկերավոր խոսքով ինչպիսի «ճախարհներին» էլ ընթերցողին տանես՝ ասելիքիդ վայրէջքի դաշտը կյանքը պիտի լինի: Եթե այդպես չէ, ուրեմն այդտեղ պոեզիա չկա և մարդուց, մարդկայինից, իրականությունից հեռու ինչ-որ մի ինքնաբավ, ինքնասիրտաբավածի կողմից գրված տխմար բարբառանք է:

Սուտ բանաստեղծների մի տեսակ էլ կա: Արանք էլ մեծերի ոճական արտահայտչածեներ ընդօրինակելով, երբեմն էլ նրանց ասելիքից խոհեր ու պատկերներ մուրալով, բանաստեղծական խոսքի հաճախ պարզունակ հուզական դրսեւորումներով, առավել հաճախ ծանծանկն, էսթետիկ խոսքի խոհական ծավալումներով փորձում են իրենց պոետ հռչակել: Գրական դաշտում նման «ստեղծագործողներն» իրենց երեւացնելու մարմնաջով տառապող, ճղվածաձայն թութակների են հիշեցնում, որ ողջ կյանքում պնդաճակատ համայնությանը ջանում են կրկնել երգող թռչունների դայալները...

– Այսօր կա՞ն ձեզ ժամանակակից, պոեզիայի ձեր ընկալումը բավարարող հայագրի բանաստեղծներ, որոնց ստեղծագործությունները հավանում եք:

– Այդ հարցին պատասխանելուց առաջ, նախ պիտի ներողամտություն հայցեն այն բանաստեղծներից, որոնց ստեղծագործությունները գուցե են բավարարել ընթերցողի իմ ճաշակը, սակայն հանգամանքների բերումով նրանց գրած գործերին, ցավոք, ծանոթ չեմ: Իսկ հայագրի ինձ ժամանակակից բանաստեղծներից, որոնց ստեղծագործություններին ծանոթ եմ, զնահատում են Հրաչյա Սարուխանի եւ Ապետնակ Գրիգորյանի պոեզիան:

Հրաչյա Սարուխանի հաջողված ստեղծագործությունները կրկին ընթերցելու ցանկություն հաճախ եմ ունենում: Եվ պիտի ասեն, որ ինձ համար ստեղծագործու-

թյունների զնահատման առաջին չափորոշիչը վերընթերցելու ցանկությունն է: Սակայն պիտի ասեն նաեւ, որ Սարուխանի ստեղծագործություններում, վերջերս՝ առավել հաճախ, ոչ թե բանաստեղծական անկեղծ ներշնչանք, այլ բանաստեղծի կեցվածք են նկատում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ապետնակ Գրիգորյանն իր ստեղծագործություններով ավելի քիչ է հայտնի ընթերցող լայն շրջանակներին, քան, ասենք, Հրաչյա Սարուխանը՝ ուզում եմ նրա «Էլ չթուլեք» բանաստեղծությունից ներկայացնել ընդամենը մեկ քառատող, որովհետեւ ըստ իս՝ միայն դա բավական է հասկանալու համար, որ այդ տողերի հեղինակը ոչ մեկին չկրկնող, ինքնատիպ ասելիքով իսկական բանաստեղծ է:

Երկունսն ձեռնող բազմանք՝  
ցնորած երազ...

Տույզեր, հոյսեր անթով ցավ ու պարտաւք,

Դարձար իմ ուներին ձյութած վեղար, Արքշին սևուրջներին մաշած պարտաւք:

Բայց պիտի նշեն նաեւ, որ շատ ստեղծագործողների համար երազելի Ապետնակ Գրիգորյանի գեղարվեստական խոսքի հուզական այս հեղեղունությունը երբեմն չիմնավորված դրսեւորումներ է ունենում՝ նրա ստեղծագործությունները ծանրաբեռնելով բանաստեղծական պատկերների, ասելիքին չնպաստող կուտակումներով: Եվ արդյունքում՝ են կասե՞ն՝ ներշնչանքի այդ անսանձությունից Ապետնակ Գրիգորյանի որոշ ստեղծագործություններ աղճատվածության ու ձգձգվածության տպավորություն են թողնում:

Այստեղ հարկ են համարում որոշ միամիտ ընթերցողների տեսկացնել, իսկ բանաստեղծի կոչման հավակնող որոշակի մարդկանց էլ վերստին հիշեցնել, որ ուսանավորներ կարող են գրել շատերը, չափաժող լավ խոսք՝ քչերը, սակայն բանաստեղծություն՝ այս բառի իսկական իմաստով՝ ի զորու են գրել միայն հատուկներն ընտրյալներ:

– Գրաքննադատության դերը բանաստեղծի կայացման գործում:

– Առողջ գրաքննադատը հեղինակին «սթափության մեջ պահելու» առումով կարող է նրա ստեղծագործական աշխարհի վրա որոշակի դրական ազդեցություն ունենալ, սակայն գրողի կամ բանաստեղծի կայացման հարցում նա, կարելի է ասել, ոչ մի անելիք չունի: Յուրաքանչյուր ճշմարիտ ստեղծագործողի մեջ ապրում է նաեւ իսկական քննադատը: Յենց նա էլ ուղղորդում է ստեղծագործության արարմանը: Ու որքան մեծ է հեղինակը, նույնքան էլ մեծ է նրա մեջ ապրող, նրան ուղեկցող քննադատը: Անենատաղանդավոր գրաքննադատն անզայն չի կարող միջակ ընդունակությունների տեր մարդուն մեծ գրող կամ բանաստեղծ դարձնել: Գրաքննադատությունը մասնագիտություն դարձրած անհատի հիմնական առաքելությունը կամ կոչումը ստեղծագործություններ արժեւորելն ու դրանք գրասեր հանրությանը ներկայացնելն է:

Այսօր, ցավոք, մեր իրականության մեջ գիրքն ազնվորեն քննող ու եղածի կամ չեղածի շուրջ անաչառ ու արժեքավոր դատողություններ ծավալող, քննախոյզ, խորաքափանց գրականագիտական վերլուծություններով հանդես եկող անհատները շատ քիչ են: Առավել հաճախ հանդիպում են «գրախոսականներին», որոնց անբարոյի հեղինակները գրական արժանիքներից բացարձակապես զուրկ հորինվածքները, երբեմն էլ սկզբնապես հարցը ստահականության հասնող անպատկառությամբ որպես գեղարվեստական արժեքավոր ստեղծագործություններ են փորձում ներկայացնել: Եվ այնպիսի համոզվածություններ են անում դա, որ չեն կարողանում հասկանալ՝ դրանց հեղինակներն իրականում անվերաբարձ մոլորված են, թե՛ ոչինչ չասող գանգրացրած նախադասություններով «գրականագիտական» խոսք մոգոնելով՝ միամիտ ընթերցողներին են ջանում հիմարացնել:

– Ձեր կարծիքով՝ որո՞նք են գրականության հավերժական թեմաները:

– Մարդ արարածի եությունը ներկայացնող, նրա արատներն ու

առաքինությունները բացահայտող բոլոր թեմաներն էլ հավերժական են, այսինքն՝ այն ամենը, ինչը նախապատմական ժամանակներից ուղեկցել է դեռ ուղեկցելու է մարդկային հասարակությանը:

– Արվեստը գաղափարի, թե՞ արվեստը արվեստի համար. այս ձեւակերպումներից ո՞րն է ընդունելի:

– Միանշանակ՝ արվեստը գաղափարի համար ձեւակերպումն ավելի ընդունելի է: Արվեստի իսկական ստեղծագործությունները կարող են հասարակական կյանքում ինչ-որ գաղափարներ առաջ քաշել ու դրանց տարածմանն ակամա աջակցել: Այսինքն՝ եթե կյանքը տվյալ ստեղծագործության մեջ ճշմարտացի է արտացոլված, նրանում ինքնին կարող են լինել իրականությունը ներկայացնող բազում գաղափարներ: Բայց եթե ստեղծագործության հիմքում հեղինակն ինչ-որ գաղափար է դրել ու գաղափար է նրան առաջնորդում կամ նրա ասելիքին ուղղորդում, ապա նա չի կարող անկեղծ լինել, կյանքի ճշմարտությանը մնալ հավատարիմ եւ իրականությունն արդարամտորեն պատկերել: Թե գեղարվեստական երկի մեջ գաղափարին հետամտող հեղինակին միջնա ուր կարող է հասցնել նրա ծառայատությունը՝ արթնոմի ճշգրտությամբ ներկայացրել է գրականագետ Կիմ Աղաբաբյանը: «Գաղափարի իշխանությունը գեղարվեստական ստեղծագործության մեջ բնական պոթնություն ինքնադրսեւորումը սանձում է, դնում ընդունված կանոնների, ընթերցողի այս կամ այն խմբին դուր գալու չափ ու կշռույթի մեջ, աղավաղում ասելիքը, կասկածելի դարձնում լրջությունը, սքողում համընդհանուր ճշմարտությունը, շղարշում իրականությունը, գրողին աներկբա դարձնում կեղծարար, հասարակական ինչ-ինչ շեղությունից սիրաշահող սպասավոր»:

Արվեստն արվեստի համար ձեւակերպումը չեն հասկանում, այսինքն՝ ասել է թե՛ արվեստն ինքն իր համար, գեղեցիկ ինչ-որ բան՝ կտրված կյանքից, թե՛ այդ խրթին արտահայտության «սիրահարները» ձեւի առաջնայնության խնդիրն են փորձում նման ռեբուսային հարցադրմամբ արծարծել: Եթե՛ այո՞, ապա իմ դեպքում՝ ասելիքս է իր ձեւը գտնում: Անենելիքն չեն բացառում, որ կարելի է նաեւ սկզբից ձեւն ընտրել ու նրանում ասելիք դնել:

Երկու մտտեցումն էլ արվեստում հավասարապես ընդունելի է. նախասիրության խնդիր է: Միայն պիտի կարողանան առաջնայնությունն ասելիքիդ տալու դեպքում՝ այն պատշաճ ձեւի մեջ ներկայացնել: Եթե ձեւին եւ առաջնայնություն տվել՝ այն ասելիք պիտի կարողանա կրել: Իսկ եթե ասելիքը, մեղմ ասած, տծե է կամ ընտրած գեղեցիկ ձեւը չի պարունակում ոչինչ, բովանդակազուրկ է, այսինքն՝ ձեւի եւ բովանդակության իրականությունն անհարձակություն կլա՞նք՝ արվեստի ստեղծագործության կայացման մասին խոսելն ընդհանրապես անհիմաստ է դառնում...

– Ինչո՞ւ ենք հեռացել գրքից:

– Խորհրդային տարիներին մեր ժողովրդի մոտ գիրք ընթերցելու մշակույթ էր ձեւավորվել, գրքի հանդեպ պաշտամունք կար, շատերն էին գիրք կարողան, իսկ նրանք, ովքեր չէին կարողան, զոնե իրենց զավակների համար ձգտում էին ընտանեկան գրադարան ունենալ. գրքեր ձեռք բերելու համար մարդիկ գրախանութներում ժամերով հեքի էին կանգնում: Խորհրդային ժամանակներում հաճախ անզայն զբոսայգիներում կարող էիր հանդիպել իրենց ընթերցած գրքերի շուրջ հետաքրքիր դատողություններով բանավեճեր ծավալած սովորական մարդկանց: Իսկ երբ խորհրդային համակարգը փլուզվեց, մարդկանց համար առաջնային, սեւեռուն հարց դարձավ հացի խնդիրը: «Ոչ միայն հացիդ, այլ նաեւ բանիվ» ասվածը հասարակության բոլոր բարտերի համար արժեգրվեց. եթե առավտից միջնա կեսգիշեր եւ անզայն ողջ գիշերը հացի խնդրի լուծման վրա ես՝ էլ ի՞նչ խոսք կարող է լինել գիրք ընթերցելու մասին: Ես կարծում եմ՝ գրքից հեռանալու առաջին, օբյեկտիվ պատճառը սա էր:

Բարոյահոգեբանական այդ մթնոլորտում աճում էր մի սերունդ, որը ոչ թե հեռանում էր գրքից, այլ ընդհանրապես չէր մոտենում նրան: Իսկ երբ անցյալ դարի

90-ականների առաջին կեսի Հայաստանից արտագաղթածներն օտար ափերում ոտքի կանգնելով՝ սկսել էին «ձեռք մեկնել» հայրենիքում ապրող իրենց հարազատներին եւ սոցիալական լարվածությունը հասարակության մեջ փոքր-ինչ մեղմացրել, մեր իրականությունը հեղեղած լատինաամերիկյան պարզունակ հեռուստատեսիվներն արդեն հիմնավորապես «ստանձնել էին»՝ բարձրորդի մատնված նոր սերնդի «դաստիարակության գործը»:

Նորեկ սերնդի գիրք չկարդալուն ինչ-որ չափով նպաստեց նաեւ կրթության համակարգում գիտելիքների ստուգման թեսթային սկզբունքին անցնելու նորամուծությունը: Դժվար պատկերացնելի է, որ գիրք կարդալու պարտավորվածությունից ազատված դպրոցահասակ պատանին ինքնապես հափշտակվի ընթերցանությամբ: Գիրք ընթերցելու մշակույթն էլ երեխայի ներաշխարհի մեջ ներարկվում է դաստիարակության շնորհիվ:

Ոչ միայն երիտասարդ սերնդի, այլեւ տարեց սերունդների մի ստվար հատվածի վրա գրքից հեռանալու հարցում տեղեկատվական նոր տեխնոլոգիաներն ու համացանցն էլ իրենց հերթին բացասական ազդեցություն ունեցան:

Գրքից հեռանալուն վերջին տասնամյակներին օժանդակեց նաեւ թե՛ արդարության, թե՛ հոգեւորի հանդեպ մարդկանց հավատի կորուստը: Հոգեւոր արժեքները գնահատող, մարդկային հարաբերություններում բարոյականությունն անվիճարկելի չափորոշիչ համարող հասարակություններում են գիրք ընթերցում: Իսկ մեզ, կարելի է ասել, բացի հայրենասիրության ուրվականից, հասարակական մնացած իդեալները կորցրած իրականության մեջ էինք հայտնվել: Հասարակության մտահոգ զանգվածի տրտունցները պետությունը «ներկայացնող» այդտեղ ունկերին չհասան էլ նրանց կողմից այդ իրավիճակի առաջն առնելու ուղղությամբ ժամանակին համապատասխան քայլեր չձեռնարկվեցին:

Հասարակության մեջ համամարդկային իդեալներ սերմանելը յուրաքանչյուր նորմալ պետության առաջնահերթ հանձնառությունը պիտի լինի. դրանց նկատմամբ հավատարմություն պահպանելը՝ նրա գերակա խնդիրը: Պետության քաղաքացին պիտի հավատա հոգեւորի գոյությանը, որ նրա մոտ գիրք ընթերցելու ցանկությունն առաջնա: Ու այդ քաղաքացին պիտի նաեւ վարդալու որակ իր կեցության հանդեպ վստահություն ունենա, որ կարողանա խաղաղ սրտով գիրք կարդալուն ժամանակ տրամադրել:

Այսօր հայտնվել ենք գրական առումով մի չվերահսկվող իրականության մեջ, երբ անզայն գրավոր խոսք շարադրելու կարգին շնորհք չունեցող, գեղարվեստականություն հասկացությունը չընկալող, գաղափարազուրկ մարդն է գիրք տպագրում, գրքի հեղինակն ու գրող հորջորջվում են ճշմարիտ, մեծ գրականության ավանդույթներին անտեղյակ երիտասարդ սերնդի պատկերացումներում գրքի ու գրողի հարգն արժեգրվում:

Գրականության ընկալման ու գնահատման արժեհամակարգի այսօրվա աղավաղվածության մեջ, անտարակույս, մեղավորության իրենց բաժինն ունեն տաղանդից զուրկ բանաստեղծներն ու գրողները, սակայն մեղավորության առեւելի չափաբաժինը նրանց անասելիք ստեղծագործություններն իբրեւ գրական արժեքներ մեր հանրությանը իրանցնող, նկարագրող կորցրած գրաքննադատների խղճի վրա է: Որքան էլ ցավալի ինչ, իրականությունն այն է, որ այսօր կեղծ գրողն ու բանաստեղծը եւ քսու գրականագետը «ձեռք ձեռքի տված» շարունակում են նպաստել սերունդների՝ գրքից հեռանալու «գործընթացին»:

Այս իրողությանը, անշուշտ, նաեւ մեղասակից են այն գրականագետները, ովքեր, «զուրկ չդնելով» ներկա լրագրված գրական դաշտին, պարզապես լռում են: Կարծում եմ՝ ժամանակակից շնորհալի գրականագետները չպիտի միայն դասականների ստեղծագործությունները վերաարժեւորումներով տարվեն՝ անտեղյակ մատնելով ներկա ժամանակաշրջանը...

Հարցազրույցը՝  
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅԱՆՆԱՅԻՆ



# Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծը



ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Էջ 1 Լեզունդուն հարկարկված են եղել այուժեի փոփոխություն կատարել եւ իրեն ծորը մետած աղջկան կենդանի թողնել, քանի որ, ըստ ժողովրդական ավանդազրույցի, նա չի մահացել: Այդ պատճառով «Հարսնածոր» լեզունդուն մեկ քառատող ավելացրել են: Իսկ որոշ տներ, ընդհակառակը, այդ լեզունդունում հնքնանպատակ համարելով՝ հանել են...»:

Անտարակույս, արդարության առաջ մեղանշած չենք լինել եւ չափազանցություն թույլ տված չենք լինի, եթե Տիգրան Գրիգորյանին համարենք «Չանգեզուրյան լեզունդների» համահեղինակ:

Տիգրան Գրիգորյանի հետ մեր բարեկամությունն ու գործընկերությունն ավելի ուշ շրջանի ծնունդ եղան: Ի սկզբանե ինքը չէր ընդունում (այսօր էլ չի ընդունում) պաշտոնաբեր ասվածը, իսկ «Չանգեզուրը» Գորիսի տեղական իշխանությունների պաշտոնաբեր էր: Թեև 1980-90-ականների սահմանագծում թերթը միանգամայն նոր կարգավիճակ ստացավ ու նոր ոճ եւ ուղի որդեգրեց, սակայն, միեւնույն է, նա կարգապարհեր ու հոգեբանական բարոյություններ էր տեսնում թերթի մոտօրյա գործելակերպում: Մի խոսքով՝ պարբերական մամուլի կոչման իր չափորոշիչներն ուներ եւ ունի: Սակայն բարոյական այլ վերաբերմունք ունեցավ «Սյունյաց երկիր» հանդեպ: Ըստ երեւույթիմ հենց այդպիսի թերթ էր ուզում տեսնել Սյունիքում...

Նա սիրեց «Սյունյաց երկիրը», նաեւ սկսեց քննարկել թերթի առանձին հրապարակումներ, բանավեճեր ծավալել խմբագրի ու հեղինակների հետ, իր նկատառումները հայտնել հատկապես հրապարակախոսական, վերլուծական, գրական ու գրականագիտական հրապարակումների վերաբերյալ: «Սյունյաց երկիր» մասին իր մտածումներն արտահայտեց հետաքրքիր մի հոդվածում (31 հունվարի 2013թ.): Առիթը Վահանավանքի 1100-ամյակին նվիրված համարի խմբագրականն էր: Իր ասելիքն էլ այսպես ամփոփեց. «Եվ ի լուր ամենքի պիտի հայտարարեմ, որ ազգային հոգեկերտվածքի վրա խարսխված համարողական ընկալումներն են խոսքի ազատության» «Սյունյաց երկիր» թերթին ուղեկցող գաղափարական չափորոշիչները: ...Առանց դույզն-ինչ տարակուսելու «Սյունյաց երկիրը» ես համարում եմ Հայաստանի Հանրապետության ամենալուրջ եւ առաջնակարգ լրատվամիջոցներից մեկը»:

Չենք թաքցնում՝ հաճելի է ընթերցել նման գնահատություն պարունակող տողերը, առավել հաճելի է իրողությունը, որ հեղինակը Տիգրան Գրիգորյանն է, ում ստեղծագործական տիրույթում վրիպած տողեր ու բառեր գրեթե չեն լինում:

Տիգրան Գրիգորյանի աշխարհայեցողությունը, գեղարվեստական չափանիշները, ազգային իրողություններին վերաբերող

պատկերացումները ժամանակի ընթացքում մեզ ավելի հարազատ դարձան: Մեր խնդրանքով դարձավ «Սյունյաց երկիր» գեղարվեստական խորհրդի նախագահ: Եվ առայսօր մեծագույն պատասխանատվությամբ է կատարում հասարակական այդ աշխատանքը, բոլոր ստեղծագործողներին անկեղծորեն օգնելու պատրաստակամություն ցուցաբերում, մասնակցում թերթի բեմատիկ (հատուկ) համարների ծրագրմանը, գրական ոլորտին առնչվող խմբագրականների մշակմանը:

Եվ 2013թ. հոկտեմբերի 30-ին, երբ լույս տեսավ «Սյունյաց երկիր» հիմնադրման 10-ամյակին նվիրված հատուկ համարը, թերթում տեղ գտավ նաեւ նրա՝ թերթին հղած «Խոսք իմ ժողովրդին» բանաստեղծությունը, որի մեջ հեղինակի անխորտակելի հավատն է հայ ժողովրդի ապագայի հանդեպ՝ պայմանավորված բազում օրհասական դարեր հետեւում թողած մեր ժողովրդի ոգու անաբարտելիությամբ:

Ահա այդ բանաստեղծության վերջին քառատողը՝

*Նազալի-հազալի արարիներ են  
կեկե-անգեկ, անց կենան,  
-Քո հույզերը, գո՞րթն ու սելը,  
միշտ եղել են ու կունան,  
Եթե նորից, Աստված չանի,  
արհավիրքնե՞ր գան ու գնան՝  
-Քո դարավոր արմատները ամեն  
ինչի կոխնանան:*

Տիգրան Գրիգորյանի քաղաքացիական կեցվածքը տեսանելի է նրա բոլոր հրապարակումներում: Սակայն ուզում ենք խոսք ասել այդ հրապարակումներից մեկի մասին՝ «Կեղծ արժեքներն իմ քաղաքում հարզի չեն» վերառությամբ հոդվածի («Սյունյաց երկիր», N9, 2013թ.), որը, միանշանակ, շարքային հրապարակագրություն կամ խոհ չէ: Ավելի Բակուցի «Կյուրեւ» կոթողային գործից եւ Սերո Խան-գաղյանի «Մատյան եղելությանց» գործից մասնատված հետո այդ հոդվածում ենք տեսնում գործից ելած ճշգրիտ ներկայացումը, նկարագրող հատկանիշներ, որոնք ի վերջո գեր են տեղային մտածողներից եւ ավելի շատ բնորոշում են հայ մարդկային տեսակին առհասարակ: Ահա հոդվածից մի հատված. «Քսաներեք հազարին մոտ բնակչություն ունեցող Գորիսում այսօր էլ եթե մի քիչ փոքրիկ են՝ հարյուր տարուց էլ ավելի կտրվածքով ցանկացած բնակչի մինչեւ յոթը կարող կարողանում են ջրի երես հանել: Եվ վրա նրան է եղել, ում նախնիները ժամանակին չար գործերի հեղինակ են դարձել՝ ապրելով «Ինձնից հետո թեկուզ ջրիդեղ լինի» նշանաբանով... Նման կենցաղակերպ որդեգրած անպատկառ մարդու չլինելուց հետո էլ վիրավորանքի, քամահարանքի, անվատախոսության դրսևորումներով գործից հեռանալ այդ ջրիդեղը «հաստատ բերում են» նրա սերունդների գլխին, երբեմն նույնիսկ իրենց սովորական շնչառության անտարբերությամբ պարտադրելով, որ վերջիններս հասարակությունից իրենց մեկուսացված զգան... Եիշտ է ասված, որ այստեղ «չարի սերունդ բույն չի դնում» անարմատ է»: Ահա եւ հոդվածի ավարտը. «Սովորականի մեջ արտասովորը, իսկ արտառոցի մեջ սովորականը տեսնող ու զանազանող գործից ելած թուզիկ, անբովանդակ, չկայացած, էժան բաներով դժվար է զարմացնել: Նրան հիրավի զարմացնել, կամ ավելի ծիշտ, հիացնել կարող են միայն կատարյալ, անխառն, անեղծ ու անկեղծ բաները...»:

Տիգրան Գրիգորյանի քաղաքացիական կերպարի լիարժեք եւ ամբողջական, նաեւ խիզախ պոթնությունն ականատես եղանք 1988թ. փետրվարյան պատմական օրերին: Առանց չափազանցության կարող ենք ասել՝ ինքն էր Արցախի ազատագրության համար արթնացող հայ ժողովրդի գորիսյան հատվածի գործողու-

թյունների առաջին կազմակերպիչը: Դերասական այդ օրերի մասին է նրա «Դետադարձ հայացք» էսսեն («Սյունյաց երկիր», N N 3, 4, 7, 2014թ.): Յուրօրինակ այդ հուշագրությունը, իսկապես, սկզբնաղբյուրային նշանակություն ունի Գորիսի նորագույն շրջանի պատմության համար:

Ոչ միայն հայ գրականության, այլեւ համաշխարհային գրականության խոր իմացությունը չէր կարող Տիգրան Գրիգորյանին հեռու պահել գրականագիտությունից ու գրաքննադատությունից եւ առհասարակ գեղարվեստական գրականության մասին սեփական պատկերացումներն արտահայտելուց: Եվ, իրոք, մի շարք հոդվածներում նրան տեսնում ենք այն մայրուղում, որ կոչվում է գրականագիտություն ու գրաքննադատություն: Նրա հոդվածներից երեքին, այնուամենայնիվ, կուզենայինք թուզիկ հայացք ձգել:

Առաջինը, անշուշտ, Հովհաննես Թումանյանին նվիրված հոդվածն է՝ «Ամենայն հայոց հոգեհայրը» («Սյունյաց երկիր», N4, 2013թ.):

Ամենայն հայոց բանաստեղծի մասին շատ է գրվել եւ լավ է գրվել: Տիգրան Գրիգորյանը դրանցից հատկապես հիշել եւ իբրեւ բեմաբան է ընտրել Եղիշե Չարենցի մարգարեացած խորհրդածությունը՝

*Ես կարդում եմ նրան ու ասում. -  
Այս հունար, հսկանարեղ լուռեցին  
Տուների, Գյուղերի հեռ մի օր՝  
հավասար նստել է թե՛ֆի,  
Եվ թաս է բռնել նրանց հեռ,  
մեծարութեք րվել ու առել,  
Ինչպես իր պապերն են արել՝  
իրար հեռ խնջույթի նստելիս:*

Այս համապատկերի վրա էլ Տիգրան Գրիգորյանը Թումանյան վիթխարի երեւույթի իր տեսլականն է ներկայացնում՝ հոդվածի որոշ դրվագներում այսպես բնութագրելով նրան. «...Որեւէ բանաստեղծի բանաստեղծական աշխարհի մասին խոսելիս, նրա ստեղծագործական ժառանգությունը քաղաքակրթության գոյության բազմադարյան ֆոնի վրա արժեւորելիս ներողամտության ինչ-որ մի փակվակցատ, թերեւս՝ գորովագին կեցվածք ենք պահպանում՝ հաշվի առնելով ոչ միայն այն ժամանակաշրջանի յուրահատկությունները, որում ապրել ու իր երկերն է արարել բանաստեղծը, այլեւ տվյալ բանաստեղծի խառնվածքին հատուկ այս կամ այն բնորոշ ծայրահեղությունը: Բայց Թումանյանի բանաստեղծական աշխարհի հետ շփվելիս հաղորդակցվում ենք աշխարհընկալման մի այնպիսի համապարփակ պարզության հետ, մարդկային կյանքն օրորողից մինչեւ խոր ծերությունն անփոփոք, մի այնքան սիրառատ, ծնողական բարեհոգության ենք հանդիպում, որ ակամայից մոռանում ենք բոլոր այն պայմանական հանգամանքների գոյության մասին, որոնք շա՛տ ու շատ բանաստեղծների «խանգարում» են հավերժի մշտապես ծայրահեղ մնալ:

Բոլոր դեպքերում ամեն մի իսկական բանաստեղծ հավերժի ճամփորդ է, սակայն հանուն արդարության հարկ է ասել, որ այսպիսի որակումը, թե՛ն է՝ նախանձեղի, այնուամենայնիվ, Թումանյանի համար մի քիչ մեղմ է ասված: Նա ավելի ծիշտ՝ անհունին տնօրինություն արեց ու հավիտենության մշտնջենական գրուցակիցը դարձավ...»:

...Թումանյանի հիրավի առասպելական հոգին ամփոփել էր համբերության խորհրդին ունկնդիր արեւելքն ու արդարության երդումին հավատարմագրված արեւմուտքը: Նրա խառնվածքում հյուսիսցու խառնաշունչ պարզարտությունը կար ու հարավցու սրտոտ խելահեղությունը: Իսկ եթե ավելի ստույգ, ապա պիտի ասենք՝ նա իր բիբլիական ժողովրդի հրեղեն ողջախոհությամբ օժկած մի վճիտ հայ էր, որի մեջ Արարիչն ամբարշտ էր այն ամենայն առաքինին ու լուսավորը, որով հայ հանճարը մաքառելով փառավորել է իր անկրկնելի պատմությունը...»:

Տիգրան Գրիգորյանը համոզված է, որ Թումանյանն իր ստեղծագործական աշխարհով եւ ապրած կյանքով Հայոց աշխարհի հոգեւորի հավաքական մարմնացումն է: Այդ համոզմամբ էլ նա իր խոսքն ավարտում է հետեւյալ կերպ. «... եւ Հայոց Աշխարհը ինքն իրեն երկնեց Լոռվա Դսե-

ղում»:  
Գրականության յուրօրինակ ընկալումներ նկատեցինք նաեւ Համո Սահյանին նվիրված փոքրիկ, բայց եւ տարողունակ «Հայ մեծ բանաստեղծի զարմանահարաշ տեսակը» հոդվածում: Դա 2014-ին էր («Սյունյաց երկիր», N14): Նախորդած մի քանի ամսում աշխատել էինք Համո Սահյանին նվիրված հատուկ համարի վրա՝ ծննդյան 100-ամյակի առիթով: Եվ հասցրել էինք մտնել սահմանագիտության խորքերը: Ու այդքանից հետո թվում էր, թե Տիգրանը որեւէ նոր բան չէր կարող ասել: Բայց նա կարողացավ Համո Սահյան երեւույթի իր ընկալումը ներկայացնել. «Ժամանակների մեջ չխամրող, բանաստեղծի մնացորդային հարցում մի-մի գորավարի դեր կատարող բանաստեղծություններ ունենալը Պարույր Սեւակը երանելի բարեբախտություն էր համարում, - ասում է նա ու շարունակում, - Համո Սահյանը կարողացավ հեղինակը դառնալ այնպիսի բանաստեղծությունների, որոնք ասես մեր ողջ ժողովրդի մորմորներից ու կարոտներից երկնված հոգեպարար հրովարտակներ լինեն»: Ասել է թե՛ հրովարտակների մանկվող հենց այդ բանաստեղծություններն են այն մի-մի գորավարները, որ «կարողանում են» Համո Սահյանին դեպի հավերժություն ուղեկցել...»

Գրականագիտական առումով ուշագրավ է Արկադի Ծատուրյանի հոբելյանի առիթով գրված հոդվածը՝ «Գրին ու գրականությանը նվիրաբերված կյանք» («Սյունյաց երկիր», N23, 2014թ.): Հոդվածն ի սկզբանե (միգրացի եւ մինչեւ հիմա) միանշանակ չի ընդունվել: Մեր կարծիքով, մինչդեռ, ճշմարիտ գրականության չափանիշների լույսի ներքո Արկադի Ծատուրյանի ստեղծագործական աշխարհի դիտարկումն ինքնին խոսում է նրա ստեղծագործություններին Տիգրան Գրիգորյանի արդարացի մոտեցման մասին: Ահա հոդվածում ներկայացված չափորոշիչներից մեկը. «Գրողի «մասնագիտության» վերաբերյալ Բեննարդ Շուլցն մի պարզ, բայց անչափ տարողունակ ձեւակերպում ունի. «Գրողն ինքն իր հետ գրույց է անում, աշխարհն ականջ է դնում»: Ասույթի խորհամաստությամբ հնչող այս նկատառումը, անշուշտ, ենթադրում է, որ գրողը կյանքի ճշմարտությանը հավատարիմ, անաչառ ու անկեղծ լեզվով պիտի ինքն իր հետ գրույց անի՝ ամենեւին «չկառավարվելով» այն մտայնությամբ, թե իրեն ինչպես են ականջ դնելու»:

Տիգրան Գրիգորյանի տաղանդի մի նոր դրսևորման ականատեսը դարձանք թարգմանությունների ոլորտում:

Մեզ հաճելիորեն գարնացրեց այն փաստը, որ նա ձեռք էր մեկնել ռուս հանճարեղ քնարերգու Սերգեյ Եսենինի ստեղծագործությունների թարգմանությանը: Դրա համար, խոստովանեց, անհրաժեշտ էր քաջություն... Չէ՞ որ Եսենինի ստեղծագործությունները վաղուց էին թարգմանվել հայերեն եւ թարգմանվել էին նշանավոր գրողների կողմից՝ Պարույր Սեւակ, Համո Սահյան, Վահագն Դավթյան, Գեորգ Եմին... Այդ հեղինակությունների թարգմանած մի քանի գործեր Տիգրան Գրիգորյանը համարձակվեց ներկայացնել իր թարգմանությամբ:

Ու կարող ենք ասել՝ նրա թարգմանական նախաձեռնությունը կայացավ: Ավելին, նրա թարգմանությունները, առանց փոքր-ինչ տարակուսելու, կարող ենք դասել հայ թարգմանական արվեստի լավագույն մոմենտների շարքին:

Եսենինի ստեղծագործությունների թարգմանությունները թույլ են տալիս ասել՝ Տիգրան Գրիգորյանը լիովին տիրապետում է բանաստեղծության թարգմանության արվեստին, եւ այդ ասպարեզում նա իսկապես անվիճելիորեն կատարյալ է:

Ուշագրավ են թարգմանական արվեստի մասին հնչող նրա բանաձեւումները, որոնցով նա, անշուշտ, առաջնորդվել է Եսենինի ու Նիկոլայ Ռուբցովի ստեղծագործությունները թարգմանելիս: Ներկայացնենք մեկ դրվագ այդ բանաձեւումներից. «Դա առաջին հերթին բնագրի եւ թարգմանող լեզվի դարձվածաբանական նրբությունների խորհամացությամբ՝ երկու

Գրական դիմանկար

Էջ 15 | Լեզուների պատկերային համակարգերի յուրահատկությունների խոր զգացողությամբ՝ բնագրի ասելիքը թարգմանող լեզվով տեղ հասցնելու, բնագրի հուզականությանը հավատարիմ մնալու գերլարված ոգեղեն աշխատանք է: Անվերապահ ինքնաքննություն, ինքնամոռաց հավատով լի թարգմանիչը հեղինակի հետ այնպես պիտի մերվի, որ կարողանա բնագրի արարման ներշնչանքի սարսուռն զգալ. թարգմանված տողը, պատկերը ոչ թե արհեստավարժորեն փոխադրված, այլ հնարավորինս պիտի երկնված լինի»:

Տիգրան Գրիգորյանի թարգմանություններն իսկապես երկունքի ցավով լույս աշխարհ եկած ստեղծագործությունների ամբողջություն են: Գրանք այնքան են անբռնազբոս, ապրված ու հայեցի հնչում, որ թվում է, թե հայ բանաստեղծի ստեղծագործություններ են, եւ Տիգրանն այդ թարգմանություններում պարզապես շարունակել է արարել իր աշխարհը՝ իր խոհերն ու ապրումները բանաստեղծական խոսքի վերածելով...

\*\*\*

Տիգրան Գրիգորյանի առաջին՝ «Չավիտեցության ճանապարհին» ժողովածուի (Երեւան, 2007, «Ձանգակ-97») առաջաբանում ճանաչված գրականագետ Կիմ Աղաբեկյանն ուշադրություն է դարձնում Երեւանում 1920-ական թվականներին ստեղծված «Նրա յուրաքանչյուր գործ ապրված տառապանք է՝ բյուրեղացած իրեն բանաստեղծական գեղեցկություն: Գրքի մթնոլորտում տիրապետող անխարոյս, ուղղակի տեսանելի անմիջականությունն է, ընդվզումի կիրքը, առաքինության ու մարդկային արժանապատվության առնական տոնայնությունը: Ավներե է, որ հեղինակը անցել է պոեզիայի դարավոր փորձի միջով՝ այդ ճանապարհին խմորելով պոետական հավատամքը. զգացվում է բառի, պատկերի նկատմամբ երկյուղած վերաբերումը. ստում է խոսքի մուրացվածությունը»:

Ճշմարիտ, կարելի է անգամ ասել՝ ճշգրիտ այս գնահատության հետ դժվար է չհամաձայնել:

Անկախ ստեղծագործության ծավալից, ասելիքից, ընտրված տաղաչափական ձևից, շարադրանքի խոհականությունից կամ քնարականությունից՝ Տիգրան Գրիգորյանի յուրաքանչյուր գործ իսկապես բյուրեղացած բանաստեղծական գեղեցկություն է...

Նրա ստեղծագործական աշխարհում կան խոհափիլիսոփայական ապրումներով շարափված, փոթորկահույզ պոեզիաներ երկնված այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Ալիստեղծություն», «Չայրենիքս», «Ճահճատենը» ստեղծագործությունները: Սակայն ըստ իս՝ Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհի զարդը քնարափայլական շնչով գրված «Ամնահության համանվագ» պոեմն է: Ամեն անգամ այդ պոեմն ընթերցելուց հետո արարչագործության հետ հաղորդակցված լինելու մի անմեկնելի զգացողությամբ են պարուրվում, ու ինձ թվում է, որ անկախ մարդկանց կրթվածության եւ աշխարհընկալման մակարդակից, նախափորձություններից ու ճաշակից, յուրաքանչյուր ընթերցող այդ աստվածային զգացողությունն ունենում է...

«Ամնահության համանվագ» պոեմը հենց առաջին քառատողից ասես իր գիրկն է առնում քեզ եւ իր անմիջականությամբ այնպես վարակում, որ թվում է, թե հեղինակի տատը քո տատն է, գերանդիններն առած՝ քնակարոտ քայլքով գյուղամեջ իջնող տղամարդիկ քո գյուղի գերանդիններն են, քնկոտ գամփռներն էլ, զիլ-զիլ ծուղրուղու կանչող ալըրներն էլ, չնաշխարհիկ արիաներ հեղած սարյակներն էլ, հացը կապած, համդ գնացող կին ու ջահել աղջիկներն էլ, կենդանիներն անգամ՝ քո գյուղից են... Առավել քան համոզված են, որ այսպես է ընկալվում այդ ստեղծագործությունը բոլոր այն ընթերցողների կողմից, ովքեր իրենց մանկության կամ պատանեկության տարիներին առնչություն են ունեցել հայոց լեռնաշխարհի գյուղերի հետ:

Եթե ասենք, որ «Ամնահության համանվագ» պոեմն ընթերցողին է ներկայացնում հեղինակի՝ պատանի տարիքում գյուղաշխարհում անցկացրած կյանքի մեկ օրվա պատմությունը՝ վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, եւ այն գյուղական իրականության, կենցաղի ու առօրյայի բանաստեղծական նկարագրություն է՝ համեմատված հեղինակի հովվերգական ընկալումներով, անշուշտ, սխալված չենք լինի, բայց եւ ոչինչ ասած չենք լինի: Բովանակային առումով պոեմն ընդգրկում է այնքան, որքան կյանքը...

Եվ, այնուամենայնիվ, այս գարնանահարաշ ստեղծագործության մեջ տեղ գտած մի հազ-

վադեպ գեղարվեստական իրողության չեն կարող չանդրադառնալ: Դա այն է, որ հեղինակն ընդամենը մի քանի քառատողով՝ պապի մասին պատմող տառի գրույցների տեսքով, կարողացել է հուզաթաթավ խոսքի պատկերավոր բանաստեղծական վարպետությամբ այդ ստեղծագործության մեջ տեսանելի դարձնել նաեւ պատմական մի ամբողջ դարաշրջան: Պոեմի այդ մի քանի քառատողում՝ խորհրդային պետության կայացմանն ուղեկցած՝ մասնավոր հատվածին տնտեսական որոշակի ազատություն բերած ՆԵՊ-ի հուսադրող տարիները կան. հարկադրաբար կողեկտիվ տնտեսություններ ստեղծելու խորհրդային իշխանությունների կույր մոլեռանդության ու այդ ռեժիմի կամակատար չեկիստների կամայականությունների տխուր ժամանակները կան. կյանքն ու հիշատակներն արժեզրկած՝ սովի դաժան տարիները կան: Մեծ հայրենականի արհավիրքով անցած՝ զավակներ կորցրած մեր ժողովրդի՝ հետպատերազմյան տարիների հոգի մղկտացնող ցավը կա նաեւ պոեմի այդ փոքրիկ հատվածում, ու վերջապես՝ խորհրդային Միության բարեկեցիկ ժամանակների ինքնաբավ իրականությունը կա: Եվ այս ամենի մեջ ու այս ամենի մոտ՝ երկնավորի հետ երբեք իր կապը չկորցրած, գթասրտությունը հավատք դարձրած անզուգական հայ կնոջ ոգեղենությունը կա...

«Ամնահության համանվագ» ասես մեր բնաշխարհի խենթացնող թովանքներով լեցուն մի շտեմարան լինի: Այդ ստեղծագործությունը կարգալիս այնպիսի չնաշխարհիկ, անզուգական պատկերների եւ հանդիպում, որ թվում է՝ ոչ թե բանաստեղծություն են ընթերցում, այլ շլացուցիչ գեղանկարներ ու դյուբիջ տեսապատկերներ են դիտում եւ երբեմն անգամ թվում է նաեւ, թե մասնակցում ես քո աչքի առաջ ու քո ներկայությամբ տեղի ունեցող իրադարձությունների: Գյուղաշխարհի իրողություններն ու բնապատկերներն այնքան կախարհող ճշմարտությամբ եւ արարչական նրբագեղությամբ են վրձնված, որ զմայլանքը ընթրչանելով՝ անվիճարկելի մի եզրակացության ես հանգում՝ այս պոեմում գործ ունենք որեւէ ժամանակաշրջանով չսահմանափակվող մարդկային հավերժական զգացողությունների ու տարաբնույթ երեւույթների ամնախ իրականությանն հետ:

Մեր խորին համոզմամբ «Ամնահության համանվագ» պոեմը բոլոր ժամանակների ստեղծագործություն է, որովհետեւ այն մարդբնություն տիեզերական արարչաստեղծ կապի գեղարվեստական բացառիկ արտահայտություն է...

\*\*\*

Տիգրան Գրիգորյանը պիտի որ իրեն երջանիկ մարդ համարի, քանզի ինքը շատ սիրված անձնավորություն է մեր միջավայրում եւ սպասված գրուցակից, երեւի թե՛ ամենքի համար: Այսօր առավել քան երբեւէ նա պետք է մեր իրականությանը, մեր մշակույթին եւ հատկապես մեր գրականությանը, որովհետեւ այն, ինչ անում է, անում է լավագույնս, ամնացող սիրով ու նվիրումով:

Նրա խորհրդածություններին կարելի է ժամերով ունկնդիր լինել:

Նրա ոգեշնչված բանավեճերին առանց ձանձրանալու կարելի է ամեն օր մասնակից լինել:

Նա գիտի հայ ու համաշխարհային գրականությունը, իսկ ամենակարեւորը՝ զգում է որն է իսկական, համամարդկային գրականությունը, ինչի շնորհիվ էլ նրա խորհրդածություններից անընդհատ լույս է ճառագում...

Նա պայծառ մտքով ու մեծ մարդկայնությամբ օժտված վառ անհատականություն է՝ ճշմարտությունը տեսնող, արդարությամբ ապրող...

Այդ բոլորով հանդերձ պիտի խոստովանենք՝ մի լուրջ վրիպում ենք թույլ տվել՝ ավելի վաղ նրա մասին խոսք չասելով եւ նրան ըստ պատշաճի չներկայացնելով ընթերցողին ու հանրությանը: Դա էլ, կարծեք, իր խառնվածքով էր պայմանավորված, իրեն հեռու էր պահում (եւ պահում է) լրատվամիջոցներից, գրականագետներից:

Ինչեւէ, ուշացումով, բայց մեծ սիրով ու գորովալի ակնածանքով ներկայացնում ենք մեր տաղանդավոր հայրենակցին:

Առողջություն եւ ստեղծագործական ներշնչանք ենք մաղթում նրան՝ Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծին, մտավորականի մեր պատկերացրած ու փնտրված տեսակին, խիզախ հայրորդուն...

Գրական անդրադարձներ

ԳՐԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԿՅԱՆՔ



Ըստ իս՝ մարդ մնալու տաղանդով օժտված լինելն է գրող դառնալու առաջին եւ ամենագլխավոր նախապայմանը: Ասել է թե՛ մարդկային խիղճը, արդարանտությունը, ազնվությունն ու անկաշառությունը՝ հոգում կրելու ուժ է աստվածատուր շնորհ ունեցող անհատը միայն կարող է իրեն իրավունք վերապահել գրող լինելու հավակնությամբ գրիչ վերցնել ու կյանք կոչվածը «վերծանելուն» միտված իր ընկալումների վրա խարսխված ասելիքն իրեն մատչելի գրական ձեւերի մեջ փորձել ներկայացնել հանրությանը:

Եթե հնչած տեսակետը մի քիչ գրականագիտական կտրվածքով վերաշարադրվի, ապա պարզապես պիտի ասվի՝ մարդկայինը գեղագիտական իղեպ դարձրած եւ դրանով ապրող հասարակության լուսավոր անհատը միայն իրավունք ունի գրողի կոչմանը ձեռք մեկնել:

Արկադի Ծատուրյանի համար բնությունն էն զվից մարդ կոչված բարձունքի վրա ապրելու առաքելությունն էր վերապահել՝ պարզեղելով նրան կենսահաստատ ու կորովի ոգի:

Անկեղծ ասած՝ ինձ միշտ նրա ստեղծագործական անսպառ եռանդն ապշեցրել է: Կարելի է անվերապահորեն ասել, որ նա հիացմունքի արժանի մոլեռանդությամբ իր կյանքն ամբողջովին նվիրաբերել է գրին ու գրականությանը:

Գրական համարյա բոլոր ժանրերի մեջ ստեղծագործելով՝ Արկադի Ծատուրյանն ավելի քան քսան գիրք է հեղինակել: Բազմաբնույթ այդ գրքերի շուրջ խորհրդածություններ ծավալելու անհրաժեշտությունն այս փոքրածավալ խոսքի մեջ չտեսնելով՝ նրա գեղարվեստական արձակին վերաբերող որոշ նկատառումներ, այնուամենայնիվ, պարտավորված են զգում ներկայացնել:

Գրողի «մասնագիտության» վերաբերյալ Բեռնարդ Շոուն մի պարզ, բայց անչափ տարողունակ ձեւակերպում ունի. «Գրողն ինքն իր հետ գրույց է անում, աշխարհն ակաճել է դնում»: Ասույթի խորմաստությունը ինչո՞ղ այս նկատառումը, անշուշտ, ենթադրում է, որ գրողը կյանքի ճշմարտությանը հավատարիմ, անաչառ ու անկեղծ լեզվով պիտի ինքն իր հետ գրույց անի՝ ամենեւին «չկառավարվելով» այն մտայնությամբ, թե իրեն ինչպես են ակաճել դնելու:

Ցավոք, շատ հաճախ Արկադի Ծատուրյանը գեղարվեստական թեման ներկայացնելիս չի անկեղծանում այնքան, որքան գրողը պարտավոր է: Նման պահերին, իրականության ճշմարտության փոխարեն, թեմայի հիմքում ընկած գաղափարն է նրա գրչին առաջնորդում՝ հեղինակային այն անթաքույց մտահոգությամբ, թե ինչպես են իրեն ակաճել դնելու:

Չրապարակախոսական ժանրի մեջ նման մտահոգությունը միանշանակ ցանկալի, շատ դեպքերում անգամ պարտադիր է: Բայց եթե գեղարվեստական երկն արարելու ընթացքում նրանում դրված գաղափարը հեղինակային նպատակամիտվածությամբ միջամտում է ստեղծագործական գործընթացին, ապա որքան էլ հեղինակը ջանա լեզվական հնարքներով տվյալ պատումին հավաստիության երանգ ու պատկառազգու հնչեղություն հաղորդել՝ մեկ է, իսկական

ընթերցողը նրա ասելիքի պահանջվածությանը լուրջ չի վերաբերվելու:

Պիտի արձանագրեն նաեւ, որ Արկադի Ծատուրյանի որոշ ստեղծագործություններում բավականին ակնառու ձգձգվածություններ կան: Եվ այստեղ, ինչպես ինձ, այնպես էլ յուրաքանչյուր ստեղծագործող մարդու ուզում են հիշեցնել՝ գեղարվեստական ստեղծագործությունը գրելու պահին շարադրանքի մեջ հենց սրտիդ մասնակցությունը սկսում է բացակայել, գրիչը վայր պիտի դնես: Արկադի Ծատուրյանի ստեղծագործությունների մեջ տեղ գտած որոշակի ձգձգվածություններ հենց գրիչը ժամանակին վայր չդնելու, գաղափարական խոհն ապրումի տեղ ներկայացնելու հետեւանք են:

Չնչած նկատառումների լույսի ներքո պիտի փաստեն, որ նրա արձակ այն գործերում, որոնցում նկատելի չէ, որ գեղարվեստական թեմայի ընտրության հարցում որեւէ գաղափարախոսական միտում դերակատարություն է ունեցել, եւ որոնցում նրան հաջողվել է ձեռքբազատել այդ պատմամեթոդի գաղափարներն առաջին պլան մղելու, ընթերցողին հռետորական ոգեշնչվածությամբ «լուսավորելու» կամ «դաստիարակելու» գաթակողությունից՝ այդ ստեղծագործությունները գրական իմաստով կայացել են եւ իրենցից գեղարվեստական արժեքներ են ներկայացնում:

Անհրաժեշտ են համարում նշել նաեւ, որ իրենց գրական ուրույն փայլով Արկադի Ծատուրյանի արձակ խոսքի համապատկերի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում գեղարվեստական շնչով տոգորված հրապարակախոսական հողվածներն ու ելույթները, որոնցում առկա են հռետորական խոսքի պատկերավոր կառուցիկության բոլոր նրբերանգները: Պիտի խոստովանել, որ գրական այս ասպարեզում նա երբեմն պարզապես անմոռելի է...

Ավարտելով խոսքս՝ երեւի թե պարտավոր եմ Արկադի Ծատուրյանի մարդկային տեսակն ընթերցողին առավել ընկալելի դարձնելու համար նաեւ արձանագրել, որ Արկադի Ծատուրյան ուսուցիչն ու մանկավարժը, ապրելով գյուղական իրականության մեջ, կարողացել է ոչ միայն ողջ կյանքում իր խոստաբարո միջավայրի ակնածալի պատկառանքը վայելող էտալոնն ու զարդը լինել, այլեւ կարողացել է, հասարակ ժողովրդի հուզաշխարհով ապրելու բարոյական խիզախման առաքինությունը դավանանք դարձրած՝ իր ժամանակի մարդը լինել...



# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՀԱՅՐԸ

*Ես կարդում եմ նրան ու ասում -  
Այս հմուտ, հանճարեղ լրագրող  
հավասար՝ նարեկ է քեֆի,  
Եվ թաս է բռնել նրանց հետ,  
մեծարանք տվել ու առել,  
Ինչպես իր պատերազմի ևս  
հետ խնայողի նարեկին:*

Եղիշե Չարեց

«Գրողը մնայուն, հավերժական գործեր պիտի տա՝ խիտ, խորը, ուժեղ...»:  
Այս խորհրդածությունն իբրև պատգամ ու համոզումնք, անկասկած, հաճախ պիտի լսած լինեն այն բախտավորները, ում վիճակվել էր նրա ժամանակակիցն ու գրուցակիցը լինել: Թերեւս, սա մի հստակ բնաբան է, որ ամեն մի գրողի էթոսն ու սկզբնախնդիրը, ապա գոնե վերջնախնդիրը պիտի հանդիսանա: Իսկ թույլ մտածողների ստեղծագործական կյանքում դա մի անհույս հայեցակետ էր, որը նրան մշտապես ուղեկցող միակ չափանիշը եղավ. թե՛ այն ժամանակ, երբ «Շունն ու կատուն» էր գրում, թե՛ այն ժամանակ, երբ իր վերջին քառյակի վերջին տողն էր ավարտում...

Որեւէ բանաստեղծի բանաստեղծական աշխարհի մասին խոսելիս, նրա ստեղծագործական ժառանգությունը քաղաքակրթության գոյության բազմադարյան ֆոնի վրա արժեւորելիս ներդրումն ունեցող ինչ-որ մի փափկանկատ, թերեւս՝ գորովազուրկ կեցվածք ենք պահասում: Իհարկե, հաշվի առնելով ոչ միայն այն ժամանակաշրջանի յուրահատկությունները, որում ապրել ու իր երկերն է արարել բանաստեղծը, այլև տվյալ բանաստեղծի խառնվածքին հատուկ այս կամ այն բնորոշ ծայրահեղությունը: Բայց թույլ մտածողի բանաստեղծական աշխարհի հետ շփվելիս հարգողական վերաբերման մի այնպիսի համապարփակ պարզության հետ, մարդկային կյանքն օրորող միջավայրի խոր ծերություն ամփոփող, մի այնքան սիրառատ, ծնողական բարեհոգության ենք հանդիպում, որ ակամայից մոռանում ենք բոլոր այն պայմանական հանգամանքների գոյության մասին, որոնք շատ ու շատ բանաստեղծների «խանգարում» են հավերժ մշտառակ ծայրահեղող մնալ:

Բոլոր դեպքերում՝ ամեն մի իսկական բանաստեղծ հավերժի ճամփորդ է, սակայն հանուն արդարության հարկ է ասել, որ այսպիսի որակումը, թե՛ «նախանձելի», այնուամենայնիվ, թույլ մտածողի համար մի քիչ մեղմ է ասված: Նա ավելի ճիշտ անհունի տնօրինություն արեց ու հավիտենության մշտնջենական գրուցակիցը դարձավ...

Ժողովուրդների վաղնջական երթի մեջ բացառիկ են այն դեպքերը, երբ մի ամբողջ ազգի առավել հավաքական հուզաշխարհն ու կեցությունը, գեղագիտական անմասնադեպ չափանիշներով եւ գեղարվեստական խոսքի բազմաստեղծ ու բազմաժանր դրսևորումներով, բարբառի մի եզակի անհատի շուրթերով: Հայ գրականության մեջ այդ մշտաբերուն տառապալան ու անկույտ պայծառաստեղծ, մեր ազգային լինելիության այդ հոգեւոր կնքահայրը Հովհաննես Թումանյանը եղավ:

Այստեղ խոսքն ընդմիջելով, գուցե անհարկի, այնուամենայնիվ, չի կարելի չասել, որ Թումանյանի անվան անփոխարինելի գարդը հանդիսացող «ազգային» բառը երբեմն ծուռ հայելու մեջ են ուզում տեսնել, ինչպես՝ տարաշխարհիկին հակված, «գերզարգացած», մոդեռն թափածապաշտներ, այնպես էլ՝ իրենց ունեցած գրական մեծության արժեքը չգիտակցող, համաշխարհային գրականության ահռելիությունն չզգուշացնող, անբուժելի հնազանդությամբ տառապող միամիտ մտավորականներ. էլ չենք խոսում այս պակասավոր մոտեցումներով առաջնորդվող գրական

նությանը գրավորների մասին: Այսպիսիներն, իհարկե, «առանց ուրանալու», տեղն ընկած տեղը՝ նույնիսկ թմբկահարելով Թումանյանի մեծությունը, այդուհանդերձ «ազգային» բառը Թումանյանի ստեղծագործական աշխարհին ասես իբրև զապաշապիկ են փորձում հագցնել: Այսինքն՝ ասել է թե՛ համաշխարհային գրական հորիզոններում հաստատվելու համար անպայման պետք է գրել «Ռոման եւ Ջուլիետ», ոչ թե՛ «Անուշ», «Եվգենի Օնեգին», ոչ թե՛ «Գիքոր», Օմար խայամի եւ ոչ թե՛ Թումանյանի քառյակները...

Կարելի է ի գիտություն թյուրըմբռնումների՝ այսպիսի մի պարզ հայտարարություն անել. «Համաշխարհային գրականությանն են պատկանում բոլոր ազգերի գրական այն կոթողները, որոնք, լինելով ազգային հոգեկերտվածքի ու մտածողության ինքնատիպությամբ երկնված կատարյալ գեղարվեստական գործեր, ի վիճակի են հուզելու աշխարհի ընթերցողին»:

Կարող են արդյոք վերոհիշյալ մոլորված ընկալումներում թափառող հոգիներն ասել, թե՛ Թումանյանի այդ ո՞ր ստեղծագործությունն է, որ մեր ազգային գրականության մեջ շողարձակելով, բայց վերը նշված (թող որ՝ մի քիչ կտրուկ ձեւակերպած) բնութագրական պայմանին չբավարարելու համար կարող է գրվել համաշխարհային գրականության անցառուղի ունենալու արտոնությունից: Պարզապես ապշեցուցիչ է, թե որքան անհեթեթ հոգի պետք է ունենալ, որպեսզի մի բանաստեղծի ազգային մեծագույն բանաստեղծ համարելով հանդերձ՝ փորձել վերապահումներ անել նրա ստեղծագործությունները որպես համամարդկային հոգեւոր հարստություն արժեւորելու խնդրում:

Թումանյանն անհատակ է ու անեզր... Նրա թողած խորունկ ազգային եւ անչափ մարդկային գրական ժառանգությունը մեր



հինավուրց ժողովրդի փառքն ու պարծանքն է, իսկ համաշխարհային գրականության համար անսպառ մարդկայնության խորհրդանիշը պիտի որ լինի...

Խորհելով այդ անքննելի հայի կյանքի ու գործունեության շուրջ՝ մարդկային երեսակայությունը սպառում է իրեն, թե՛ այդ, արդարեւ, կախարդական մարդը որտեղի՞ց է ժամանակ գտել հասցնել այդ ամենը. հասարակական կյանքի բազում ոլորտներում լրջորեն ներգրավված լինել, բայց եւ մանուկների համար ուսանավորներ հորինել. բազմաթիվ հեթաթասացների ունկնդրել ու ժողովրդի մեջ շրջող նմանատիպ հեթաթեքների ուշագրավ տարբերակներն առանց հոգնության գրի առնել. հոգու ամբողջ նողկանքով իրենց բննադատ երեսակայող «ոչ գրական ոչնչություններին» դատափետել, հետո կարողանալ նորից ներանձնանալ ու շարունակել գլուխգործոցներ երկնել...

Նա չի ունեցել կանոնավոր կրթության որեւէ պատկառելի փաստաթուղթ, բայց միայն նախանձել կարելի էր համաշխարհային գրականության նրա խոր իմացությանը. այդ գրականության հսկաներին տված աֆորիստիկ բնութագրությունների անվիճարկելիությանը. մեծն ու փոքրը, ճիշտն ու կեղծը, անցողիկն ու հավերժականը միմյանցից զանազանելու նրա անվ-

րեպ հանճարեղությամբ...

Հիանում ու զարմանում ես, թե իր ապրած խառնակ ժամանակներում, որպես հրապարակախոս, որքան ողջամիտ հստակությամբ է լուսաբանել մեր ազգի առջեւ ծառայած խնդիրները. ինչ գթասրտությամբ է Մեծ եղեռնից մազապուրծ, որբացած մանուկների խնամակալության հարցերին նվիրվելու որպիսի սրտացավ խիզախությամբ է, անտերության մատնված ազգամիջյան թշնամական ընդհանրումների մոլուցքը կանխելու համար, սպիտակ դրոշմ առած սարսափալի ընկել. ինչպիսի ջերմ անմիջականությամբ է արձագանքել իր մարդկային միջնորդությանն ապավինած ամեն մի հուսալքված սրտի՝ միաժամանակ հասցրել զանազան ընկերությունների ղեկավարը լինել:

Այսքանից հետո եղել է մի բազմազավակ ընտանիքի սրբազան հայր, պարտքերի տակ կքած, բայց «լեն ու բոլ» արելակերպից, հյուրերից ու խնջույքներից համառորեն չհրաժարվող, անտեսնու ու շռայլ, մի «պատուհաս» ամուսին. ժողովրդական հանդիսությունների պատվելի գարդն է եղել ու երջանկառիթ արարողություններին՝ անհաղթելի սեղանապետ: Վերջապես նա՝ էր հայ իրականության մեջ երբեւէ եղած, երեւի թե ամենաառողջ գրական միավորման՝ «Վերնատան» տանտերը, որտեղ հավաքվում էին ժամանակի հասարակական-մշակութային կյանքի այնպիսի կարկառուն անհատականություններ, որոնց անունների թռուցիկ հիշատակությունը նույնիսկ բավական է, որպեսզի ամենամոռացած հայի հոգին անզան պատկառանքով լցվի (Աղայան, Դեմիրճյան, Պռոշյան, Աղբալյան, Իսահակյան, Շիրվանզադե, Լեո, Շանթ, Մուրացյան, Մանանդյան...):

Ասում են, թե Թումանյանն իր հանճարը տվեց ժողովրդին, տաղանդը՝ գրականությանը: Այս արտահայտության ողբերգական ենթատեքստն այն է, որ իր բազմաչարչար ժողովրդի ցավով շուլակված այդ ամենամարդ հայը երբեք ժամանակ չունեցավ լիաշունչ ապրելու միայն գրականությամբ: Նա չավարտեց իր «Հազարան բլբուլը»... Բայց հայ ժողովուրդը, ի դեմ նրա, (ի տես աշխարհի) ունեցավ իր Հազարան բլբուլը...

Թումանյանի հիրավի առասպելական հոգին ամփոփել էր հանբերության խորհրդին ունկնդիր արեւելքն ու արդարության երդումին հավատարմագրված արեւմուտքը: Նրա խառնվածքում հյուսիսցու խստաշունչ պարզասրտությունը կար ու հարավցու սրտոտ խելահեղությունը: Իսկ եթե ավելի ստույգ, ապա պիտի ասենք՝ նա իր բիբլիական ժողովրդի հրեղեն ողջախոհությամբ օժված մի վճիտ հայ էր, որի մեջ Արարիչն ամբարել էր այն ամենայն առաքինին ու լուսավորը, որով հայ հանճարը մաքառելով փառավորել է իր անկրկնելի պատմությունը...

Թող աշխարհին խաղաղություն լինի, իսկ մեր բազմատանց հողագործին՝ հավերժություն, որպեսզի սերունդները դար ու դարեր «օրհնեն էն սիաթը», երբ «Հայաստանի արգանդը եղավ սրբորեն բերուն», եւ Հայոց Աշխարհը ինքն իրեն երկնեց Լոռվա Դսեղում...

Ծեսրվար 1989թ., ք.Գորիս



## ՀԱՅ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԶԱՐՄԱՆԱՅՐԱՆՇ ՏԵՍԱԿԸ

Համո Սահյանն իր պոեզիայում, դարեր ի վեր առանց պետականության պատմական արհավիրքներին դիմակայած, իր ինքնությունը չկորցրած, նահապետական մաքրամաքուր առաքինությունները հավատամք դարձրած, ողջախոհ խառնվածքի սովորական հայ մարդու ոգեղենության տիրույթների հրեղեն խորհուրդը կարողացավ մեկնել...

Մարդկային բարոյախոհությամբ շարափված, հայրենի եզերքի ու բնության հանդեպ տածած սերը պաշտամունքի վերածած բանաստեղծի այսպիսի պարմանահրաշ տեսակ չէր եղել մեր պոեզիայում:

Ժամանակների մեջ չխամրող, բանաստեղծի մնայունության հարցում մի-մի զորավարի դեր կատարող բանաստեղծություններն ունենալը Պարոյր Սեւակը երանելի բարեբախտություն էր համարում:

Համո Սահյանը կարողացավ հեղինակը դառնալ այնպիսի բանաստեղծությունների, որոնք ասես մեր ողջ ժողովրդի մորմուքներից ու կարոտներից երկնված հոգեպարար հրավարականներ լինեն:

Հենց այս իրողության հանգամանքով է պայմանավորված Սահյանի ժողովրդականության, նրա պարզ ու անպաճույճ բանաստեղծական հուզաշխարհի մոզականության զաղտնիքը...

Սայիս 2014թ., ք. Գորիս



օրինաչափ իրողություն.  
վերջիններս քաջատեղյակ  
էին խոր վերլուծությունների  
և համապարփակ ընդհան-  
րացումների հակված նրա  
հզոր երեւակայությանը,  
ինչպես նաև գիտելին, որ  
նա ազատ ժամերին գայ-  
թակղված հափշտակու-  
թյամբ սկսել է ուսումնասի-  
րել հայոց պատմություն:

Երջանիկ պատահականությամբ  
Արտաշեսի ուսանողական տարի-  
ները (1952-56թթ.) համընկնում են  
ազգային զարթոնք վերապրող հայ  
ժողովրդի պատմության այն ժամա-  
նակահատվածի հետ, երբ Ստալինի  
մահը հանդիմանի բռնադատված գի-  
տության և մշակութային աշխար-  
հի բազում կարկառուն գործիչների  
ազատություն էր պարզել...

Այդ օրերին համամարդկային  
արժեքներով ոգեշնչված հասարա-  
կական աշխուժացած մթնոլորտում  
թեւածում էր ազգային ինքնագի-

րաստ, պատմության հարցերով զբաղ-  
վող անհատի համար բնականության  
վայրը երկրորդական կարգի գործոն  
է: Չամչյանն իր հայոց հսկայածավալ  
պատմությունը շարադրել է **Վեներտիկի  
Սուրբ Ղազար վանքի մի անշուք սենյա-  
կում**»:

Երեւի թե իր աշխարհիկ խառնվածքը  
գյուղական խաղաղությամբ պարուրելու,  
կարողություններն առավելագույնս գի-  
տության վրա կենտրոնացնելու մտա-  
դացման արդյունք պետք է համարել նրա՝  
գյուղ վերադառնալու որոշումը:

Ինչեւիցե: Խնձորեսկից սկսվում է  
նրա մանկավարժական գործունեության  
երկրորդ փուլը: Այստեղ նա աշխատում  
է տասներեք երկար ու ձիգ տարիներ՝  
դասավանդելով պատմություն և հասար-  
ակագիտություն:

Գյուղական ժողովուրդը եկվորների  
հանդեպ դժվարահամ է լինում, սակայն  
Արտաշես Աթաբեկյան այս գյուղը այնպիսի  
հարազատությամբ է ընդունել, որ նրան  
աշակերտած առավել երիտասարդ սերնդի  
ներկայացուցիչներից ոմանց միշտ էլ թվա-  
ցել է, թե նա իրենց գյուղացի է:

Խնձորեսկում աշխատելու տարիներին  
Արտաշես Գրիգորյանը մտերմիկ հարա-  
բերություններ է հաստատում հայ պատ-  
մագիտության հայտնի դեմքերից մեկի՝  
ակադեմիկոս Սորոս Զասարյանի հետ:  
Մեծ հայագետի հորդորները, ով համըն-  
կ էր առել լինել նրա գիտական ղեկավա-  
րը, ցանկալի արդյունք են տալիս: 1965թ.  
պատմության և փիլիսոփայության ասպի-  
րանտական «միմիոնները» փայլուն կեր-  
պով հանձնելով՝ նա սկսում է աշխատել իր  
գիտական թեմայի վրա:

Թեմանունական թեզի պաշտպանու-  
թյան հարցում նրա աքիլեսյան գարշա-  
պարն օտար լեզվի միմիոնն է դառնում:  
Հայրենի գյուղի դպրոցում նրա սովորելու  
տարիներին, մասնագետների բացակա-  
յության պատճառով, օտար լեզու չէին  
դասավանդում: Այժմ հայտնվելով փաստի  
առաջ՝ նա սկսում է գերմաներենի այբու-  
բենից այն պահին, երբ նրա գրչի տակից  
դուրս եկած շուրջ մեկ տասնյակ գիտական  
հոդվածներ էին լույս տեսել հանրապետա-  
կան ամսագրերում ու թերթերում:

1967թ. նրան՝ որպես պատմության և  
փիլիսոփայության մասնագետի, հրավի-  
րում են Խ. Աբովյանի անվան մանկավար-  
ժական ինստիտուտի Գորիսի մասնաճյու-  
ղում աշխատելու: Հրավերն ընդունում է մի  
վերապահամբ, որ դպրոցը չի թողնելու:

|| **Այդ տարիներին նա գնա-  
հատանքի է արժանա-  
նում նաև դպրոցական  
կրթության ասպարեզում:  
Արդյունքն այն է լինում,  
որ այն ժամանակների  
ընդունված կարգով՝ կո-  
մունիստական կուսակցու-  
թյան շրջանային կոմիտեի  
երաշխավորությամբ (նա  
կոմկուսի անդամ էր դեռ  
ուսանողական տարինե-  
րից), 1969-70 ուստարում  
խնձորեսկից տեղափոխ-  
վում է Գորիս քաղաքի  
թիվ 2 միջնակարգ դպրոց՝  
զբաղեցնելով ուսմասվարի  
պաշտոնը:**

Վարչական աշխատանքը սկսում է շատ  
ժամանակ խլել նրանից: Ծանր ու թեթև  
անելուց հետո, մեկ տարի անց, նա հրա-  
ժարվում է ինստիտուտի դասաժամերից՝  
նախընտրելով դպրոցը:

Դառնալով ղեկավար աշխատող՝ Ար-  
տաշես Գրիգորյանը հանդես է բերում  
կազմակերպչական մեծ ունակություններ՝  
առաջնորդվելով ոչ թե վարչաիրամայա-  
կան մեթոդներով, այլ իր աշխատանքային  
մոտեցումներում առաջնահերթությունը  
տալով փոխադարձորեն հարգալից, մարդ-  
կային հարաբերություններին:

Ուսմասվարի պաշտոնում աշխատած  
ինը տարիների ընթացքում նա էլ գերմա-  
ներենի չարաբաստիկ միմիոնն է հանձ-  
նում, եւ գիտական թեմայի շարադրանքն

է ավարտում, սակայն մարել էր գիտական  
կոչումների հանդեպ նրա երբեմնի ոգե-  
րությունը: Ուսուցիչներից ոմանց այն հար-  
ցին, թե ինչու չի զբաղվում իր գիտական  
թեզի պաշտպանության հարցերով, երբ ա-  
մեն ինչ պատրաստ է, դառն ժպտալով պա-  
տասխանում էր. «**Ասե՛ք թե պաշտպանել  
եմ՝ ի՞նչը պիտի փոխվի: Իմ նպատակ-  
ներն այդ ասպարեզում ավելի հեռուն  
էին միտված...**»

Իսկ մանկավարժության բնագավա-  
ռում նրա հաջողությունները վերադասի  
կողմից վերստին ուշադրության են արժա-  
նանում: 1978-1979 ուստարում նա նշա-  
նակվում է 3-րդ միջնակարգ դպրոցի տնօ-  
րեն: Նոր միջակարգում աշխատանքային  
հարաբերությունների հետ կապված դժվա-  
րություններն Արտաշես Գրիգորյանը հեշտ  
էր հաղթահարում: Կոլեկտիվում բարոյա-  
հոգեբանական առողջ մթնոլորտ ստեղծե-  
լու շնորհաշատ ծիրով էր օժտված, որում  
անկասկած իր մասն ուներ նրա պատկա-  
ռազուրկ կերպարի շուրջ...

Վեց տարի 3-րդ միջնակարգ դպրոցում  
աշխատելուց հետո նրան են վստահում  
2-րդ միջնակարգ դպրոցի տնօրենությունը:  
Սիրով է ընդունում այդ տեղափոխությունը,  
որովհետև վերադառնում էր վաստակա-  
շատ մի կոլեկտիվ, որի կայացմանը ժա-  
մանակին իր մասնակցությունն էր ունեցել:  
Արտաշես Աթաբեկյան վերադարձը 2-րդ միջ-  
նակարգը հարազատի գրկաբացությամբ է  
դիմավորում:

Ժողովրդական առաքինի բարեմաս-  
նություններով համեմված, հոգեւոր ար-  
ժեքներով ապրող, մեծ նկարագրի տեր  
խոր անհատականություն էր նա, որի հու-  
զառատ խառնվածքն ի գորու եղավ տարի-  
ներ ի վեր կողք կողքի պահել զգայուն և  
ղեկավար բառերում ամփոփված հասկա-  
ցությունները: Նա համալրեց Գորիս քաղա-  
քի՝ խորհրդային տարիների պատմության  
մեջ անընդելի հետք թողած լեզունդար  
տնօրենների շարքը...

Նրան աշակերտած սերունդների հու-  
շերում նրա կերպարի հմայքը երբեք չխու-  
նացավ: Սիսազու կեցվածք ընդունած  
պահին մտերմիկ մի բան էր ճառագուն  
նրանից, կատաղությունից փրկված վի-  
ճակում զվարճալի էին հնչում նրա դի-  
պուկ համեմատությունները, զանազու  
աշակերտներին արհամարհող պահված-  
քի մեջ անգամ տեսանելի էր լինում նրա  
փխրուն հոգին...

1992թ. Քաղաքի անցնելու հիմնավո-  
րումով տնօրենի պաշտոնից ազատվելուց  
հետո էլ Արտաշես Գրիգորյանը որ-  
պես ուսուցիչ շարունակում է իր համար  
ճակատագիր դարձած մանկավարժական  
գործունեությունը:

Տողրիսի հեղինակը մի անգամ դի-  
մել է նրան հետեյալ հարցով, թե ինչու  
նա իրեն չնվիրեց պատմագիտությանը:  
Լսվել էր հետեյալ պատասխանը. «**Գու-  
ցե դաժան է հնչում, բայց գիտությանը  
զբաղվող մարդը պիտի քիչ երեխաներ  
ունենա, կամ ընդհանրապես չունե-  
նա, – մի քիչ մտորելուց հետո ավելացրել  
էր, – իսկ ես ամբողջ կյանքում շրջա-  
պատված եմ եղել ոչ միայն իմ (իր եր-  
կու ամուսնությունից նա ուներ երեք  
տղա ու երկու աղջիկ), այլև ծանոթ  
ու անծանոթ հազարավոր մարդկանց  
երեխաներով...**»:

Արտաշես Աթաբեկյանը հարգանքով  
պատկառանքով են ընդունել հասարակու-  
թյան բոլոր խավերը: Նրանից խորհուրդներ  
են հարցրել շատերը: Իսկ մտերմների մի-  
ջակարգում պատմության այս կամ այն ժա-  
մանակահատվածին վերաբերող նրա ան-  
ձանձիր խորհրդածությունները, որ մերթ  
ընդ մերթ ընդհատվում էին պատմական  
ստոր անհատներին ուղղված ակորժալի  
հայիոյանքներով, լսել ու չժպտալ՝ անկա-  
րելի էր:

Բալզակյան կազմվածքի, սակայն ան-  
համեմատ գեղեցիկ, հաճելիորեն խոշոր  
արտաքինով մի ինքնաբավ տղամարդ էր  
նա, որ շրջապատի վրա բարետես հսկայի  
առնչքնող ներգործություն էր թողնում...

Վաթսունվեց տարին չլրացած՝ 1995թ.  
ապրիլի 10-ին նա հանկարծամահ է լինում՝  
չհասցնելով իմանալ, թե աշակերտներն  
ինչպես են յուրացրել իր հանձնարարած  
դասերը...

Օգոստոս 2005թ., ք. Գորիս

## Կենսագրական ակնարկ հորս մասին

**Արտաշես Աթաբեկյանը  
ծնվել է 1929թ. սեպտեմբերի 14-  
ին Գորիսի շրջանի Տեղ գյուղում,  
պեղական ծառայողի ընտանիքում:  
Հասնելով դպրոցահասակ փարիքի՝  
1936թ. նա սկսում է հաճախել հայրենի  
գյուղի միջնակարգ դպրոցը: Գերագանց  
գնահատականներով ամփոփելով 1943-  
44 ուստարին՝ Արտաշես Գրիգորյանը  
ընդունվում է Գորիսի մանկավարժա-  
կան ուսումնարանը, որն ավարտում է  
1947թ.:**

Ուսումնարանն ավարտելուց հետո նա  
գործուղվում է Գորիսի շրջանի Քարաշեն  
գյուղի յոթնամյա դպրոց՝ մաթեմատիկա  
դասավանդելու:

Հայրենական մեծ պատերազմի դաժան  
փորձությունների միջով անցած խորհրդա-  
յին ժողովրդի սոցիալական վիճակը հետ-  
պատերազմյան առաջին տարիներին դեռ  
շատ հեռու էր բավարար լինելուց: Թերեւս  
դա էր պատճառը, որ ուսման ծարավ պա-  
տանին առժամանակ հրաժարվում է բուհ  
ընդունվելու նվիրական մտքից՝ փորձելով  
իր աշխատանքային վաստակով թեթևաց-  
նել հայրական օջախի հոգսը:

Երկու տարի Քարաշենում աշխատե-  
լուց հետո՝ 1949թ. Արտաշես Գրիգորյանը  
տեղափոխվում է Գորիսի շրջանի Կյորու  
գյուղ և շարունակում մանկավարժական  
գործունեությունը՝ որպես մաթեմատիկայի  
ուսուցիչ: Այստեղ նա 1952թ. ամուսնանում  
է և ուսումնական տարին ամփոփելուց  
հետո նույն թվականի ամռանը ուսումնա-  
ռությունը շարունակելու մտադրությամբ  
տեղափոխվում էրեւան:

|| **Արտաշես Գրիգորյա-  
նի հայտնվելը Երեւանի  
մանկավարժական ինս-  
տիտուտի պատմության  
ֆակուլտետի ուսանող-  
ների շարքում իսկական  
անակնկալ էր նրա մաթե-  
մատիկական ընդունա-  
կությունները գնահատող  
մարդկանց համար: Սակայն  
մտերմների կողմից մաս-  
նագիտական այդ շրջա-  
դարձն ընկալվում է որպես**

տակցությունը: Հրատարակչությունները  
սկսել էին արգելված համարվող գրողների  
ու պատմաբանների երկերը հրատարակել:  
Ստալինյան ռեժիմն արհամարհած Չա-  
րենցի գրքերի համար գրախանութներում  
հերթեր էին գոյանում: Նեմզադավ զրպար-  
տանքներով սպանված Ալսեւ Բակունցին  
գրական ամբիոններից սկսել էին հայ  
ժողովրդի խոշորագույն արձակագիր և  
գեղարվեստական խոսքի անզուգական  
վարպետ համարել: Պարզվել էր նաև, որ  
Լեոն ոչ թե ազգայնամոլ է, այլ պարզապես  
իր ժողովրդի՝ արժանապատվությամբ տո-  
գորված հայ մեծագույն պատմիչներից մե-  
կը...

Կեղծ արժեքներից ձերբազատվելու՝  
հասարակության ինքնամաքման այդ  
տարիների միտումները վերաիմաստավո-  
րում են Արտաշես Գրիգորյանի աշխար-  
հընկալումներն ու նրա աշխարհայացքի  
ծեւավորման վրա, դրական առումով, խոր  
ազդեցություն թողնում:

Ուսանողական կյանքի անհոգ զվար-  
ճանքները շրջանցում են նրան: Պատճա-  
ռը ոչ միայն առաջացած տարիքն էր կամ  
ամուսնական կարգավիճակը, այլև պատ-  
մաբան դառնալու սեւեռուն ցանկությունը:  
Նրան համարյա ամեն օր կարելի էր տես-  
նել Երեւանի հանրային գրադարանում՝  
զբաղված որեւէ պատմական կամ փիլիսո-  
փայական աշխատության ուսումնասիրու-  
թյամբ: Նրա հաճախակի այցելություններն  
ազգային արխիվներ աշխատակիցներին  
մոլորության մեջ էին օգնել. վերջիններս  
չէին կամենում հավատալ, որ համառ  
երիտասարդը ոչ թե դիսերտանտ, այլ ըն-  
դամենը դեռ պատմության ֆակուլտետի  
ուսանող է:

Բուհն ավարտելուց հետո, ընդունելով  
ինստիտուտում աշխատանքի տեղավո-  
րելու հարցում միջնորդությամբ հանդես  
գալու պատրաստ իրեն համակրող պրո-  
ֆեսորների առաջարկը, վերադառնում է  
Գորիս՝ աշխատանքի անցնելով Խնձոր-  
եսկ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես  
պատմության ուսուցիչ:

Ժամանակի տրված այն հարցին,  
թե ինչու է մայրաքաղաքում աշխատան-  
քի անցնելու հնարավորությունը մերժել,  
պատասխանել է. «**Պատմաբանները  
ձգձգվորների դասին են պատկանում:  
Բավականին գիտելիքներ ամբարած,  
սեփական ասելիքը շարադրելու պատ-**





# Կեղծ արժեքներն իմ քաղաքում հարգի չեն

**Ա**վանդական, խստաշունչ սովորույթների մի ազնվասիրտ քաղաք է Գորիսը, որում ապրելն ու որի հետ մերվելը նույնքան դժվար է, որքան նրա մասին գրելը: Սովորություններն ու բարքերն այսօրեղ ձեռավորվել են հիմնականում փեղաբնակ լեռնեցիների հազարամյա հարաբերությունների արդյունքում. չարի եւ բարու, խղճի ու պարզի, մարդկայինի եւ անմարդկայինի մասին լեռնականի ունեցած անաղարտ պատկերացումների, նրա հոգեբանության բուռն, անթաքույց դրսևորումների հենքի վրա: Ծիշք ու սխալին, լավ ու վատին արձագանքելու նույն հախուռն անմիջականությունն է պատճառը, որ գորիսեցու հուզական խառնվածքի իրարամերժ ծայրահեղ դրսևորումները պահի փակ երբեմն այնպիսի արագացված հաճախականությամբ են իրար հաջորդում, որ կողքից նայողին առաջին հայացքից խելահեղ կարող են թվալ:

Եթե անծանոթը միառժամանակ ապրի Գորիսում, ապա նույն խելահեղության տպավորությունն այս անգամ պիտի բնաշխարհից ստանա, որտեղ տապ արտաշնչող ցից-ցից ժայռերի ծոցում թաքնված զովաշունչ, եղենական այգիներ կան, որտեղ երբեմն սարի մի փեշն անապատ է հիշեցնում, իսկ մյուս փեշին ծփում են զովասյուք մարգագետիններ, որտեղ փարթամ անտառներն անդնդախոր ծորերից վիհերով մազլցելով՝ հասնում են մինչև լեռան կատարը, իսկ կողքի լանջն այնպիսի անեծքով է թրատված, որ բուսականության ծածկից էլ զուրկ է... Բայց անծանոթն այս ամենը հնարավոր է, ամսից էլ երկար հյուրընկալվելով Գորիսում, ձգձգվող մառախուղների պատճառով չտեսնի: Գնարավոր է նաեւ, որ մեկ օրվա ընթացքում տարվա բոլոր եղանակների ակամատեսը լինի: Ի՞նչ իմանա...

Քաղաքակիրթ աշխարհի հետ հազար ու մի թելերով կապված, քսանմեկերորդ դար ոտք դրած Գորիսում այսօր էլ նույն «ահռելի ծանծույթն է քաղցր ծորում»՝ ինչպես Բակունցի «Կյորես»-ում, իսկ ցանկացած բնակիչ իր անհատականության դրոշմն ունեցող անշփոթելի կերպար է՝ ինչպես Խանգաղյանի «Մատյան եղելությամբ» Գորիսում...

Արդարեւ, զարմանալի՞ քաղաք է... Քսաներեք հազարին մոտ բնակչություն ունեցող Գորիսում այսօր էլ եթե մի քիչ փորփրում են՝ հարյուր տարուց էլ ավելի կտրվածքով ցանկացած բնակիչ մինչև յոթը պորտը կարողանում են ջրի երես հանել: Ու վա՛յ նրան է եղել, ում նախնիները ժամանակին չար գործերի հեղինակ են դարձել՝ ապրելով «ինձնից հետո թեկուզ ջրիեղել լինի» նշանաբանով... Նման կենցաղակերպ որդեգրած անպատկառ

մարդու շլինելուց հետո էլ վիրավորանքի, քամահրանքի, անվստահության դրսևորումներով գորիսեցիներն այդ ջրիեղելը «հաստատ բերում են» նրա սերունդների գլխին, երբեմն նույնիսկ իրենց սովորական շնչառության անտարբերությամբ պարտադրելով, որ վերջիններս հասարակությունից իրենց մեկուսացված զգան... Ճիշտ է ասված, որ այստեղ «չարի սերմը բույն չի դնում» անարմատ է»:

Անսեթեթ, հեգնահայաց, կոշտ բնույթի քաղաք է Գորիսն իր բոլոր դրսևորումներում:

Սակայն, քննախույզ զսպվածությամբ եւ ինքնամոխի չորությամբ շարված, արժանապատվություն աղաղակող իր կեցվածքով, գորիսեցին, ասես, կանխավ փորձ է անում թեթևալիկ այլասերումներից զերծ պահել հովվերգական պարզությամբ շնչող իր անզուգական հուզաշխարհն ու կասկածելի տարակարծություններից հեռու պահել լրջաբարո, զտարյուն արժեքներին ապավինած իր անկաշառ հոգին...

Աշխարհին Ակսել Բակունց, Գուսան Աշոտ, Սերո Խանգաղյան եւ շատ այլ նշանավոր դեմքեր տված Գորիսն իրողություններն արժևորելիս երեւի թե օրինաչափ է, որ պիտի չնահավան լինի, որովհետեւ մեծերը նրա կյանքում տարաշխարհիկ առեղծվածի հեռավորության վրա չեն գտնվել, այլ նրա առօրեական կյանքի մի մասն են կազմել: Սովորականի մեջ արտասովորը, իսկ արտառոցի մեջ սովորականը տեսնող ու զանազանող գորիսեցուն թուցիկ, անբովանդակ, չկայացած էժան բաներով դժվար է զարմացնել: Նրան հիրավի զարմացնել, կամ ավելի ճիշտ, հիացնել կարող են միայն կատարյալ, անխառն, ամեղծ ու անկեղծ բաները...

Մայիս 2003թ., ք. Գորիս



ՏԱԹԿԻ ԿԱՆԶ



# ՕՐՅՆԵՐԳ

*Դարե՛ր անպարտ, Մեր Հայրենիք,  
Դու՛ Ավերյաց Մեր Ոսրան...  
Դու մեր հոգու սիրտ համն ես,  
Մեր Սուրբ Մայրն ես, Հայաստան...*

*Փողփողացող Քո Դրոշը...  
Մեր սրբերում կրեցինք  
Բազում դարեր մեր ողջ ազգի  
Երազներով օճեցինք...*

*Եռագույնը՝ հրաշագեղ,  
Խորհուրդն է Մեր Ինքնության...  
Թող մի՛շտ ցույս Քո Դրոշը,  
Մեր Պանծալի Հայաստան...*



ԿՊՊՈՒՑՏՈՒ ԼԵՈԳ

ՄԵՃ ՄԱՍԻՍ

ԿՊՊՈՒՑՏՈՒ ԳՈՐԾԱՍԵՅԱԼԻՑԻՑՆԵՐԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ

**Սյունյաց երկիր**  
 Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
 ԳԻՄՆԱԳԻՐ ԵՎ ԳՐԱՏԱՊԿԻՉ  
 «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀԱՆԱԲԱԿ  
 ՊՏԱՏԱՆՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
 Գասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
 (0285) 5 25 63,  
 Գեոպոլսո՝ (091) 45 90 47,  
 (077) 45 90 47:  
 էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
 Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Գրումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

© Ճշմի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Գասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 5 տպագրական մամուլ: Տպագրանակը՝ 1781, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 25.01.2015թ.: